

Պետրոս Մ. Թովմասեան



ԱՐԱՐԱՏ-ՈՒՐԱՐՏՈՒ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԸՆԴՄԵՋԷՆ

9(47.923)

72-79

h2

ԱՐԱՐԱՏ-ՈՒՐԱՐՏՈՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԸՆԴՄԷՋԷՆ

(ՈՒՐԱՐՏՈՒ-ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿԱՐԱՏԵԻ
ՊԱՅՔԱՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ
ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ)

ՊԵՏՐՈՍ Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ

6953



ՁԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱՇՈՒԹՅՈՒՆ



Թովմասեան Պետրոս

Արարտու-Ուրարտուն Աստուածաշունչի ընդմէջէն/ Պ. Թովմասեան.— Եր.: Զանգակ, 2012.— 128 էջ + 8 էջ կալճ. ներդիր:

Ուրարտուի (Վանի թագաւորութիւն) եւ Ասորեստանի պատմական սուր պայքարը Ք.Ա. 9, 8 եւ 7-րդ դարերուն, ունեցած է իր արձագանգը Աստուածաշունչի (Հին Կտակարանի) պատմութեան մէջ, ու ձգած է իր զգալի ազդեցութիւնը Աստուածաշունչի մէջ յիշուած հրեական երկու փորձիկ՝ Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններու պատմութեան զարգացման վրայ: Կարելի է ըսել, որ այդ պայքարի հետեւանքով երկարաձգուեցաւ այդ երկու փորձիկ թագաւորութիւններու գոյութիւնը:

Այս ուսումնասիրութիւնը կը լուսաբանէ, այդ պայքարի ազդեցութիւնը, ինչպէս եւ Ուրարտուի չ'յիշուած ներկայութիւնը Աստուածաշունչի պատմական դէպքերու մէջ:

Այս գիրքը անհրաժեշտ է բոլոր հայ անհատներուն, որոնք կը հետեւին Ս. Գիրքի-Աստուածաշունչի ուսումնասիրութեան դասընթացներուն:

Պէտք է մատնանշել, որ դժբախտաբար պատմաբաններու կողմէ Ուրարտուի (Վանի թագաւորութիւն) կամ Արարտի (Արարտեան թագաւորութիւն) ունեցած ուղղակի կամ անուղղակի ազդեցիկ դերը՝ Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններու պատմութեան վրայ լիարժէք լուսաբանուած չ'է. այս մեկնակէտէն ելլելով, ձեռնարկեցինք եւ կատարեցինք ներկայ խիստ կարեւոր ուսումնասիրութիւնը:

Այս գիրքի շօշափած նիւթերը լուսարձակի տակ կ'առնեն հայ ժողովուրդի ներկայութիւնը Հին Կտակարանի պատմական դէպքերու մէջ, եւ Ուրարտուի հզօրացման հետեւանքով՝ ռազմա-քաղաքական զարգացումները տարձրաշրջանի փորձ թագաւորութիւններու գոյատեւման վրայ:

ՀՏԴ 22 : 941(479.25)
ԳՄԴ 86.37+ 63.3 (22)

Շնորհակալութեան Խօսք	5
Երկու Խօսք	6
Ա. ԳԼՈՒԽ	
Ուրարտուն եւ Իր Դերը	9
Բ. ԳԼՈՒԽ	
Աստուածաշունչեան Հրեական Յուդայի եւ Իսրայէլի Թագաւորութիւնները	16
Գ. ԳԼՈՒԽ	
Ուրարտու-Ասորեստանեան Պայքարի Ազդեցութիւնը Իսրայէլի եւ Յուդայի Թագաւորութիւններու վրայ	21
1. Ասորեստանը Ուրարտուի Շուրին ճերքէն	23
ՅՈՒՅԱԿ ԹԻԻ3 (Ուրարտու-Ասորեստանեան Պայքարը եւ Ասորեստանի Արշաւանքները Արեւմտքի վրայ)	24
2. Իսրայէլ եւ Յուդայ՝ Ուրարտուի եւ Ասորեստանի Միջեւ Կռուախնձոր Դարձած Տարածքի Մէջ	30
3. Արգիշտի Ա-ի Արշաւանքը Նիւոէի վրայ եւ Յովնան Մարգարէի Առաքելութիւնը	34
4. Իսրայէլի եւ Յուդայի երկրորդ Ոսկեդարը Ի Հետեւանք Ուրարտուի Հզօրացման	37
5. Ասորեստանը եւ Իսրայէլը Դաշնակիցներ Ընդդէմ Ուրարտուին եւ Դամասկոսին	40
6. Սուրիան Ուրարտուին Հպատակ, եւ Իսրայէլ Ու Յուդայ Նոր Կացութեան Առաջ	43
ՅՈՒՅԱԿ ԹԻԻ4 (Ասորեստանեան Արշաւանքները Իսրայէլի եւ Յուդայի վրայ)	45
7. Կարեւոր եւ Հետաքրքիր Բացալատումներ	48
8. Իսրայէլի եւ Յուդայի Հպատակութիւնը Ասորեստանին Ի Հետեւանք Ուրարտուի Պարտութեանը Կումմուխի Ա. Ճակատամարտին	50
9. Ուրարտուի Պարտութիւնը Կումմուխի Բ. Ճակատամարտին եւ Իսրայէլի Ու Յուդայի Դառն Ճակատագրի Սկիզբը	55
ՅՈՒՅԱԿ ԹԻԻ5 (Թագաւոր Փաղասար Գ-ի Ռազմական Գործողութիւնները) ...	61

10. Արեւմուտքէն Ուրարտուի Բացակայութիւնը`	
Չարաբաստիկ Ահազանգ Մը Իսրայէլին Եւ Յուդային	62
11. Ռուսա Ա. Եւ Շալմանասար Ե. Ու Սամարիայի Պաշարումը	67
12. Ռուսա Ա., Սարգոն Բ. Ու Սամարիայի Անկումը	70

Գ. ԳԼՈՒԽ

Ուրարտուի Յիշատակութիւնները Աստուածաշունչի Մէջ	75
1. Սինհարիբի Սպանութիւնը Եւ Ուրարտուն	75
ՅՈՒՅԱԿ ԹԻԻ 6 (Աստուածաշունչի Յիշատակութիւնները Հայաստանի Մասին)	76
ՅՈՒՅԱԿ ԹԻԻ 7 (Ուրարտուի Դասակարգութիւնները Ատրեստանին)	78
2. Նիմուէի Անկումը Եւ Արեւմուտքին Տիրանալու Սուր Պայքարը, Ու Ուրարտուի Դիրքը	88
ՅՈՒՅԱԿ ԹԻԻ 8 (Նիմուէի Անկումէն Ետք Արեւմուտքին Տիրանալու Սուր Պայքարի Կարեւոր Դէպքերը)	94
3. Երեմիայ Մարգարէի Կոչը Եւ Ուրարտուն	95
4. Եզեկիէլի Մարգարէութիւնը Եւ Ուրարտուն	103
5. Ուրարտուն Կամ Իրեն Յաջորդող Երուանդեան Թագաւորութիւնը Մասնակցած է Յուդայի Անկման	108
Վերջաբան	111

ՔԱՐՏԵՍ ԹԻԻ 1 (Հին Միջին Արեւելքը)

ՅՈՒՅԱԿ ԹԻԻ 1 (Ուրարտուի եւ Ատրեստանի ժամանակակից թագաւորները)

ՔԱՐՏԵՍ ԹԻԻ 2 (Արգիշտի Ա-ի Յաղթանակները)

ՅՈՒՅԱԿ ԹԻԻ 2 (Ատրեստանի, Իսրայէլի եւ Յուդայի ժամանակակից
 թագաւորները)

ՔԱՐՏԵՍ ԹԻԻ 3 (Իսրայէլ եւ Յուդայ)

ԳԾԱՅՈՒՅԱԿ ԹԻԻ 1 (Ուրարտուի, Ատրեստանի, Իսրայէլի եւ Յուդայի
 տեսչութեան պատմահանգրուանները)

ԳԾԱՅՈՒՅԱԿ ԹԻԻ 2 (Ուրարտուի, Ատրեստանի, Իսրայէլի եւ Յուդայի
 Վերելքներն Ու Վայրէջքները)

ՔԱՐՏԵՍ ԹԻԻ 4 (Վանի Տէրութիւնը Սարգուրի Բ-ի Օրօք)

Յանկ օգտագործուած աղբիւրներու եւ գրականութեան	113
Տեղանուններու Յանկ	117
Անձնական Անուններու Յանկ	123

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

Ինչպէս միշտ, շնորհակալութեան եւ երախտագիտութեան մեծագոյն խօսքս կ'ուղղեմ Աստուծոյս իր պարգեւած բարիքներուն, առիթներուն եւ շնորհիքին:

Խորին շնորհակալութեան խօսքս կ'ուղղեմ Հ.Հ. Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի աւագ գիտաշխատող, Երեւանի Պետական Համալսարանի փրոֆեսոր Արտակ Մովսիսեանին, իր անսահման քաջալերանքին այս աշխատանքի կայացման ի սկզբանէ. եւ յօժարութեամբ կատարելով այս ուսումնասիրութեան գիտական խմբագրութիւնը, տալով իր նկատողութիւնները, ցուցմունքները, քննադատութիւնները եւ առաջարկները: Այդ բոլորը` բաւական օգտակար եղան յաւելեալ աշխատանքով որակաւորելու, շարունակելու եւ ամբողջացնելու այս աշխատանքը:

Երախտագիտութեան խօսքս` կեանքի սիրելի ընկերուհուս, հրաշալի տիկնոջս, Հրաշուհի Թովմասեանին (դոկտ. Հրաշուհի Պօղոսեան), իր անսահման քաջալերանքին. առանց որուն անհնար պիտի ըլլար այս գիրքի լոյս տեսնելը:

Տարիներ տեսող տքնաջան աշխատանքէ ետք, յարգելի ընթերցող` այս գիրքը կը հրամցուի ձեզի. կարդալու եւ յաւելեալ ճանաչելու զմեզ, թէ` ուր ենք մենք` հայերս` Աստուածաշունչի պատմութեան մէջ:

Շնորհակալութիւններս ձեզ:

Պետրոս Մովսէս Թովմասեան

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս ուսումնասիրության նպատակն է՝ ծանոթացնել Հայկական լեռնաշխարհի եւ հայ ժողովուրդի ունեցած զգալի դերը՝ Աստուածաշունչի (Հին Կտակարանի) պատմական դէպքերու ընդմէջէն, հայ անհատին ընդհանրապէս եւ հայ քրիստոնեային մասնաւորապէս, որ կը ներկայանայ պատմականօրէն աշխարհի առաջին քրիստոնեայ պետութեան զաւակը, ինչպէս նաեւ օտար ընթերցողին. կեդրոնաւորով այն պատմահանգրուանին, երբ Հայկական լեռնաշխարհի վրայ գոյութիւն ունէր Ուրարտուն (Վանի թագաւորութիւն), կամ ինչպէս յիշուած է Աստուածաշունչի մէջ Արարատեան թագաւորութիւն:

Յիշենք նաեւ, որ նման ուսումնասիրութիւն մը գոյութիւն չունի հայ իրականութեան մէջ, ինչ որ մեզի մղեց անպայման լրացնելու եւ լոյսի տալու այս կարեւոր ուսումնասիրութիւնը:

Հայկական լեռնաշխարհի մասին Աստուածաշունչի մէջ կան յիշատակութիւններ, որոնց պիտի անդրադառնանք այս ուսումնասիրութեան մէջ. այդ յիշատակութիւնները կը գտնուին Եսայի, Երեմիայ եւ Եզեկիէի մարգարէներու գիրքերու մէջ:

Ուրարտուն ներկայութիւնը Աստուածաշունչի մէջէն կ'երթայ նոյնիսկ Ուրարտուի հիմնադրութիւնէն (IX-րդ դարի սկիզբներուն Ք.Ա.) շատ աւելի առաջ, երբ հուրիներու ներկայութիւնը զգալի էր Հրեաստանի եւ Պաղեստինի մէջ՝ ինչպէս կը հանդիպինք անոնց յիշատակութեան Հայր Աբրահամի ժամանակ, եւ Երուսաղէմի կառուցման պատմութեան մէջ:

Այս յատուկ ուսումնասիրութեան գաղափարը ծնունդ առաւ, երբ խորասուզուած կուսումնասիրէինք Ուրարտուի եւ Ասորեստանի պատմական կապերը, որոնց անդրադարձանք մեր առաջին գիրքի՝ Հայկական Լեռնաշխարհը եւ Միջագետքը-ի մէջ: Այդ ուսումնասիրութեան ընթացքին, ի յայտ եկաւ, որ Ուրարտու-Ասորեստանեան պայքարը ունեցած է եւս զգալի ազդեցութիւն հրեական՝ Յուդայի եւ Իսրայէլի թագաւորութիւններու վրայ:

Այս աշխարհակայնացման հանգրուանին, նակատագրային հարց է, ոչ միայն լաւատեղեակ ըլլալ մեր պատմութեանը, այլ աւելին՝ գիտնալ մեր ներդրումը մեր հարեւան երկիրներու ժողովուրդներու հին եւ նոր պատմութեան մէջ, գերագոյն նպատակ ունենալով՝ ամրացնել տարբեր ժողովուրդներու միջեւ գոյութիւն ունեցող կապերը:

Պատմութեան այս խոր ուսումնասիրութիւնը կը նպաստէ ժողովուրդներու միջեւ փոխըմբռնման, հանդուրժողականութեան եւ վստահութեան հաստատման: Այս ուսումնասիրութիւնը կը մասնակցի գոցելու

այն մեծ բացը, որ գոյութիւն ունի Հայկական լեռնաշխարհի եւ հայ ժողովուրդի կատարած կարեւոր դերը՝ Միջին Արեւելքի ժողովուրդներու հին քաղաքակրթութեան մէջ, կեդրոնաւորով Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններու պատմութեան վրայ: Միեւնոյն ժամանակ, այս ուսումնասիրութիւնը Հայաստանի եւ Հրեաստանի ժողովուրդներու բարեկամական կապերուն զարկ տալու արժեքաւոր ձեռնարկ մը կարելի է նկատել:

Այս ուսումնասիրութիւնը ունի հիմնական չորս Գլուխներ, որոնք ունին Բաժիններ. իւրաքանչիւր Բաժին հիմնուած է որոշ սլաւոնական հարցի, կամ դէպքի վրայ: Բաժինները կ'ընդգրկեն յիշեալ հարցի կամ դէպքի պատմական տեղեկութիւնները, որոնք առնչուած են մեր ուսումնասիրած կապերու հետ, առանց պատմութեան ժամանակագրային մանրամասնութեանց, մնալու համար մեր միւրի ծիրէն ներս: Հարցերը եւ դէպքերը ներկայացուած են մէջբերումներով եւ մեր վերլուծական մեկնաբանութիւններով, որոնք կը փորձեն լրացնել իրարու:

Մէջբերումները քաղուած են տարբեր աղբիւրներէ կամ ուսումնասիրութիւններէ: Օտար լեզուներէ մէջբերումները թարգմանուած են հայերէնի մեր կողմէ:

Բաժինները կ'ընդգրկեն քարտէսներ, ցուցակներ եւ գծացուցակներ: Ցուցակները եւ գծացուցակները պատրաստուած են մեր կողմէ օգտուելով մեր գիտաներկաչափական փորձառութիւններէն, խտացնելու համար պատմական կապերու տեղեկութիւնները, զանոնք հրամցնելու հնշտ ու մատչելի կերպով: Վստահ ենք, որ այս բոլորը աւելի հասկնալի եւ մատչելի կը դարձնեն մեր շօշափած կարեւոր նիւթը:

Ցուցակներու եւ գծացուցակներու մէջ իւրաքանչիւր թագաւորութեան համար գործածուած են յատուկ գոյն մը, Ուրարտուի տեղեկութիւնները տրուած են կարմիր գոյնով, Ասորեստանինը կապոյտով, Իսրայէլինը սրճագոյնով, եւ Յուդայինը կանաչով:

Յիշեցնենք, այս ուսումնասիրութեան մէջ Աստուածաշունչէ բառով ըսել կ'ուզենք Աստուածաշունչի "Հին Կտակարանը" միայն, որուն պատմական դէպքերու մասին են մեր շօշափած հարցերը. ինչպէս նաեւ պիտի գործածենք Արեւմուտք բառը, որով ըսել կ'ուզենք Հայկական լեռնաշխարհի եւ Միջագետքի տարածքներէն դէպի արեւմուտք գտնող Սուրիոյ, Պաղեստինի եւ Հրեաստանի տարածքները:

Հին եւ միջին դարերու պատմութիւնն ունի ժամանակագրական բազմաթիւ չ'լուծուած խնդիրներ, այդպիսիք են հետեւեալները:

Մասնագիտական գրականութեան մէջ առաջարկուած են Ք.Ա. IX-VI դարերուն Իսրայէլի եւ Յուդայի թագաւորներու տարբեր թուականներ:

Ասորեստանի արքաներու գահաժամկետները այս գիրքի մէջ յիշուած են ըստ Ասորեստանի պատմութեան համար, առաւել ընդունուած ժամանակագրութեան¹:

Վանի թագաւորութեան (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) ժամանակագրութեան մէջ կան հիմնական երկու մօտեցումներ: Առաջինի կողմնակիցները կը բաւարարուին Ասորեստանի եւ Ուրարտուի արքաներու ժամանակագրական համապատասխանութեամբ (սինքրոն աղիւսակով), որուն մէջ նշուած են միայն Վանի թագաւորութեան ստոյգ յայտնի թուականները²: Միւս մօտեցման կողմնակիցները կը փորձեն ամբողջութեամբ վերականգնել թագաւորութեան ժամանակագրութիւնը՝ յանախ մօտաւոր ճշգրտութեամբ կլորացնելով թուականները եւ լրացնելով «դատարկ» ժամանակաշրջանները³:

Երկու մօտեցման պարագային ալ՝ անոնք չեն ազդեր մեր հիմնական նիւթի վրայ, որ կը զուգադիպի Ուրարտուի արքաներու լաւ լուսաբանուած ժամանակաշրջանին (Արգիշտի Ա-ի եւ Սարգուրի Բ-ի իշխանութեան տարիներուն):

Ընթերցողին համար աւելի մատչելի դարձնելու նպատակով՝ մենք այս գիրքին մէջ հետեւած ենք երկրորդ մօտեցմանը՝ նշելով Վանի արքաներու վերականգնուած եւ լրացուած թուականները:

¹ Տես, օրինակ, http://en.wikipedia.org/wiki/List_of_Assyrian_kings (նշենք, որ այս համակարգի մէջ եւս առանձին ուսումնասիրողներ տարբեր թուականներու մասին տարակարծութիւններ ունին, որոնք էական չեն մեր արծարծած խնդիրներու համար):

² Տես, օրինակ, Salvini M., *Geschichte und Kultur der urartäer*, Darmstadt, 1995, էջ 207; Zimansky P. E., *Ecology and Empire: The Structure of the Urartian State*, Chicago, 1985, էջ 99:

³ Տես, օրինակ, Հայ ժողովրդի պատմութիւն (ԳԱ հրատ.), Հ.1, Ե., 1971, էջ 920-921: Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիւ, Հ.1, Ե., 2007, էջ 513:

Ա. ԳԼՈՒԽ

ՈՒՐԱՐՏՈՒՆ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ

Հայկական լեռնաշխարհի մէջ Ք. Ա. IX-րդ դարի առաջին կեսին՝ հիմնուեցաւ պետութիւն մը, որ Ասորեստանեան արձանագրութիւններուն մէջ կոչուեցաւ **Ուրարտու**⁴, իսկ Աստուածաշունչի մէջ՝ **Արարատ**⁵, հետեւաբար այդ անուններով նանչցուեցաւ համաշխարհային պատմութեան մէջ:

Ուրարտու-Արարատին պատմական աղբիւրներու մէջ կարելի է հանդիպիլ երկու այլ անուններով.

- Նայիրի. Ուրարտու-Արարատի արքաները կը կոչէին իրենց սեփական երկիրը ասորեստանցիներէն գրուած իրենց արձանագրութիւններու մէջ:

4. Ուրարտու-Արարատի մասին վկայող ասորեստանեան արձանագրութիւնները որոնք ի մի բերուած են հետեւեալ աշխատանքներու մէջ՝ Սանտալեան Հ., Ասորեստանաց եւ պարսիկ սեպագիր արձանագրութիւնք կամ քաղուածք նոցին, որոնք Նաիրի-Ուրարտու աշխարհին պատմութեան կը վերաբերին, Վիեննա, 1901, Дьяконов И. М., *Ассирио-вавилонские источники по истории Урарту*, "Вестник древней истории", М., 1951, N 2-4. (Ռուսերէն՝ Դիականօֆ Ի. Մ., Ասորաբաբելական Աղբիւրները Ուրարտուի Պատմութեան Մասին. "Հին Պատմութեան Լրատու", Մոսկուա, 1951, Թիւ 2-4): Վերջին տարիներուն յայտնաբերուած ու հրատարակուած են մեծ թիւով նոր արձանագրութիւններ, որոնք տակաւին չեն ունեցած համահաւար հրատարակութիւն:

5. Աստուածաշունչի մէջ Հայաստանը «Արարատ» անուամբ կը յիշատակուի հինգ անգամ: Նախ ան յիշուած է Ծննդոց (Ը, 4)՝ առնչուած համաշխարհային ջրհեղեղի պատմութեան հետ: ԹԱԳԱՒՈՐԱՅ Դ (ԺԹ, 37), Տոբիթի (Ա, 24) գիրքերու մէջ եւ ՄԱՐԳԱՐԷՆԻԹԻՆ ԵՍԱՅԵԱՅԻ (ԼԷ, 38), Արարատ երկիրը կը յիշուի որպէս Ասորեստանի Սենքերիմ (Սինախերիբ) արքայի հայրասպան որդիներու ապաստանատեղ (681 Ք.Ա.), իսկ ՄԱՐԳԱՐԷՆԻԹԻՆ ԵՐԵՄԻԱՅԻ (ԾԱ, 27) կը նշուի անիրաւ Բաբելոնի դէմ Ք.Ա. 590-ական թուականներուն պատերազմի հրախրուող թագաւորութիւններու շարքին մէջ: Փաստօրէն, նշուած երեք դէպքերէն Վանի թագաւորութեան պատմութեան կը վերաբերի միայն 681 Ք.Ա. Սենքերիմի (Սինախերիբի) սպանութեան՝ եւ անոր որդիներու պատմութիւնը՝ վկայուած Հին Կտակարանի երեք գիրքերուն մէջ: Աստուածաշունչի թարգմանութիւններու ու վաղ շրջանի մեկնութիւններու մէջ «Արարատը», որպէս օրինաւորութիւն, կը փոխարինուի «Արմենիա» եւ «Հայք» համարժեքներով (Ինգլիզեան Հայր Վահան վարդապետ, Հայաստան Սուրբ Գրքի մէջ, Վիեննա, 1947, էջ 5-21, նաեւ հոն յղուած գրականութիւնը):

- Բիայնիլի. Ուրարտու-Արարատի արքաները այսպես կը կոչէին իրենց երկիրը տեղական (ուրարտական կամ բիայնական) սեպագիր արձանագրութիւններու մէջ:

Յետագայ դարերուն «Ուրարտուն» հանդէս կ'ուզայ որպէս Հայաստանի անուանումը Բարեկոնեան արձանագրութիւններու մէջ⁶:

Իսկ գիտական գրականութեան մէջ Վանի թագաւորութիւնը (Ուրարտու) յայտնի դարձած է քանի մը անուններով, որոնց մասին անհրաժեշտ է լուսարանել:

- Արարատեան թագաւորութիւն,
- Վանեան կամ Վանի թագաւորութիւն,
- Խալդեան թագաւորութիւն:

Արարատը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր երկգագար լեռն է: Բայերը այս լեռան գագաթները կոչած են Մ'եմ եւ Փոքր Մասիսներ, ինչպէս եւ Սիս (3925 մ.) եւ Մասիս (5165 մ.): Մասիսը յայտնի է նաեւ Արարատ անունով: Արարատ անունը տարածուած է աշխարհի մէջ Աստուածաշունչի միջոցով: Ըստ Աստուածաշունչի Նոյնապետի տապանը նստեցաւ Արարատ լեռներուն վրայ⁷:

Ուրարտուի պետութեան ամենաբարձր լեռն էր Արարատը, որ ասուրա-բարելական տառադարձութեամբ վերածուած է Արարատի: Իսկ Աստուածաշունչի մէջ, Ուրարտուի մասին յիշատակութիւններ կան Արարատեան թագաւորութիւն անունով, որոնց պիտի անդրադառնանք, եւ լուսարանենք անոնց կարեւոր մանրամասնութիւնները այս ուսումնասիրութեան էջերու մէջ:

⁶ Ասորերէն եւ բարելերէն արձանագրութիւններու մէջ Հայաստանը «Ուրարտու» է կոչուած Ք.Ա. IX դարէն մինչեւ Ք. Ա. IV դարի առաջին կէսը ներառեալ: Վերջին անգամ Բայերը «ուրարտացի» անուամբ յիշատակուած են Աքեմէնեան արքա Արտաքսէրքսես Բ-ի օրօք (404-359 Ք.Ա.) բարելերէն գրուած արձանագրութիւններու մէջ (Kent R.G., Old Persian. Grammar, Texts, Lexicon, Parts I-III, New Haven, 1953, էջ 121-124, 171; Նալբանդյան Գ., Դարեհ վշնասպի Բիսթրունեան ար ծանագրութիւնը, Ե., 1964, էջ 8, 14-15; Дандамаев М. А., Клинописные данные об армянах, "Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей", Е., 1990 (Ռուսերէն) Դանդամաեւ Մ. Ա., Սեպագիր Աղբիւրները Հայերի Մասին, Բազմազիտանիդ Ուսումնասիրութիւններ Հայկական լեռնաշխարհի եւ Հարակից Շրջանների Մշակութաբանական եւ Ազգաբանագիտական Մասին, 1990, էջ 102-106; Մովսիսյան Արտակ, Արբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջաւոր Ասիայի հնագույն հոգեւոր ընկալումներում, Երևան, 2006, էջ 55-65:

⁷ Աստուածաշունչ, ՄՆՆԴՈՅ 8:4:

Ուրարտուն կոչուած է նաեւ Վանեան թագաւորութիւն, կամ Վանի թագաւորութիւն. որովհետեւ անոր տարածքի հիմնական մասը կը գտնուէր Վանայ լիճի շուրջը: Վանայ լիճը Ուրարտունէն առաջ կը կոչուէր Նայիրիի ծով: Վանայ լիճը կը գտնուի լեռներու մէջ, ծովի մակարդակէն 1720 մետր բարձրութեան վրայ, ունի 3765 քառ. կմ մակերես, եւ խորութիւնը շատ մեծ է՝ մօտ 451 մետր, բաղդատմամբ իրեն մօտիկ Սեւանայ եւ Ուրմիոյ լիճերուն. տես Քարտէս թիւ 1:

Հարկաւոր է նշել, որ Ուրարտուի ժողովուրդը իր երկիրը կը կոչէր Բիայնա կամ Բիաինիլի. քանի որ սեպագիրը չունէր «վ» եւ այն կը փոխարինուէր «բ»-ով: Մէջբերենք Նիկողայոս Աղոնցէն, «Անվիճելի է, որ ուրարտացիները իրենց երկիրը ցոյց տալու համար իրենց արձանագրութիւնների մէջ ուրիշ անուն չեն գործածում բացի Բիաինի անունից: Ասորեստանցիները գործածել են Ուրարտու եւ Նաիրի տերմինները»⁸: Մէջբերենք եւս Ժագ Ֆինիգընէն հետեւեալը, ուր ան կ'անդրադառնայ Ուրարտուի տարբեր կոչումներուն, եւ կը յիշէ Ուրարտուի Իշպուինի (825-810 Ք.Ա.) թագաւորի ձգած արձանագրութիւններու մասին, «Ասորերէն, Իշպուինի ինքզինքը կը կոչէ Նայիրի երկրի թագաւոր, բայց ուրարտերէն, Բիաինի երկրի թագաւոր. վերջինս՝ երկրի ուրարտական անուանակոչումն էր: Աստուածաշունչական ակնարկութիւններու մէջ Ուրարտու անունը մատուցուած է որպէս Արարատ (ՄՏՏՏՏ 8:4, Դ. Թագաւորաց 19:37⁹, Եսայեայ 37:38, Երեմեայ 51:27)»¹⁰:

Վանայ լիճը շնորհիւ իր գրաւած աշխարհագրական կարեւոր դիրքին Հայկական լեռնաշխարհի մէջ, եղաւ Ուրարտուի հիմնական տարածքը: Այդ հանգրուանին կառուցուեցաւ Տուշպա-Վան քաղաքը՝ Վանայ լիճի արեւելեան ափին, ու դարձաւ Ուրարտուի մայրաքաղաքը եւ բաբախուն սիրտը. հետեւաբար պետութեան հիմնական կեդրոնը: Ուստի մայրաքաղաքի անունով՝ Ուրարտուն կոչուած է նաեւ Վանի թագաւորութիւն. ինչպէս Բարեկոնեան թագաւորութիւնը կոչուեցաւ Բարեկոն քաղաքի անունով:

Եւ վերջապէս, Ուրարտուն կոչուած է նաեւ Խալդեան թագաւորութիւն, քանզի հին ժամանակ սովորութիւն կար ժողովուրդները կամ պետութիւնները կոչել իրենց պաշտած հիմնական աստուծոյ անունով,

⁸ Նիկողայոս Աղոնց, Հայաստանի Պատմութիւն, Երևան, 1972, էջ 269:

⁹ Աստուածաշունչի Բայերէն թարգմանութեան մէջ Դ. Թագաւորաց, իսկ անգլերէնի մէջ 2 Kings.

¹⁰ Jack Finegan, Archaeological History of The Ancient Middle East, Barnes & Noble Inc., New York 1996. p. 382.

ինչպես ասորեստանցիներու պարագային՝ Աշուր աստուածը, եւ Ուրարտուի պարագային՝ մեծագոյն Խալդի աստուածը:

Անհրաժեշտ է յիշել, թէ՛ հին ժամանակներուն Ուրարտու պետութիւնը ինչ հանգրուաններէ անցած է նախքան իր հիմնադրութիւնը, որպէս կայուն պետութիւն IX-րդ դարին Ք.Ա.:

Ուրարտուի անուանակոչութեան հին ձեւերն են Ուրատրի կամ Ուրուատրի: XIII դարուն Ք.Ա. Հայկական լեռնաշխարհի տարածքի մէջ, Վանայ լիճի աւազանէն դէպի արեւելք մինչեւ Ուրմիոյ լիճ տարածուող շրջաններուն մէջ գոյութիւն ունէր Ուրուատրի կոչուող տեղական ութ ցեղերու միութիւնը. որոնց դէմ արշաւանք կազմակերպեց Ասորեստանի Սալմանասար Ա. (1274-1245 Ք.Ա.) թագաւորը, եւ իր արձանագրութեանց մէջ յիշեց, «...իմ գահակալութեան տարին, ուրուատրիները ըմբոստացան իմ դէմ: Ձեռք կարկտեցի Աշշուրին եւ մեծ աստուածներին՝ իմ տերերին: Իմ զօրքի հաւաքը կազմակերպեցի եւ նրանց ամուր լեռնաշղթաները եւ բարձրացայ: Խիմմե, Ուատկուն, Մաշգուն, Սալուա, Խալիւա, Լուխա, Նիլիպախի եւ Զինգուն՝ նրանց ութ երկրներին եւ նրանց աշխարհագրութիւնն եւ յաղթեցի: Նրանց 51 քաղաքները քանդեցի, այրեցի. նրանց ռազմավարը, նրանց ունեցուածքը յափշտակեցի. բոլոր ուրուատրիներին երեք օրում խոնարհեցրի իմ տիրոջ՝ Աշշուրի ոտքերի առաջ: Նրանց ընտրեալ սերունդը բռնեցի, ծառայութեան եւ իմ աշխատանքի համար վերցրի, լեռների ծանր հարկը նրանց վրայ յաւիտեան դրի»¹¹:

Պէտք է նշել, որ Ուրարտուն, կամ հին ժամանակ Ուրատրին յիշեալ երկրի ազգային անունը չէր. ասորեստանցիները այդ անունով կոչեցին Հայկական լեռնաշխարհը:

Սալմանասար Ա.-ի հասցուցած շատ ծանր վնասներու հետեւանքով Ուրուատրիի միութիւնը լուծուեցաւ, ու իր տեղը զիջեց աւելի հզօր միութեան մը, որ կոչուեցաւ Նախիբի: Միշէլ Ռաուֆ Ուրուատրին յիշած է որպէս թագաւորութիւն, մէջբերեց հետեւեալը, «Դէպի հիւսիս, Սալմանասար Ա. (1273-1244) յաղթեց Ուրուատրի թագաւորութեան, որ առաջին անգամ ըլլալով յիշուած է արձանագրութիւններուն մէջ: Ուրուատրի, ետքը ճանչցուեցաւ Ուրարտու, որ աւերուած փրկուեցաւ Արարատ անունով. ան փաստեց որ յարատեւ փուշ էր Ասորեստանի կողմին»¹²:

Այնուհետեւ, Ասորեստանի մշտական արշաւանքները Ուրուատրիին յաջորդող Նախիբի վրայ Հայկական լեռնաշխարհի մէջ՝ յառաջացուցին անյետաձգելի անհրաժեշտութիւնը Նախիբի հայկական ցեղերու միացման եւ Ուրարտուի պետութեան հիմնադրութեան: Ասորեստանցիք մտահոգ էին, որ Նախիբին զօրանալով պիտի կազմակերպուէր պետութեան մը մէջ. այդ պատճառով անոնք բազմացուցին իրենց արշաւանքներու թիւը, յուսալով, որ այդպիսով պիտի կարենային կործանել Նախիբին: Բայց պատմութիւնը կը յուշէ մեզի, որ անոնք չարաչար ձախողեցան. Նախիբին փոխարինուեցաւ Ուրարտունով:

Ասորեստանեան սեպագիր արձանագրութիւններու մէջ 859 Ք.Ա. յիշուած է Արամէի անունը՝ որպէս Ուրարտուի գահակալը: Արամէն եղաւ միացնողը Հայկական լեռնաշխարհի անջատ իշխանութիւններուն:

Արամէի պետութիւնը կ'ընդգրկէր Վանայ լիճի ամբողջ աւազանը, եւ դէպի հիւսիս տարածուող Եփրատի վերին հոսանքի բարեբեր հովիտը: Ան կը հանդիսանար կարելոր ուժ մը Հայկական լեռնաշխարհի մէջ, որ ի զօրու էր կանգնելու հզօր Ասորեստանի արշաւանքներուն դէմ, եւ պարտուած ետ մղելու թշնամի բանակները, ու զերծ պահել բնակչութիւնը անոնց աւերիչ արշաւանքներէն:

Ուրարտուն եղաւ զօրաւոր պետութիւն մը շատ մօտիկ Ասորեստանին՝ եւ գոյատեւեց մօտ երեք դար. մօտաւորապէս 870 թուականէն մինչեւ Ք.Ա. VII դարի վերջը: Ուրարտուի արքաները ժամանակակից եղած են Ասորեստանի 20 գահակալներուն:

Յիշեալ մօտ երեք դարերու ընթացքին, երկարատեւ ռազմական գործողութիւններ տեղի ունեցած են Ասորեստանի եւ Ուրարտուի միջեւ: Կարելի է ընդգծել, որ ընդհանրապէս արշաւանքները սկսած են Ասորեստանի գահակալները, իսկ Ուրարտուն արձագանգած է:

Ուրարտուն իր գոյութեամբ Մենուայի ջանքերով վերածուեցաւ հզօր կայսրութեան, որ տեւեց մօտ 70 տարի. եւ շարունակուեցաւ իր յաջորդներու Արգիշտի Ա., Սարգուրի Բ., եւ Ռուսա Ա.-ի թագաւորութեան տարիներուն: Ուրարտուի կայսրութեան սահմանները կարելի է տեսնել Քարտէս թիւ 2ի մէջ:

Այսպէս, Ասորեստանը Սալմանասար Գ.-ի մահէն 824 Ք.Ա. մինչեւ Թիգլաթպալասար Գ.-ի գահակալութիւնը՝ 745 Ք.Ա. մօտ ութսուն տարի, մնաց Հայկական լեռնաշխարհի վրայ հիմնուած հզօրացող Ուրարտու-Վանի թագաւորութեան ազդեցութեան տակ:

Ուրարտուն իր մօտ երեք դարերու գոյութեամբ Հայկական լեռնաշխարհի սրտի մէջ, պատմականօրէն մեծ դեր կատարեց, եւ ունեցաւ իր կարելոր ազդեցութիւնը տարածքաշրջանի պատմութեան վրայ: Ուրար-

¹¹ Հայ Ժողովրդի Պատմութեան Փրեստոմատիպ հատոր 1, Երեւան 1981, էջ 14:

¹² Michael Roaf, Cultural Atlas of Mesopotamia and The Ancient Near East, 1990, P. 149.

տուի հզորացումը հակազդեց Ասորեստանի դիրքի վրայ. Ուրարտուի ընդլայնումը դեպի Արևմուտք տկարացուց Ասորեստանեան վերահսկողությունը Սուրիոյ, Պաղեստինի եւ Հրեաստանի վրայ: Այս ուսումնասիրութեան առնչութեամբ, մեզ հետաքրքրական է Աստուածաշունչի մարգարէներէն երկուրի օգնութեան յորդորները ուղղուած Հայկական լեռնաշխարհի ժողովուրդներուն, Ասորեստանի եւ Բաբելոնի վրայ յարձակելու համար. որոնց պիտի անդրադառնանք յաջորդ էջերու մէջ:

Ուրարտուի պատմական պայքարը Ասորեստանի հետ հնարաւորութիւն տուաւ նաեւ հնդեւրոպական ժողովուրդներուն առանց արտաքին ճնշման շարունակելու իրենց զարգացումը Եւրոպայէն մինչեւ Ասիայի խորքերը¹³:

Ուրարտուն սեմականներու (Ասորեստան եւ Բաբելոն) առջեւ գոցեց դեպի հիւսիս տարածուելու հնարաւորութիւնը. «Ուրարտուն կատարել է այնպիսի առաքելութիւն, որը պէտք է գնահատել ըստ արժանւոյն, նա փակել է սեմականութեան ծաւալման ճանապարհը դեպի Հայկական լեռնաշխարհ եւ Փոքր Ասիա: Ինչպիսիւն էլ, որ լինի ասորեստանեան քաղաքակրթութեան արժէքները, չպէտք է թաքցնել, որ Ասորեստանը գուրկ էր մարդու ունեցած գիտակցութիւնից. որ այնքան էական է քաղաքակրթութեան համար: Աշշուրի տիրակալների անգթութիւնը առասպելական էր:

Նրանք նոյնիսկ իրենք իրենց հաշիւ չէին տալիս այն հրեշաւոր յայտարարութիւնների մասին, որ անում էին առանց նեղուելու եւ հպարտութեամբ, ասելով, թէ «կատաղած շան եւ վայրի ցուլի նման» իրենք նետում են թշնամի երկրների վրայ: Հիւանդագին կրքոտութեամբ նրանք նկարագրում են, թէ ինչ սարսափելի գործեր են կատարել յարձակման ենթարկուած երկրներում՝ աւերել, հրկիզել քաղաքները ու դաշտերը, կոտորել բնակչութեանը, կենդանի այրել երիտասարդ տղաներին ու երիտասարդ աղջիկներին, կտրել ձեռքերը, մատները, ականջները, մորթել եւ կաշիները փռել պարիսպների վրայ, կտրուած գլուխներով բուրգեր բարձրացրել եւ նրանց շուրջը շարել ցցահանուած դժբախտներին, գիւղերում դադարեցրել աշխատաւորների ուրախ ծայրը եւ թողել, որ այնտեղ հաստատուեն վայրի էջերն ու վայրի գազանները եւ այլն»¹⁴: Պէտք է նշել, որ Ուրարտուի պայքարը Ասորեստանի հետ, յառաջացուց հնդեւրոպացիներու եւ սեմականներու պայքարը, որ

վերջ գտաւ Ք.Ա. VII-րդ եւ VI-րդ դարերուն սեմական ժողովուրդներու պարտութեամբ, Ասորեստանի եւ Բաբելոնի անկմամբ 612 եւ 539թ. Ք.Ա.:

Ասորեստանի մօտ եռադարեայ պայքարը Ուրարտուի դէմ, եւ մշտական թշնամութիւնը պատճառ եղաւ Ասորեստանի զինուժի սպառման. եւ անոր անկարողութեան դիմադրելու տարածքաշրջանի մէջ յայտնուած նոր ժողովուրդներուն, ինչպէս մարերը, սկիւթները, կիմիրները եւ պարսիկները:

Վերջաւորութեան, պէտք է յիշել, որ Ուրարտուի թագաւորութիւնը երեք երկար դարերու ընթացքին վարեց բուռն պայքար Ասորեստանի դէմ մինչեւ Ասորեստանի օրհասական օրերը, ու անոր վերջնական կործանումը 605 թուականին:

Ի դժբախտութիւն համամարդկային պատմագիտութեան, անհրաժեշտ է յիշել, որ Ուրարտուի կեդրոնական մասերը կազմող տարածքներու մէջ՝ Վանայ լիճի շրջակայքին, մինչեւ օրս շատ քիչ պեղումներ տեղի ունեցած են. եւ վստահաբար նոր պեղումներ տեղի պիտի չ'ունենան՝ այնքան ժամանակ, որ այդ տարածքները կը գտնուին ոչ հալկական, օտարի լուծին տակ: Հետեւաբար, կարելոր տեղեկութիւններ Ուրարտուի-Վանի թագաւորութեան պատմութեան էջերէն չ'այտնաբերուած կը մնան մարդկութեան առջեւ. եւ ի մասնաւորի այդ պետութեան նախասկզբնական պատմութիւնը:

¹³ Գուրգեն Կարապետեան, Հայոց Պատմութեան Ուրվագծեր, 1 Հատոր Բ. Գիրք, Երեւան 2007, էջ 7:

¹⁴ Ն. Ադոնց, Հայաստանի Պատմութիւնը, Երեւան, 1972, էջ 365:

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԵԱՆ ՀՐԵԱԿԱՆ ՅՈՒԴԱՅԻ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Աստուածաշունչը կամ Ս. Գիրքը, որ կը պարունակէ հրեական եւ քրիստոնէական կրօններու սկզբունքները, կը բաղկանայ երկու հիմնական մասերէ. Հին Կտակարան (39 գիրք), եւ Նոր Կտակարան (27 գիրք): Ինչպէս յայտնի է, Նոր Կտակարանը կ'ընդգրկէ Յիսուս Քրիստոսի մասին գրուած 4 Աւետարանները, Գործք Առաքելոցը, Առաքելներու նամակները եւ Յովհաննու Յայտնութիւնը: Այս ուսումնասիրութեան կապակցութեամբ, մեզ հետաքրքրողն է Աստուածաշունչի Հին Կտակարանը, որ կը խօսի հրեայ ժողովուրդի ծագման եւ հին պատմութեան մասին. կարելի է ըսել, որ Հին Կտակարանի գլխաւոր նիւթը հրեայ ժողովուրդի պատմութիւնն է: Հոն կայ նաեւ, հրեայ ժողովուրդի քաղաքական զարգացման պատմութիւնը, ուր բաւական մանրամասն տեղեկութիւններ կան հրեական միասնական թագաւորութեան մասին, որուն թագաւորներն էին Սաուլը, Դաւիթը եւ Սողոմոնը. եւ ապա անոր յաջորդող Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններու մասին:

Աստուածաշունչը, Ս. Գիրքը ըլլալէ զատ, նաեւ շատ կարեւոր աղբիւր է հրեայ, ինչպէս եւ Մերձաւոր Արեւելքի ժողովուրդներու հին պատմութեան, որոնցմէ մէկն է նաեւ հայ ժողովուրդը: Հին Կտակարանի մէջ կայ նաեւ, այս ուսումնասիրութեան առնչութեամբ մեզ հետաքրքրող պատմահանգրուանը, որուն վերջաւորութեան Իսրայէլը դարձաւ Ասորեստանի զոհը, իսկ Յուդան՝ աւելի ուշ Բաբելոնի զոհը:

Ինչպէս յիշեցինք երկու Խօսքին մէջ մասնագիտական գրականութեան մէջ առաջարկուած են Ք.Ա. IX-VI դարերուն Իսրայէլի եւ Յուդայի թագաւորներու տարբեր թուականներ, որոնք կարելի է տեսնել Յուդայի Թիւ 2ի մէջ:

Մեզ հետաքրքրող ժամանակներուն, գոյութիւն ունէին հրեական երկու թագաւորութիւններ. Իսրայէլի թագաւորութիւնը, որուն կեդրոնն էր Սամարիայ քաղաքը, որ կառուցեց Ամրի թագաւորը (885 կամ 880-874 Ք.Ա.) լեռներով շրջապատուած բարձունքի մը վրայ: Սամարիան իր անառիկ դիրքով՝ դարձաւ անմատչելի լեռնային ամրոց, ու շնորհիւ այդ դիրքին՝ մէկէ աւելի անգամներ յաջողեցաւ փրկուիլ Ասոր-

թեստանի կազմակերպած արշաւանքներէն: Իսկ երկրորդը, Յուդայի թագաւորութիւնն էր, որուն կեդրոնն էր Երուսաղէմ քաղաքը:

Այս երկու թագաւորութիւններու մօտաւոր սահմանները կարելի է տեսնել Քարտէս թիւ 3ի մէջ: Այս քարտէսի մէջ յստակ է, որ Իսրայէլը իր տարածքով աւելի մեծ էր Յուդայէն:

Սողոմոն Իմաստունի ժամանակ՝ հրեական միասնական թագաւորութիւնը կը շարունակէր ապրիլ իր Առաջին Ոսկեղարը, երբ կառուցուեցաւ Երուսաղէմի տաճարը: Սակայն իր մահէն ետք, տեղի ունեցաւ հրեայ ազգի քաղաքական պառակտումը. եւ թագաւորութեան բաժանումը երկու մասի, Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններուն: Յիշաւ հրեական երկու թագաւորութիւնները առաջ եկան, երբ Սողոմոն Իմաստունի (961-922, կամ 965-931 Ք.Ա.)¹⁵ մահէն ետք հրեական թագաւորութիւնը, որ դարձած էր փոքրիկ կայսրութիւն մը ընդգրկելով որոշ մասեր ներկայ Լիբանանէն, Սուրիայէն եւ Յորդանանէն, բաժանուեցաւ երկու թագաւորութիւններու:

Հակառակ այն իրականութեան՝ որ միասնական թագաւորութիւնը շատ հարուստ եւ բաւական հզօր թագաւորութիւն էր դարձած, սակայն ժողովուրդի մեծամասնութիւնը դժգոհ էր ծանր հարկերէն, ինչ որ դարձաւ բաժանման հիմնական պատճառներէն հզօրագոյնը: Ու երբ Սողոմոն Իմաստունի մահէն ետք զահին բազմեցաւ իր որդին՝ Ռոբովամը (931-913 Ք.Ա.), ժողովուրդը դիմեց անոր խնդրելով հարկերը թերեւցնել, բայց մերժուեցաւ: Այս հարցը եղաւ հիմնական պատճառը, որուն հետեւանքով հիւսիսի մէջ գտնուող հրեական տասը ցեղերը՝ ապստամբեցան եւ հիմնեցին Իսրայէլի թագաւորութիւնը, որուն առաջին թագաւորը եղաւ Հերոբովամ Ա. (926-909 Ք.Ա.), մայրաքաղաք ունենալով Սիկիմը (Սամարիայէն հարաւ արեւելք), ուր տեղի ունեցաւ իր արքայական ընտրութիւնը¹⁶: Հարաւի մէջ շարունակեց իշխել Սողոմոն Իմաստունի՝ Ռոբովամ որդին, Երուսաղէմը ունենալով որպէս մայրաքաղաք: Հարաւի թագաւորութիւնը կոչուեցաւ Յուդայ, որովհետեւ ան կազմուած էր հրեական Յուդայի եւ Բենիամինի ցեղերէն: Յուդայի թագաւորները Դաւիթի շառաւիղներն էին, ու այդ պատճառով՝ համաձայն Աստուածաշունչին սեպուեցան Աստուծոյ ընտրեալները:

¹⁵ D. J. Wiseman, Illustrations From Biblical Archaeology, Michigan, 1958, p. 53.

¹⁶ Kathleen Kenyon, Royal Cities of the Old Testament, New York, 1971, p. 72.

Հրեական այս երկու թագաւորութիւնները աշխարհագրականօրէն շատ մօտ էին իրարու, այնպէս որ հեռաւորութիւնը իրենց մայրաքաղաքներու միջեւ՝ Երուսաղէմէն Սամարիա հազիւ 30 մղոն էր (մօտաւորապէս 48 քիլօմէթր): Այս երկու թագաւորութիւնները իրարու հետ ապրեցան մօտաւորապէս երկու դար, եւ ընդհանրապէս թշնամութեամբ: Անոնց միջեւ տեղի ունեցած պատերազմներու մասին բազմաթիւ յիշատակութիւններ կան Աստուածաշունչի մէջ. «Ներդաշնակցութիւն չկար Յուդայի եւ Իսրայէլի միջեւ: Անոնք թափեցին իրար արիւնը գծտութիւններէ եւ ատելութիւններէ ետք: Դադարէ ետք, կրկին պատերազմներ սահմանափակներու պատճառով»¹⁷:

Պէտք է մատնանշել, որ պատմական ճշմարտութիւն է, երբ իրարու այսքան մօտիկ, նոյն ժողովուրդին պատկանող՝ երկու թագաւորութիւններ գոյութիւն ունեցան, այդ իրականութիւնը ինքնին ցուցանիշ է քաղաքական մեծ տկարութեան: Ասորեստանը հրեայ ժողովուրդի այդ քաղաքական տկար վիճակէն օգտուեցաւ, իր իշխանութեան տակ առնելու Իսրայէլը եւ Յուդան. եւ ապա վերջ տալու անոնց գոյութեանը: Կարելոր պատճառներէն մէկը, որ ուշացուց այդ, ու երկարաձգեց հրեական յիշեալ երկու թագաւորութիւններու գոյութիւնը, Ուրարտուի եւ Ասորեստանի պատմական պայքարն էր, որու մասին մանրամասն պիտի անդրադառնանք յաջորդ էջերու մէջ:

Հարաւային թագաւորութեան մայրաքաղաք Երուսաղէմը, համաձայն պատմական տեղեկութիւններուն գոյութիւն ունեցած է Ք.Ա. 1800 թուականներուն որպէս Յեբրուսական ամրոց¹⁸: Ընդհանուր կարծիքը այն է, որ Յեբրուսացիները հուրիական ցեղ մըն էին. «Յեբրուս անունը կը թուի աւելի Հուրիական եւ ոչ թէ Սեմական»¹⁹:

Երուսաղէմը հին ժամանակներուն կոչուած է Սաղեմ կամ Սալեմ "Salem". տես Աստուածաշունչ (Ծննդոց 14:18. եւ Յեսուայ 15:63): Հրեական տասներկու ցեղերէն Բենեամինի ցեղը Երուսաղէմը գրաւեց, բայց հուրի Յեբրուսացիներուն չ'հեռացուց քաղաքէն. «21 Բենիամինի որդիները Երուսաղէմի մէջ բնակող Յեբրուսացիները չ'վճռեցին: Յեբրուսացիները Բենիամինի որդիներուն հետ Երուսաղէմի մէջ բնակեցան մինչեւ այսօր»²⁰:

¹⁷ Werner Keller, The Bible As History, New York, Barnes & Noble, 1995, p. 228.

¹⁸ Աստուածաշունչի Հանրագիտարան, Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութիւն, 1999, էջ 261:

¹⁹ Holman Illustrated Bible Dictionary, Holman Bible Publishers Tennessee 2003, p. 874.

²⁰ Աստուածաշունչ, ԴԱՏԱԻՈՒԱՅ 1:21:

Այսպէս, ուրեմն Երուսաղէմը կառուցած են Հուրիները կամ Խուրիները, որոնք Հայկական լեռնաշխարհի հնագոյն ժողովուրդներէն են եւ կը ներկայանան Ուրարտու պետութեան հիմնական ժողովուրդներէն մէկը: Հուրիներու բուն բնակավայրը կը տարածուէր Տաւրոսեան լեռներէն՝ Կարքէմիշ քաղաքէն (ներկայիս Սուրիոյ սահմանին կից, Թուրքիոյ մէջ) մինչեւ Վանայ լիճի ափերը. այս տարածքէն դուրս անոնք գոյութիւն ունեցած են նաեւ Իրաքի, Սուրիոյ, Պաղեստինի եւ Հրեաստանի մէջ: Հուրիներէն այն հատուածը, որ բնակչութիւն հաստատած էր շատ հին ժամանակներէն Հրեաստանի մէջ, կառուցած էր Երուսաղէմը:

Համաձայն գիտնականներուն հուրիներէնի ամենամօտիկ լեզուն կը ներկայանայ ուրարտերէնը, այդ իսկ պատճառով ուրարտերէնը կոչուեցաւ որոշ գիտնականներու կողմէ նոր-հուրիներէն: Արեւելո թուրքերի Ուրարտացիներուն կը կոչէ "Հուրիներու թոռներ", «Ուրարտացիք կ'աւմ Խալդք, որոնք յայտնի եղան վերջին հազարամեակին Ք.Ա. խուրիներու թոռներն են, այն խուրիներուն որոնք մնացին իրենց նախնական հաւայրենիքի մէջ: IX-րդ դարին Ք.Ա. խուրի-ուրարտական փոքր պետութիւնները միացան ու կազմեցին թագաւորութիւն մը, որ իրեն մայրաքաղաք ընտրեց Տուշպան՝ Վանայ լիճի արեւելեան ափին»²¹: Ինչպէս էս յիշեցինք Ա. Գլուխի մէջ Ուրարտուն կոչուած է նաեւ Խալդեան թագաւորութիւն. իր մեծագոյն Խալդ աստուծոյ անունով:

Իսկ Երուսաղէմ քաղաքի կառուցման մասին, մէջբերենք հետեւեալը Ներսէս Վիրապեանէն, «Ուրեմն աւելի քան 5000 տարի առաջ մեր նախահայրերը դէպի հարաւ իջնելով շինած են Ուր եւ Ուրուք քաղաքները, ուր այս ալ ըսեմ որ հուրեանները շինած են Երուսաղէմը որուն անունը յառաջ եկած է Ուրու Սալիմ անունէն»²²: Այսպէս, Հայ ժողովուրդի նախահայրերէն՝ հուրիական ցեղերէն՝ Յեբրուսացիներն են, որ կառուցած են Երուսաղէմը, տակաւին Ուրարտական պետութեան հիմնադրութիւնէն մօտ մէկ հազարամեակ առաջ:

Նոյն այս հարցով անհրաժեշտ է մէջբերել արաբ երկու պատմաբաններու աշխատութիւնէն հետեւեալը, որոնք կը հաստատեն, Հուրի Յեբրուսացիներու Երուսաղէմի կառուցումը, «Դաւիթ ընտրեց Երուսաղէմը, որ դառնայ մայրաքաղաքը այն տարածքին, որուն կը տիրապետէին Եբրայացիք. այդ քաղաքը Յեբրուսացիներու ձեռքն էր, որոնք հուրիական ցեղախումբ մըն էին: Դաւիթ Երուսաղէմը գրաւեց հնարքով մը, իր ճէուար զօրավարը քաղաքը ներխուժեց՝ զայն ջուրով մատակարարելով»:

²¹ Արեւելո թուրքերի, Թարիխ Ալ-Բաշարիա (Մարդկութեան Պատմութիւնը-Արաբերէլեմով) Ա. Մաս, թարգմ. Նիկոլա Չիւսադա, Բէյրութ, 1981, էջ 127:

²² Ներսէս Վիրապեան, Հայ ժողովուրդի Մագուր, Լոս Անճելէս, 1993, էջ 145:

բարող աղբիւրի մը փապուղիէն: Գրաւելէ յետոյ, քաղաքը կոչեց Դաւիթի քաղաք եւ ամրացուց զայն»²³: Երուսաղէմի գրաւման մասին Դաւիթի կողմէ յիշուած է Աստուածաշունչի մէջ²⁴:

Այս առնչութեամբ, յիշենք նաեւ հայր Աբրահամի շատ հաւանական հուրիական ծագման մասին. այս հարցով շատ օգտակար է Յովհաննէս Անմարանեանի ուսումնասիրութիւնը,²⁵ որ ամբողջութեամբ կը հաստատէ, թէ Աստուածաշունչի մէջ յիշուած Ուր քաղաքը հայկական Ուրիան էր, եւ ոչ թէ Միջագետքի Ուր քաղաքը: Կան նաեւ օտար աղբիւրներ եւ ուսումնասիրութիւններ, որոնք կ'անդրադառնան հայր Աբրահամի հուրիական ծագման մասին, անոր հայրենիքը տեսնելով նոյն ինքն Ուրարտուի մէջ. այս հարցով մէջբերենք հետեւեալը. «Ուրիշ վայրեր առաջարկուած են Աստուածաշունչի Ուր քաղաքի համար, ինչպէս Ուրարտուն (Թուրքիայ) կամ Ուրիան (Խառանի հիւսիս արեւմուտքին)»²⁶:

Վերջին մէջբերման մէջ "Ուրարտուն (Թուրքիայ)", շատ աւելի ճիշդ պիտի ըլլար եթէ նշուէր ներկայիս "Թուրքիան եւ Հայաստանի Հանրապետութիւնը". քանզի Ուրարտուի կարեւոր քաղաքներէն գոնէ երեքը՝ Էրեբունի (ներկայիս Երեւան մայրաքաղաքը), Թելշեփիի եւ Արգիշտիիիիի, կը գտնուին ներկայ Հայաստանի Հանրապետութեան սահմաններէն ներս:

Այս ուսումնասիրութեան մէջ յիշուած Ուրարտուի, Ասորեստանի, Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններու տեւողութեան պատմահանգրուանները կարելի է տեսնել Գծացուցակ Թիւ 1ի մէջ:

²³. Սամի Սաիիտ էլ-Ահմադ եւ ժէմալ Ռաշիդ Ահմադ, Թարիխ էլ-Շարկ էլ-Կատիմ (Հին Արեւելքի Պատմութիւն-Արաբներէնով), Պաղտատի Համալսարան, Պաղտատ, 1988, էջ 306:

եւ The Holman Illustrated Study Bible, Tennessee 2006. p. 890.

²⁴. Աստուածաշունչ, Բ. ԹԱԳԱՒՈՒՄՅ 5:6-7:

²⁵. John Ahmaranian, The Hurro-Armenian Origins of Abraham, Pasadena, USA, 2004.

²⁶. Holman Illustrated Bible Dictionary, Tennessee, 2003, p. 1640.

ՈՒՐԱՐՏՈՒ-ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Աշխարհագրականօրէն իրարու շատ մօտիկ երկու թագաւորութիւններ, Ուրարտուն եւ Ասորեստանը՝ մէկէ աւելի պատճառներով, շատ բուռն պայքարի մէջ մտան իրար դէմ:

Հին Միջագետքի Ասորեստանի արքաներէն Ադադ-Ներարի Բ-ի (912-891 Ք.Ա.) օրով Ասորեստանը մուտք գործեց իր պատմութեան երրորդ եւ վերջին շրջանը: Այս շրջանը տեսնեց մօտ երեք դար, մինչեւ Ասորեստանի հռչակաւոր մայրաքաղաք՝ Նինուէի կործանումը 612 Ք.Ա. հիմնականօրէն բաբելոնցիներու եւ մարերու ձեռքով, ինչպէս նաեւ հայոց մասնակցութեամբ: Նինուէի վերջնական անկման հայոց մասնակցութեան մասին չենք ուզէր անդրադառնալ այստեղ՝ մեր հիմնական նիւթին չ'ընդելու համար, փափաքողները կրնան զայն գտնել մեր մէկ այլ աշխատութեան մէջ²⁷:

Ասորեստանը իր պատմութեան այս պատմաշրջանին հասաւ իր վերելքի գագաթնակէտին, եղաւ այն հզօր կայսրութիւնը, որուն արքաները իրենց զգալի կնիքը դրին գրեթէ ամբողջ Միջին Արեւելքի հին պատմութեան վրայ, ինչպէս նաեւ Աստուածաշունչի՝ Հին Կտակարանի այդ պատմահանգրուանի վրայ: Բարեբաղդաբար կամ, թէ դժբաղդաբար Ասորեստանի այս վերելքը տեղի ունեցաւ զուգահեռաբար հայոց պատմութեան՝ Ուրարտուի (Վանի թագաւորութեան) գոյութեան շրջանին. Ուրարտուն, իր երեք դար տեւող գոյութեան ընթացքին ժամանակակից եղաւ Ասորեստանի պատմութեան վերջին շրջանին, ինչպէս կարելի է տեսնել Գծացուցակ Թիւ 1ի մէջ: Այդ իրականութիւնը պատճառ հանդիսացաւ Ասորեստանի պատմական բուռն պայքարին Ուրարտուի հետ, ու հետեւաբար այդ պայքարի արձագանքները Աստուածաշունչի Հին Կտակարանի պատմութեան մէջ:

Ուսումնասիրելով երկու երկիրներու քաղաքականութիւնը՝ կարելի է նկատել, որ ընդհանրապէս թշնամական քաղաքականութիւնը կ'ուզար Ասորեստանէն եւ ոչ թէ Ուրարտունէն: Ն. Ադոնց երկու մրցակիցներու

²⁷. Պետրոս Թովմասեան, Հայկական լեոնաշխարհը եւ Միջագետքը, Երեւան, 2006, էջ 107, 108:

պայքարի մասին կը լիջէ. «Ուրարտուն Հայաստանի բարձունքներում բացում է նոր դարագլուխ: Իր սահմանները տարածելու համար թափած ջանքերում նա դէմ-դիմաց է կանգնում ասորեստանեան իմպերիալիզմին: Սկսում է մի համառ պայքար, որը չի դադարում մինչեւ երկու մրցակիցների վերջին օրը եւ ընթանում է Եփրատից մինչեւ Փոքր Զաք տարածող միջանկեալ երկար պատենշի վրայ եւ յանուն դրա յաղթահարման: Երկու հակառակորդների մրցակցությունը կազմում է երեքդարեայ պատմության մի թել, որի վրայ շարունակ են նրանց ռազմական բախտի փոփոխականությունները²⁸»:

Հարկաւոր է մատնանշել, որ այս Գլուխի ամբողջ բաժիններու պատմության մասին յիշատակություններ կան Աստուածաշունչի մէջ, որոնցմէ մաս մը պիտի նշենք: Բայց անյայտ պատճառներով Ուրարտուի կամ Արարատեան թագաւորութեան մասին՝ որեւէ յիշատակութիւն չկայ Աստուածաշունչի մէջ. թէև Ուրարտուի ներկայութիւնը զգալի էր, եւ մենք պիտի աշխատինք լուսարանել այդ ներկայութիւնը:

1. ԱՍՈՐԵՍՏԱՆԸ ՈՒՐԱՐՏՈՒԻ ՇՈՒՔԻՆ ՆԵՐՔԵԻ

Ասորեստանի նշանաւոր թագաւոր՝ Սալմանասար Գ. (859-824 Ք.Ա.) իր երկարատեւ թագաւորութեան տարիներուն կազմակերպեց 32 արշաւանքներ, որոնցմէ հինգը ուղղուած էին հարեւան Հայկական լեռնաշխարհի վրայ հիմնուած՝ նորակազմ վանի թագաւորութեան՝ ասորեստանցիներու կողմէ Ուրարտու կոչուող պետութեան դէմ: Սալմանասար Գ. Ասորեստանին շատ մօտիկ՝ նորակազմ Ուրարտուի պետութիւնը անհանդուրժելի, Ասորեստանի ընդարձակման առաջ մեծ սպառնալիք եւ լուրջ վտանգ մը սեպեց. ու հետեւաբար ան փոր ձեց շուտափոյթ մահացուցիչ հարուածը հասցնել Ուրարտուին, ու վերջնականապէս ազատուիլ անոր սպառնական գոյութիւնէն, բայց պէտք է ըսել, որ Սալմանասար Գ. չ'յաջողեցաւ այդ իրականացնել:

Բնականաբար Ասորեստանի զբաղումութիւնը իր կազմակերպած ռազմական արշաւանքներով Ուրարտուի վրայ՝ զգալի չափով տկարացուց իր արշաւանքները այլ ուղղութիւններով: Արեւմուտքի վրայ, ան կազմակերպեց արշաւանքներ, որոնցմէ երկուքի ընթացքին՝ իր դէմ գտաւ նաեւ տեղական այլ թագաւորներու հետ Իսրայէլի թագաւորը: Սալմանասար Գ. իր թիկունքը ապահով զգալէ ետք 853 Ք.Ա. արշաւեց Արեւմուտք, եւ հանդիպեցաւ տեղական տասներկու թագաւորներու միացեալ ուժերու դիմադրութեան. այդ թագաւորներէն մէկը՝ Իսրայէլի Արաաբ (874-853 Ք.Ա.) արքան էր. տես Յուցակ թիւ 1: Իսկ 841 Ք.Ա. ան դար ձեալ արշաւեց Արեւմուտք եւ պաշարեց Դամասկոսը. Իսրայէլի Հեու (852-841 Ք.Ա.) արքան ստիպուեցաւ հարկ վճարել անոր:

Երբ Ասորեստանը ի գօրու էր արշաւելու Սուրիոյ վրայ, ապա շատ հաւանաբար Իսրայէլ եւ Յուդայ կ'ենթարկուէին անոր ոտնձգութիւններուն: Իսկ երբ Ասորեստանը կ'զբաղուէր Ուրարտուի հետ իր պատմական պայքարով, կամ թէ այլ հարցերով. ան ռազմականօրէն անկարող կ'ըլլար Արեւմուտքի վրայ արշաւելու. տես Յուցակ թիւ 3:

²⁸. Նիկողայոս Ադոնց, Հայաստանի Պատմութիւն, Երեւան, 1972, էջ 68:

ՈՒՐԱՐՏՈՒ-ԱՍՈՐԵՍԱՆԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՒ ԱՍՈՐԵՍԱՆԻ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐԸ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ՎՐԱՅ

ՊԱՏԵՐԱԶՄ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԵՒ ԱՍՈՐԵՍԱՆԻ ՄԻՋԵԻ	ԱՍՈՐԵՍԱՆԵԱՆ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ՎՐԱՅ
Թուական Ք.Ա.	Թուական Ք.Ա.
859-857	853
844	849-848
833-832	845
830-828	841
823	838
781-774	806
753	743-738
743-742	734-732
735	725-721
714	

Այս Ցուցակի մէջ նշուած են Ասորեստանի արշաւանքները Արեւմտքի վրայ, եւ պատերազմները Ուրարտուի եւ Ասորեստանի միջեւ: Ընտրուած է Ք.Ա. 860-710 պատմաշրջանը, որ համապատասխան է մեր ուսումնասիրութեան նիւթի հետ: Շատ յստակ կարելի է տեսնել, թէ ընդհանրապէս Ասորեստանի կողմէ ռազմական արշաւանքները տեղի ունեցած են Արեւմտքի վրայ այն տարիներուն երբ ան զբաղուած չէր պատերազմներով Արարատ-Ուրարտուի (Վանի թագաւորութիւն) դէմ:

Մէկէ աւելի ճակատներու վրայ պատերազմելը միաժամանակ կը տկարացներ Ասորեստանի զինուորը: Այսպէս, Ասորեստանը երեսուն երկու տարիներու (837-806 Ք.Ա.) տեղողութեամբ, մէկէ աւելի պատճառներով անկարող եղաւ արշաւելու Արեւմուտք. մէջբերենք հետեւեալը, էմիլ Բրէլինգէն, «838 Ք.Ա. Սալմանասար կրկին անգամ արշաւեց Սուրիայ եւ գրաւեց Հագալի բերդաքաղաքներէն չորսը: Իր թագաւորութեան մնացած տասներորս տարիներէն ան չ'արշաւեց Սուրիոյ վրայ: Իր որդին՝ Շամշիատատ ե-ն (823-810 Ք.Ա.) ալ այդ չ'ըրաւ: Շամմուրամաթ թագուհիի (810-806 Ք.Ա.) թագաւորութեան չորս տարիներուն եւս, յառաջխաղացում չ'կար Ասորեստանի կողմէ:

Դամասկոսի Հագալը կարողացաւ վերակառուցել իր ուժը. եւ անգամ մը եւս շարժուեցաւ Իսրայէլի դէմ»²⁹:

Սալմանասար Գ-ի թագաւորած շրջանի պատմական խոշոր իրադարձութիւններէն էր՝ նոր ժողովուրդներու յայտնութիւնը Միջին Արեւելքի պատմութեան թատերաբեմին վրայ: Ասորեստանը իր օրով՝ բախումներ ունեցաւ երկու նոր ժողովուրդներու հետ, Պարսիկները՝ Չագրոշեան լեռներու տարածքին՝ Պարսուայ երկրին մէջ 844 Ք.Ա., եւ Մարերը՝ 836 Ք.Ա., որոնք կը բնակէին ներկայ Պարսկաստանի՝ Համատան շրջանի մէջ: Բնականաբար այս երկու ժողովուրդներու երեսն գալը, պատճառներէն մէկն էր, որ Ասորեստանին հեռու պահեց ժամանակի մը համար Արեւմուտքէն:

Միաժամանակ, այս հանգրուանին Ասորեստանի պայքարը Ուրարտուի դէմ՝ սաստկացաւ Ուրարտուի արքա Արամէի յաջորդներէն Սարգուրի Ա-ի (835-825 Ք.Ա.) օրով: Ռազմական բախումները Սարգուրի Ա-ի եւ Սալմանասար Գ-ի միջեւ շարունակուեցան. երկու կողմերը կը ձգտէին տիրել կարելոր վաճառականական ճանապարհներուն վրայ: Սալմանասար Գ-ի ռազմական գործողութիւններու մասին անհրաժեշտ է մէջբերել Հարի Սագգի հետեւեալ բացատրութիւնը, ուր ան Ուրարտուն այս հանգրուանին կը սեպէ Ասորեստանին մրցակից կայսրութիւն, «... կայսրութիւններէն ամէն մէկը մրցակցութեան մէջ էր իշխելու վաճառականական մայր ճանապարհներու վրայ. առաջինը Սուրեայէն մինչեւ Փոքր Ասիայ տանող ճանապարհը, եւ երկրորդը Հնդկաստանէն եւ Չինաստանէն Իրանի վրայով եկող ճանապարհը: Հետեւաբար Սալմանասարի մնացած արշաւանքները ընդգրկեցին ոչ վճռական բախումներ Ուրարտուի զօրքերուն հետ»³⁰: Բնականաբար Սալմանասար Գ. զբաղուած ըլլալով Ուրարտուի հետ, ի զօրու չէր լուրջ արշաւանքներ կազմակերպել Արեւմուտք՝ Սուրիոյ, Իսրայէլի եւ Յուդայի վրայ:

Սարգուրի Ա. Ասորեստանի դէմ բացաւ նոր ճակատ մը հիւսիսային Սուրիոյ մէջ. ան դրդեց հաթերուն ապստամբելու Ասորեստանի դէմ: Յիշենք այստեղ, որ հաթերը ինքզինքնին արիւնակից կը համարէին Ուրարտուին՝ որպէս Հայկական լեռնաշխարհի հաթեան ժողովուրդ: Այս պատճառով հաթերու համագործակցութիւնը Արարատ-Ուրարտուի հետ զարգացաւ, բնականաբար միշտ ուղղուած ըլլալով Ասորեստանի կայսերապաշտական քաղաքականութեան դէմ: Այդ հանգրուանին Սուրիոյ այն տարածքները, որ կը գտնուէին Հալէպի եւ

²⁹ Emil G. Kraeling, Bible Atlas, Second Edition, USA, p. 288.

³⁰ Հարի Սագգ, Ատամաթ Բաբլը (Բաբելոնի հզօրութիւնը-Արաբեկներով), Լոնտոն, 1962. թարգմ. Ամըր Սուլեյման Իբրահիմ, Պաղատա, 1979, էջ 116:

Դամասկոսի միջև կը կոչուէին Հաթթի. ինչ որ կը նշանակէ, թէ այդ տարածքները կը գտնուէին հաթ ժողովուրդի ազդեցութեան եւ իշխանութեան ներքեւ:

Սալմանասար Գ. ստիպուեցաւ զբաղուելու հաթերու ապստամբութիւնը խեղդելով: Ռազմականօրէն զբաղուած Ասորեստանը, հաթերու ապստամբութիւնը զսպելէ ետք՝ 830 Ք.Ա. նոր կարողացաւ իր զօրքերը շարժել Ուրարտուի դէմ: Ռազմական ընդհարումները շարունակուեցան երկու գերպետութիւններու միջեւ մինչեւ 828 Ք.Ա. տես Յուլակ թիւ 3 առանց վնասական յաղթանակի մը: Ասորեստանի սպարապետ՝ Դալան-Աշուրը բաւարարուեցաւ յալտարարելով. «Յառաջացայ մինչեւ Ուրարտուի ժողովուրդին բերդերը, կործանեցի այրեցի անոնց քաղաքները»³¹:

Այսպէս, Ասորեստանը ճախողեցաւ Հայկական լեռնաշխարհի այդ նորակազմ պետութիւնը խեղդամահ ընելու մէջ: Վանի թագաւորութիւնը փաստեց, որ ան ունէր բաւարար ներուժ պահպանելու իր գոյութիւնը Ասորեստանի կամքին հակառակ. եւ աւելին՝ ան նոյնիսկ Ասորեստանը պիտի առնէր իր շուրթին տակ, ինչ որ խաղաղութեան կարելոր պատմաշրջան մը ընծայեց Իսրայէլին եւ Յուդային, եւ Արեւմուտքի միւս փոքր թագաւորութիւններուն՝ իրենց հետեւ պահելով Ասորեստանի ոտնձգութիւններէն:

Սալմանասար Գ-ի ռազմական գործողութիւններու մասին մէջբերենք հետեւեալը Մ. Շահինէն, «Հակառակ մօտ հիսուն տարուայ շարունակական պատերազմներու, Ասորեստանի կայսրութեան սահմանները Սալմանասար Գ-ի մահուան ժամանակ 824թ. չ'ընդարձակուեցան կարքեմիշէն այնդին Եփրատի վրայ՝ արեւմուտքի մէջ, եւ Ջագրոշեան լեռնաշղթան՝ արեւելքի մէջ: Աշխարհակալութիւնները հիւսիսի մէջ, որոնցմով Սալմանասար յաճախակի պարծեցաւ, բոլորը կարճատեւ էին եւ ասպատակած Ուրարտական երկրամասերէն ոչ մէկը, ստոյգ իմաստով եղաւ մաս մը իր կայսրութիւնէն:

Թէեւ ան շատ աւելի յաջող էր Նահարինի (հիւսիսային Սիրիա) մէջ, սակայն իր աւերիչ պատերազմները Պաղեստինի, Փինիկիայի, Կիլիկիայի եւ Բաբելոնիայի մէջ. եւ ասորեստանցիներու տնտեսական գրկանքն ու տառապանքը որպէս հետեւեանք, յառաջացուցին աղետալի խռովութիւններ քաղաքներուն մէջ»³²:

Ասորեստանի ռազմական գործողութիւնները Սալմանասար Գ-ի օրով տկարացուցին երկիրը ու պատճառ դարձան ներքին խռովութիւն-

ներու արձամման: Ան չ'յաջողեցաւ իր պայքարը Ուրարտուի հետ պսակելու յստակ յաղթանակով. ընդհակառակը, ան տկարացուց իր զինուոր ու չ'կարողացաւ նոյնիսկ աչքառու յաղթանակներ ունենալ Արեւմուտքի մէջ. ինչպէս յիշեցինք, ան չ'յաջողեցաւ պարտութեան մատնելու Դամասկոսի արամեացի Հազապ թագաւորին:

Կարելի է ըսել, որ Ասորեստան երկար չ'վայելեց խաղաղութիւնը Ուրարտուի հետ, շուտով բռնկեցաւ ներքին պալատական ապստամբութիւն մը, որուն պարագլուխն էր Սալմանասար Գ-ի անդրանիկը՝ Աշուր-Տայանապալ: Այս ապստամբութեան հիմնական դրդապատճառն էր Սալմանասար Գ-ի նշանակումը իր տղուն՝ Շամսի Ատատին գահաժառանգ, ի փոխան իր անդրանիկ զաւակին՝ Աշուր-Տայանապալին:

Պալատական ապստամբութիւնը յառաջացուց ներքին քաղաքացիական պատերազմ, որ տեւեց մինչեւ 822 Ք.Ա. եւ վերջ գտաւ գահաժառանգ որդիի յաղթանակով: Շամսի Ատատ (Շամշիադադ) յաջորդեց իր հօրը՝ Սալմանասար Գ-ին, որ արդէն մահացած էր ներքին քաղաքացիական պատերազմի տարիներուն: Ու մինչ Ասորեստանը զբաղուած էր իր ներքին հարցերով, Սարդուրի Ա. լաւագոյնս օգտուեցաւ այդ տարիներէն, Հայկական լեռնաշխարհի այս նորաստեղծ պետութեան՝ ասորեստանեան կոչումով Ուրարտուի, տեղական շեշտով Վանի (Բիայնա), եւ կամ Աստուածաշունչի յիշատակութեամբ Արարատեան թագաւորութեան զօրացման աշխատանքներով:

Շամսի Ատատ Ե-ի (822-811 Ք.Ա.) մահէն ետք, իրեն յաջորդեց իր անչափահաս որդին Ատատ Նիրարի Գ-ը, բայց որովհետեւ ան ի վիճակի չ'էր պետութիւնը կառավարելու, իր խորթ մայրը՝ Բաբելոնցի Շամմուրամաթ ստանձնեց իշխանութիւնը՝ որպէս խնամակալ մինչեւ 806 Ք.Ա.: Հակառակ Շամիրամ եւ Արա Գեղեցիկ առասպել-պատմութեան մէջ յիշուած Ասորեստանի յաղթանակին, պէտք է յիշել, որ Շամիրամ թագուհին իշխած է Ասորեստանը միայն 5 տարի. իր օրով՝ Ասորեստանը գտնուած է շատ տկար վիճակի մէջ: Ասորեստանի յիշատակագրային կոթողներու մէջ, որոնք գտնուեցան Կալաթ Երկրատի (Աշուր) մէջ, գտնուեցաւ կոթող մը, որ կը կրէ Շամմուրամաթի արձանագրութիւնը. ուր գրուած է, «Շամմուրամաթի կոթող, Շամսի Ատատի թագուհին (Պալատի կինը), տիեզերքի թագաւորը, Ասորեստանի թագաւորը. Ատատ Նիրարիի մայրը, տիեզերքի թագաւորը, Ասորեստանի թագաւորը: Սալմանասարի տղուն կինը, չորս երկրամասերու թագաւորը (Աշխարհի)»³³:

³¹ Եղիա Քասուհի, Նախահայկական Հայաստան, Պէյրութ, 1950, էջ 263:

³² M. Chahin, The Kingdom of Armenia, Curzon press, UK, 2-nd edition 2001, p. 70.

³³ Daniel David Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia, Volume I Historical Records of Assyria from the earliest times to Sargon, University of Chicago, 1926, p. 260.

Սալմանասար Գ-ի մահով Ասորեստանը մտաւ իր պատմութեան տկար փուլերէն մէկուն մէջ. որուն ընթացքին ան գտնուեցաւ Ուրարտուի ազդեցութեան տակ. այս առնչութեամբ մէջբերենք հետեւեալը. «Սալմանասարի մահով Ասորեստանը մուտք գործեց տկարացման ուրիշ ժամանակաշրջան մը, որու ընթացքին ան զբաղուած էր մերձաւոր Ուրարտու թագաւորութեան կողմէ: Յառաջիկայ դարի ընթացքին միայն մէկ Ասորեստանցի թագաւոր լրջօրէն զբաղուեցաւ Պաղեստինի հարցերով: Ատատ Նիրարի Գ. (810-783 Ք.Ա.)»³⁴ մտաւ Դամասկոս, առաւ մեծածաւալ տուրքեր Բըն Հատատ Գ-էն: Հաւանաբար ան է Բ. Թագաւորաց 13:5ի մէջ յիշուած "փրկիչը", որ թողատրեց Իսրայէլին ազատելու Արամ-Դամասկոսի իշխանութիւնէն: Այսուհանդերձ, Ատատ Նիրարին տուրքեր հաւաքեց նաեւ Իսրայէլի Յովաս թագաւորէն»³⁵:

Այսպէս, Ասորեստանը Սալմանասար Գ-ի մահէն 824 Ք.Ա. մինչեւ Թիգլաթպալասար Գ-ի գահակալութիւնը 744 Ք.Ա. մօտաւորապէս ութսուն տարի, ինչպէս որ պիտի լուսարանենք, մնաց Հալկական լեռնաշխարհի վրայ հիմնուած՝ հզօրացող վանի թագաւորութեան շուրջին ներքեւ: Կարելի է ըսել, որ այժմ ուժերու հաշուեկշիռը փոխուած էր յօգուտ Ուրարտուի: Այս հարցով մէջբերենք հետեւեալը Ն. Ադոնցէն, «Սալմանասար III-ի թագաւորութիւնից մինչեւ Թիգլաթպալասար III-ի թագաւորութիւնը՝ համարեալ մէկ դար ժամանակաշրջանի համար գոյութիւն ունեն միայն աղքատ փաստեր: Ռազմական վաւերագրեր չեն պահպանուել, եւ դա սոսկ բախտի բերումով չէ, այլ զինուորական գործողութիւնների պակասութեան հետեւանքով: Այդ միեւնոյն շրջանում ուրարտական վաւերագրերը, ընդհակառակն, բաւական առատ են, ինչպէս կտեսնենք յետագայում: Դա արդէն ստոյգ նշան է, որ երկու պետութիւնների ուժերի յարաբերութիւնը փոխուել էր ի նպաստ Ուրարտուի: Իսկապէս, Սալմանասար III-ի օրով Ասորեստանի հզօրութիւնը զգալիօրէն նուազում է, մինչդեռ Ուրարտուինը՝ աճում: Դա մեզ թոյլ է տալիս զգոյշ վերաբերուել Սալմանասար III-ի կողմից Ուրարտուի կարծեցեալ ջախջախմանը»³⁶:

Ուրարտուն, Մենուայի (810-786 Ք.Ա.), օրով վերածուեցաւ հզօր կայսրութեան, որ տեսնեց մօտ 70 տարի. եւ շարունակուեցաւ իր յաջորդներու Արգիշտի Ա., Սարգուրի Բ., եւ Ռուսա Ա.-ի թագաւորութեան տարիներուն: Մենուային յաջորդեց իր որդին Արգիշտի Ա. (786-764 Ք.Ա.), որու գահակալութեան շրջանին Ուրարտուն շարունակեց իր հզօրութեան վերելքը: Ուրարտուի եւ Ասորեստանի հզօրու-

թեան վերելքները ու վայրէջքները կարելի է տեսնել Գծացուցակ թիւ 2ի մէջ. ուր նաեւ նշուած են Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններու վերելքներն ու վայրէջքները:

Արգիշտի Ա. եւ Ասորեստանի Ատատ Նիրարի Գ. (806-781 Ք.Ա.) զբաղուեցան իրենց ներքին հարցերով: Արգիշտի Ա. զբաղուեցաւ իր հօրը մահէն ետք՝ իր դէմ ապստամբած շրջանները հնազանդեցնելով, իսկ Ատատ Նիրարին զբաղուեցաւ Բաբելոնի անջատողական շարժումներուն դէմ առնելով: Ինչ կը վերաբերի Ասորեստանի եւ Բաբելոնի գրեթէ մշտական պայքարին, կարելի է զայն շատ խտացուած բացատրել, որ Ասորեստանը եւ Բաբելոնը իրարու մշտական մրցակիցներ էին. Ասորեստանը իր ռազմական հզօրութեամբ կը փորձեր Բաբելոնը գրաւել եւ առնել իր ռազմական եւ քաղաքական ազդեցութեան տակ, իսկ Բաբելոնը՝ իր մշակութային հզօրութեամբ կ'աշխատէր Ասորեստանը պահել իր շուրջին ներքեւ:

Ատատ Նիրարի Գ-ի արձանագրութիւններու մէջ կը հանդիպինք իր կատարած արշաւանքներուն Սուրիոյ եւ Պաղեստինի վրայ: Հոն որեւէ յիշատակութիւն չկայ բախումներու Ուրարտուի հետ: Ան կը յիշէ, թէ իր գահակալութեան 5-րդ տարին արշաւեց Պաղեստինի վրայ. «Հրամայեցի յառաջանալու դէպի Պալաշտու (Պաղեստին): Անցայ յորդահոս Եփրատը: (Լայնատարած, թշնամի) թագաւորները Որոնք իմ հօր՝ Շամսի Ատատի ժամանակ: Ապստամբած էին եւ (կանգնեցուցած իրենց հարկերը), իմ դաշնակիցներ՝ Աշուր, Սին, Շամաշ, Ատատ եւ Իշդար աստուածներուս հրամանով, (սարսափած) ջախջախեցի անոնց, եւ անոնք ոտքերուս ընկան: Հարկերը եւ (տուրք, անցած օրերէն աւելին), բերին Ասորեստան: Ես (ստացայ զանոնք)»³⁷:

Այս ժամանակաւոր խաղաղութիւնը Ուրարտուի եւ Ասորեստանի միջեւ շատ կարեւոր էր երկու մրցակից պետութիւններու համար՝ լուծելու իրենց այլ դժուար հարցերը, կարողանալու համար վերստին սկսելու իրենց պատմական պայքարը. այս խաղաղութիւնը հազիւ թէ տեսնեց հինգ տարի՝ (786-781 Ք.Ա.):

³⁴. Ատատ Նիրարի Գ-ի տարիները յիշուած են որոշ տարբերութեամբ մեր տեսակետէն:

³⁵. Holman Illustrated Bible Dictionary, Tennessee, 2003, p. 135.

³⁶. Նիկողայոս Ադոնց, Հայաստանի Պատմութիւն, Երեւան, 1972, էջ 92:

³⁷. Daniel David Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia, Chicago, 1926, p. 261.

2. ԻՍՐԱՅԷԼ ԵՒ ՅՈՒԴԱՅ՝ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԵՒ ԱՍՈՐԵՍԱՆԻ ՄԻՋԵՒ ԿՈՒՌԱԽՆՁՈՐ ԴԱՐՁԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՄԷՋ

Արգիշտի Ա. իր թագաւորութեան չորրորդ տարին (783 Ք.Ա.) սկսաւ իր ռազմական գործողութիւնները հարաւ-արեւմտեան ուղղութեամբ. նուաճեց Ծոփաց երկիրը (ներկայ Արաբկիրի, Բաւոյի եւ Բինգոլի շրջանները՝ Թուրքիոյ մէջ), եւ ապա Մելիտիքի (ներկայ Մալաթիայ քաղաքը Թուրքիոյ մէջ) հաթական փոքր թագաւորութիւնը. եւ առաջանալով դէպի արեւմուտք գրաւեց երկիրներ հիւսիսային Ասորիքի (Սուրիոյ) մէջ:

Այս նուաճումներով Արգիշտի Ա. Ուրարտական ազդեցութիւնը հասցուց մինչեւ Միջերկրական ծովի վաճառականութեամբ հարուստ նաւահանգիստները, եւ այդ շրջաններէն հեռու վանեց Ասորեստանի ազդեցութիւնը. տես Քարտէս թիւ 2: Արգիշտի Ա.-ի այս յաջողութիւններու մասին մէջբերենք Գուրգեն Կարապետեանէն. «Այս գրաւումները կտրեցին Ասորեստանին փոքր Ասիայից ու Ասորիքից, եւ կարծես իրականանում էր երկար ժամանակ ծրագրուած ռազմական գործողութիւնների շարքը, որով Ասորեստանը արեւելքից ու արեւմուտքից պէտք է շրջապատուեր վանի թագաւորութեան կողմից եւ չէզոքացուեր»³⁸: Այսպէս, Ուրարտուն արեւելքի եւ արեւմուտքի մէջ գրաւած կամ իր ազդեցութեան տակ առած էր բազմաթիւ երկիրներ, Ասորեստանը ստիպուած չէզոքացուած էր:

Արգիշտի Ա.-ի այս արշաւանքով, Ասորեստանի առջեւ փակուեցան փոքր Ասիայի բնական հում նիւթերու աղբիւրներուն տանող ճանապարհները³⁹. ինչ որ մեծ հարուած մըն էր Ասորեստանի հզօրութեան: Հետաքրքրական է Ռիտկէյթի այս խօսքը Ուրարտուի հզօրութեան մասին այս հանգրուանին, ուր ան վանի թագաւորութեան հզօրութիւնը կը բաղդատէ Մեծ Տիգրանի կայսրութեան հետ, «Արդարեւ, այս վաղեմի ժամանակաշրջանին, երբ Ուրարտուն համաշխարհային ուժ էր, պէտք է նկատուի Հայոց պատմութեան բարձրագոյն կէտերէն մէկը, որ կը մրցուի միայն Ք.Ա. առաջին դարի հետ, երբ Հայոց Մեծ Տիգրան թագաւորը կերտեց հսկայ բայց կարճակեաց կայսրութիւն մը, որ տարածուեցաւ հարաւ, մինչեւ Սուրեայ եւ Սուրբ երկիրը»⁴⁰:

³⁸ Գուրգեն Կարապետեան, Հայոց Պատմութեան Ուրուագներ, 1.հատոր, Երեւան 2002, էջ 224:

³⁹ Մեր Յաղթանակները, Հատոր Ա., Երեւան 2005, էջ 109, (Բաճի հեղինակ՝ Արտակ Մովսիսեան):

⁴⁰ A.E.Redgate, The Armenians, Blackwell Publishers Inc. USA, p. 5.

Արգիշտի Ա.-ի այս նոր նուաճումներով Արեւմուտքի մէջ, նոր ռազմական մը բացուեցաւ Ուրարտուի եւ Ասորեստանի միջեւ Միջերկրական ծովի հարուստ ափերուն տիրանալու համար: Հրեաստանի՝ Իսրայէլի եւ Յուդայի զոյգ թագաւորութիւնները այդ կռուախնձոր դարձած տարածքին մաս կը կազմէին, ու հետեւաբար երկու հսկաներու պայքարի զարգացումները զգալիօրէն ազդեցին անոց պատմութեան զարգացման վրայ:

Ուրարտուի վերջին յաղթանակներով Արեւմուտքի մէջ, եւ տարածքաշրջանի ռազմաքաղաքական նոր պայմաններու դասաւորման բերումով, Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւնները ինքզինքնին աւելի ապահով զգացին, որովհետեւ Ասորեստանը կը ներկայանար անոց պատմական սպառնալիքը, իսկ Ուրարտուն նոր ուժ մըն էր, որ կուգար Արեւմուտք առաջին անգամ ըլլալով. ու տակաւին յստակ չէր անոր քաղաքականութիւնը շրջանի մէջ, հակառակ Ասորեստանին, որուն լուծի տակ տառապած էին Իսրայէլը եւ Յուդան: Ուրարտուի այս մեծ յաջողութիւններու մասին Արեւելքի թուրքացիները յիշած է. «Ուրարտացիները համախմբուեցան մրցակից եւ ուժեղ պետութեան մէջ, իրենց թագաւոր Արգիշտի Ա.-ի ղեկավարութեամբ. յաջողեցան մրցակցիլ Ասորեստանցիներու հետ տիրապետելու հիւսիսային Սուրիոյ եւ արեւելեան Կիլիկիոյ վրայ: Այս շրջանները որոնք խիստ ռազմավարական կարեւորութիւն ունէին՝ կը գտնուէին Ուրարտական ազդեցութեան տակ, եւ ոչ թէ Ասորեստանէն»⁴¹:

Այսպէս Դ.-ի գահ բարձրանալով 781 Ք.Ա. վերջ գտաւ ժամանակաւոր խաղաղութեան տարիները Ուրարտուի եւ Ասորեստանի միջեւ: Շուտով բորբոքուեցաւ հին պայքարը Խուրուշկիայի վրայ, որ ռազմավարական տեսանկիւնէ շատ կարեւոր տարածք մըն էր Ասորեստանի եւ Ուրարտուի միջեւ: Խուրուշկիան կ'ընդգրկէր իր մէջ ներկայ հիւսիսային Իրաքի՝ Ջիբարի եւ Ռաուանտուզի լեռնային շրջանները, տես Քարտէս թիւ 1: Կը թուի թէ Ասորեստանցիք յաջողեցան իրենց անսովոր նկուն քաղաքականութեամբ՝ իրենց դաշնակից դարձնել Խուրուշկիան, որովհետեւ կը մտահոգուէին Արեւմուտքի մէջ Ուրարտուի վերջին նուաճումներէն: Ասորեստանի մերձացումը Խուրուշկիային, Արգիշտի Ա.-ին մղեց իր հզօր բանակով արշաւելու Խուրուշկիայի վրայ 781 Ք.Ա.: Արիւնալի պատերազմը տեղի ունեցաւ Ասորեստանի եւ Ուրարտուի միջեւ վերին Չաբ գետի աւազանի մէջ. Արգիշտի Ա. յաղթեց եւ կրկին գրաւեց հին կռուախնձոր՝ Խուրուշկիան:

⁴¹ Արեւելքի թուրքացի, Թարիխ Ալ-Բաշարիա (Մարդկութեան Պատմութիւնը-Արաբերէնով) Ա. մաս, Պէյրութ, 1981, էջ 128:

Ուրարտուի այս վերջին յաղթանակը Ասորեստանը մղեց արագ շարժուելու եւ իր կողմը գրաւելու իր հին թշնամի Մաննա եւ Պարսուա երկիրները: Մաննա եւ Պարսուա կը գտնուէին Պարսկաստանի Ուրմիոյ լիճի շուրջ, տես Քարտէս թիւ 2, որոնք դաշնակցեցան Ասորեստանի հետ՝ Ուրարտուի դէմ: Դէպքերու այս զարգացումով բռնկեցաւ նոր պատերազմ, մէկ կողմէն հզօրացող Ուրարտուի, միւս կողմէն Ասորեստանի եւ իր դաշնակից Մաննա եւ Պարսուա երկիրներու միջեւ:

Այս նոր պատերազմը եղաւ երկարատեւ, ու տեւեց մօտաւորապէս եօթ տարի 781–774 Ք.Ա.: Մէջբերենք Եղիա Քասունիէն, թէ ինչպէս վանի թագաւորութիւնը այս եօթը տարիներուն արձանագրեց զգալի յառաջացում Ասորեստանի հաշուին, «Ասորեստանի արձանագրութիւններէն կ'իմանանք թէ այս պատերազմը գրեթէ անընդհատ եօթը տարի տեւեց, ու թէեւ անոնք մամրամասնութիւններ չեն տուած, սակայն յայտնի կը ցուցնեն, թէ յաղթանակը գրեթէ միշտ Ուրարտացւոց կողմը կը մնար. քանզի կը կարդանք, թէ պատերազմը հիւսիսէն՝ Մաննայի երկրէն սկսաւ Ն.Ք. 781ին, իսկ վերջին ճակատամարտները Ջագրոս լեռանց ստորոտը՝ Ջիմրիի կամ Նամրիի երկրին (Սիւլէյմանիյէ սանճագ) մէջ եղած կը յիշուին Ն.Ք. 774ին, ըսել է թէ որչափ Ասորեստանցիք ու իրենց դաշնակիցները յաղթուելով ետ քաշուեցան դէպի հարաւ, նոյնչափ Ուրարտացիք յառաջ խաղացին»⁴²:

Ասորեստանի եւ Ուրարտուի միջեւ այս պատերազմները ունէին տնտեսական խոր բնոյթ եւ մեծ ազդեցութիւն Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններու տնտեսութեան վրայ, որովհետեւ առեւտուրի փոխադրութիւնը կ'ընթանար տարածքաշրջանէն մինչեւ Սուրիոյ եւ Պաղեստինի Միջերկրականի նաւահանգիստները: Այսպէս, Մաննայի երկրի վրայ տիրանալու համար յիշեալ պատերազմները՝ բաւական մեծ նշանակութիւն ունեցան տարածքաշրջանի վաճառականութեան վրայ: Այս հարցի շուրջ Մ. Շահին կը բացատրէ. «Ռազմական այն ուժը որ կը տիրէր Մաննայի թագաւորութեանը Ուրմիոյ լիճէն հարաւ, եւս կը թելադրէր այն ուղղութիւնը՝ որմով կարաւանները կը ճամբորդէին. եւ կ'ապահովէր տնտեսական բարօրութիւնը այն երկիրին, որ կը վերահսկէր այդ առեւտուրը: Երբ Ասորեստանը կը վերահսկէր Մաննային, առեւտուրի փոխադրութիւնը կ'ընթանար Ռաուանտուզով՝ Նինուէ եւ ալդպէս մինչեւ Սուրիոյ եւ Պաղեստինի Միջերկրականի նաւահանգիստները: Երբ Ուրարտուն կը գրաւէր Մաննան, կամ երբ ան ռազմական եւ

դիւանագիտական ճնշում կը բանեցնէր Մաննայի վրայ, կարաւանները կ'ուղեւորուէին հիւսիս, Ուրմիոյ լիճի արեւմուտքը, դէպի Վանայ լիճ եւ Թուշքա, Մալագկերտ, Էրզրում եւ Տրապիզոնտ, Սինոպ եւ այլ Սեւ ծովի հարաւային նաւահանգիստները. ուրկէ նաւերը կը նաւարկէին դէպի Հելոսպոնտ եւ Միջերկրական: Այսպէս, վճարուելիք հարկերը, տուրքերը եւ այլ տեսակի եկամուտները ուղղակի կամ անուղղակի կ'երթային այն երկրի զանձարանը, որու վրայով հազարաւոր վաճառականներ եւ իրենց ծառաները ու ապրանքները կ'անցնէին»⁴³:

Իսրայէլի եւ Յուդայի փոքրիկ թագաւորութիւններու քաղաքական այս նոր կացութիւնը, որպէս տարածքաշրջանի հզօր երկու կայսրութիւններու՝ Ուրարտուի եւ Ասորեստանի միջեւ կռուախնձոր տարածք, տեւեց մօտ մէկ դար եւ աւելին: Այդ կը ներկայանայ այս գիրքով մեր շօշափած կարեւոր նիւթերէն մէկը:

⁴² Եղիա Քասունի, Նախահայկական Հայաստան, Պէյրութ, 1950, էջ 353:

⁴³ M. Chahin, The Kingdom of Armenia, London, 2001, p. 120.

3. ԱՐԳԻՇՏԻ Ա.—Ի ԱՐՇԱՒԱՆՔԸ ՆԻՆՈՒԷԻ ՎՐԱՅ ԵՒ ՅՈՎՆԱՆ ՄԱՐԳԱՐԷԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Եօթը տարիներ տեւող ռազմական գործողութիւնները երկու հսկաներու միջեւ, վերջ գտան Ուրարտուի զգալի յաղթանակով. անոր բանակը շարունակեց իր յաղթական արշաւանքը Ասորեստանի խորքը. այժմ Արգիշտի Ա.—ի թիրախն էր հզօր Ասորեստանի Քալխու մայրաքաղաքը: Ասորեստանեան բանակը իր բոլոր ուժերը հաւաքելով՝ Շամաշիլու զօրավարի ղեկավարութեամբ, որոշեց մղել վերջնական ճակատամարտը մայրաքաղաքը փրկելու: Սպասուած ճակատամարտը տեղի ունեցաւ 774 Ք.Ա. Նինուէ քաղաքէն 25 մղոն դէպի հիւսիս, Երկայ իրաքեան Տրինոգ քաղաքի մօտ: Վերջապէս ասորեստանցիք յաջողեցան կասեցնել Արգիշտիի արշաւանքը եւ Ասորեստանը փրկուեցաւ այդ մեծ վերահաս վտանգէն:

Աստուածաշունչի՝ Հին Կտակարանի մէջ յիշուած է Յովնան մարգարէի պատմութիւնը, թէ ինչպէս Յովնան չ'ուզեց կատարել Աստուծոյ հրամանը, երթալ Նինուէ եւ քարոզել չարացած բնակիչներուն եւ անոնց զգուշացնելու Աստուծոյ դատաստանէն: Ըստ Աստուածաշունչի, Յովնան Տիրոջը երեսէն փախաւ Թարսիս: Ժամբան ծովը նետուեցաւ, եւ կէտ ձուկը Յովնանին կուլ տուաւ. ան ձուկի փորին մէջ մնաց երեք օր ու երեք գիշեր. ապա Տիրոջը հրամանով փրկուեցաւ ու գնաց Նինուէ, ուր քարոզեց ըսելով. «Դեռ քառասուն օր կայ, եւ Նինուէն պիտի կործանուի»⁴⁴:

Յայտնի պատմագէտ Եղիա Քասունի՝ Ասորեստանի մայրաքաղաք Նինուէի ապրած այս դժուարին ժամանակները (774 Ք.Ա. Արգիշտի Ա.—ի արշաւանքը) կը նույնացնէ Աստուածաշունչի Յովնան մարգարէի առաքելութեան, «Դեռ քառասուն օր կայ» ի հետ: Եղիա Քասունի կը յիշէ, «Ես կուզէի այս գերազանց ճգնամամի օրերուն դնել Յովնան մարգարէին առաքելութիւնն ի Նինուէ: Չարմանալի չէ որ Նինուէի մարդիկն Աստուծոյ հաւատային, ծոմապահութիւն քարոզէին եւ անոնց մեծէն պզտիկը քուրճ հագան. չարմանալի չէ որ երբ այս խօսքը թագաւորին հասաւ, ան ալ իր աթոռէն իջաւ եւ վրայէն արքայական պատմունքանը հանելով քուրճ հագաւ ու մոխրի վրայ նստաւ. չարմանալի չէ որ թագաւորին ու նախարարներուն հրամանով մունետիկ կանչեց որ մարդիկ եւ անասունք ծոմապահութեամբ, զղջումով ու ապաշխարութեամբ Աստուծոյ ողորմութիւնը հայցեն»⁴⁵: Եւ համաձայն

Աստուածաշունչի պատմութեան, Աստուած ներեց Նինուէի բնակչութեան. «Աստուած անոնց գործերը տեսաւ, որ իրենց չար ճամբաներէն դարձան, ուստի՝ Աստուած գթաց ու այն չարիքը, որ անոնց վրայ պիտի բերէր, չբերաւ»⁴⁶:

Աստուած ներեց Ասորեստանի Նինուէ քաղաքի բնակչութեան, Ուրարտուի բանակը պարտուած նահանջեց, եւ Նինուէն կործանելու վտանգը փարատեցաւ:

Այստեղ անհրաժեշտ է լուսաբանել հետեւեալը, Արգիշտի Ա.—ի արշաւանքը Ասորեստանի Քալխու մայրաքաղաքին վրայ էր, որ լեւտագային կոչուեցաւ Նամրուտ: Ան կը գտնուէր Նինուէի հարաւին՝ Տիգրիսի ափին, Երկայ Մուսուլ քաղաքէն մօտ 30 կմ. դէպի հարաւ—արեւելք: Յիշեալ արշաւանքին ժամանակ մայրաքաղաքն էր Քալխուն, ան մայրաքաղաքն էր սկսեալ Աշուր Նասըրպալ Բ.—էն (884–859 Ք.Ա.) մինչեւ Սարգոն Բ. (722–705 Ք.Ա.): Իսկ Նինուէն մայրաքաղաք հռչակուեցաւ անոր յաջորդի Սինհարիբի (Սենքերիմի) (705–681 Ք.Ա.) ժամանակ ու մնաց մայրաքաղաք մինչեւ քաղաքի վերջնական անկումը 612 Ք.Ա.: Աստուածաշունչի մէջ արշաւանքը յիշուած է Նինուէի վրայ, որովհետեւ ան աւելի հռչակաւոր էր, եւ շատ հեռու չէր Քալխու մայրաքաղաքէն:

Այս առնչութեամբ յատկանշական է յիշել, որ Յովնան մարգարէի այս առաքելութեան մասին խօսած է նոյն ինքն Աստուծոյ Որդին՝ Յիսուս Քրիստոս, եւ այդ մեզի հասած է երկու Աւետարանիչներու՝ Մատթէոսի եւ Ղուկասի կողմէ, մէջբերենք այստեղ Մատթէոսէն. «38 Այն ատեն դպիրներէն ու փարիսեցիներէն ոմանք իրեն ըսին. «Վարդապետ, կուզենք քեզմէ նշան մը տեսնել»: 39 Անիկա պատասխան տուաւ ու անոնց ըսաւ. «Չար եւ շնացող ազգը նշան կուզէ: Ուրիշ նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը: 40 Քանզի ինչպէս Յովնան երեք օր ու գիշեր կէտ ձուկին փորին մէջ մնաց, այնպէս Որդին մարդոյ պիտի մնայ երկրի սրտին մէջ երեք օր ու երեք գիշեր: 41 Նինուէի մարդիկը դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի ելլեն ու պիտի դատապարտեն ասիկա, վասն զի Յովնանի քարոզութիւնովը զղջացին: Ահա Յովնանէն մեծ մէկը կայ հոս: 42 Հարաւի թագուհին դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի ելլէ ու պիտի դատապարտէ ասիկա, վասն զի ինք երկրի ծայրէն եկաւ Սողոմոնին

⁴⁴. Աստուածաշունչ, ՄԱՐԳԱՐԷԻՈՒԹԻՒՆ ՅՈՎՆԱՆՈՒ, 3:4:

⁴⁵. Եղիա Քասունի, Նախահայկական Հայաստան, Պէյրութ, 1950, էջ 353:

⁴⁶. Աստուածաշունչ, ՄԱՐԳԱՐԷԻՈՒԹԻՒՆ ՅՈՎՆԱՆՈՒ, 3:10:

իմաստութիւնը լսելու. եւ անա Սողոմոնէն մեծ մէկը կայ հոս»⁴⁷: Նման վկայութիւն մը կարելի է գտնել Ղուկասէն⁴⁸:

Արգիշտի Ա-ի անապարանօր նահանջը Ասորեստանէն չի վերագրուիր միայն իր ռազմական անյաջողութեանը տեղի ունեցած ճակատամարտին, այլ ուրիշ շատ անմիջական եւ ստիպողական պատճառի մը, որն էր Արաքս գետի աւազանի իշխաններուն կազմակերպած մեծ ապստամբութեանը. անոնք ապստամբեցան օգտուելով այն պատեհն առիթէն, երբ Արգիշտի Ա. խիստ զբաղուած էր իր վերոյիշեալ արշաւանքով: Արգիշտի Ա. իր բանակով քաշուեցաւ Ասորեստանէն, եւ արշաւեց այդ ապստամբ իշխաններու վրայ, ու մեծ խստութեամբ խեղդեց վտանգաւոր ապստամբական շարժումը: Յաջորդ տարին 773 Ք.Ա. Արգիշտի Ա. չ'շարժուեցաւ Ասորեստանի դէմ՝ իր կիսատ մնացած արշաւանքը շարունակելու, որովհետեւ ան ստիպուեցաւ զբաղուիլ ուրիշ այլ հարցերով, որոնք աւելի կարեւոր էին Վանի թագաւորութեան ապահովութիւնը պահպանելու համար:

Յովնան մարգարէի ժամանակաշրջանը եղած է Ք.Ա. 8-րդ դարը, «Իսրայելացի մարգարէ, որն ըստ երևոյթին ապրել է Ք.Ա. 8-րդ դարում»⁴⁹: Ուրիշ աղբիւր մը Յովնանի մարգարէութեան շրջանը կը սահմանափակէ 786-746, մօտ քառասուն տարի⁵⁰: Յովնան մարգարէն ժամանակակից էր Իսրայէլի Յերոբոամ Բ. (782-753) թագաւորին ինչպէս, որ յիշուած է Աստուածաշունչի մէջ⁵¹:

Յովնան մարգարէի պատմութեամբ Աստուած կը յստակացնէ, թէ իր ողորմութիւնը բոլոր մարդկութեան է, միայն Հրեաստանի՝ Իսրայէլի եւ Յուդայի ժողովուրդներու համար չէ: Յովնան փորձեց անհնազանդիլ Աստուծոյ հրամանին՝ Հրեաստանի հակառակորդ ասորեստանցիներու հռչակաւոր Նինուէ քաղաքը չ'երթալով, եւ Աստուծոյ խօսքը հոն չ'քարոզելով: Յովնան չէր ուզէր, որ Հրեաստանի թշնամիները ապաշխարէին եւ Նինուէն, որ անաւոր չարիքներ գործած էր Իսրայէլի եւ Յուդայի դէմ, փրկուէր: Բայց Աստուծոյ կամքը եղաւ ի վերջոյ: Ու կարելի է ըսել, թէ ինչպէս Տէրը գործածեց Յովնան մարգարէն, դրկելով Ասորեստան քարոզելու համար, նոյնպէս Ան գործածեց Ուրարտուի

⁴⁷ Աստուածաշունչ, ՄԱՏԹԵՈՍ 12:38-42:

⁴⁸ Աստուածաշունչ, ՂՈՒԿԱՍ 11:29-32:

⁴⁹ Աստուածաշունչի Հանրագիտարան, 1999, էջ 206: Եւ The Timechart of Biblical History, 2000, page 21.

⁵⁰ The Holman Illustrated Study Bible, Tennessee, 2006, p.925.

⁵¹ Աստուածաշունչ, Դ. ԹԱԳԱՆՈՐԱՅ 14:25:

Արգիշտի Ա-ին անոր զօրքը առաջնորդելով Ասորեստանի վրայ, որպէսզի ասորեստանցիները վախճան Տիրոջը պատիժէն եւ մեղանչէն:

Այս բաժնի վերջաւորութեան կարելի է յիշել, որ Ուրարտուի եւ Ասորեստանի պայքարի կեդրոնացումը, իրենց երկուքի միջեւ գտնուող տարածքներու մէջ, ժամանակաւորապէս Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւնները հեռու պահեց որեւէ սպառնալիքներէ, եւ օգնեց անոնց երկրորդ Ոսկեդարի կերտման:

4. ԻՄՐԱՅԷԼԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ՈՍԿԵԴԱՐԸ Ի ՀԵՏԵՒԱՆՔ ՌԻՐԱՐՏՈՒԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ

Բնականաբար Աստորեստանի այս պարտուողական վիճակի, տարիներուն, ի հետեւանք Ուրարտուի ռազմական յաջողութիւններուն՝ Հրեաստանի երկու թագաւորութիւնները ապրեցան խաղաղ շրջան մը, Իսրայէլի թագաւոր՝ Յերոբոամ Բ. (782-753 Ք.Ա.) եւ Յուդայի թագաւոր՝ Ամասիայ (796-767 Ք.Ա.) եւ իր յաջորդ Ազարիայի (767-740 Ք.Ա.) թագաւորութեան տարիներուն: Այս պատմական հանգրուանին ըստ Աստուածաշունչի պատմութեան որեւէ ասորեստանեան արշաւանք տեղի չ'է ունեցած Հրեաստանի վրայ:

Պատմութեան մէջ արձանագրուած է, թէ հրեայ ժողովուրդի Առաջին Ոսկեդարը տեղի ունեցաւ Դաւիթ թագաւորի օրով, երբ ան հիմնեց հրեական կայսրութիւնը, որ տարածուեցաւ Սուրիոյ Համաթ քաղաքէն մինչեւ Եգիպտոսի սահմանները. ու տեւեց մօտաւորապէս ութսուն տարի: Հրեական այս կայսրութիւնը քայքայուեցաւ Սողոմոն Իմաստունի մահէն ետք, ու վերջ գտաւ Առաջին Ոսկեդարը, երբ միասնական պետութիւնը բաժանուեցաւ երկու մասի, Իսրայէլի եւ Յուդայի:

Մօտաւորապէս մէկ ու կէս դար ետք, հրեայ ժողովուրդը ձեռք բերաւ իր երկրորդ Ոսկեդարը տես Գծացուցակ թիւ 2: Մէջբերենք հետեւեալը, ուր հեղինակները խօսելէ ետք Առաջին Ոսկեդարի մասին, կը յիշեն երկրորդը, «Թէեւ այս կայսրութիւնը քայքայուեցաւ մօտ ութսուն տարի իր հիմնադրութիւնէն ետք եւ վերակենդանացաւ միայն երեսուն տարուայ համար Յուդայի՝ Ազարիայի եւ Իսրայէլի՝ Յերոբոամ Բ-ի ժամանակ (785-750 Ք.Ա.)»⁵²:

⁵² Chaim Herzog & Mordechai Gichon, Battles of the Bible, Barnes & Noble, New York 2006, p. 97.

Հրեայ ժողովուրդի Երկրորդ Ոսկեդարը կը սահմանափակուի 785–750 տարիներով. ինչ որ համապատասխան է Ուրարտուի երկու հզոր տիրակալներու Արգիշտի Ա–ի եւ Սարգուրի Բ–ի տարիներուն: Այս պարզ զուգահեռությունն մը չէր, որ տեղի ունեցաւ. փորձենք լուսաբանել:

Յիշեալ հանգրուանին, Միջին Արեւելքի մէջ ամենահզոր ուժը հանդիսացող Ասորեստանը տկարացած էր, ինչպէս պարզեցինք. միւս կողմէ, Ուրարտուն հզօրանալով վերածուած էր կայսրութեան, եւ իր հզոր զինուժի ազդեցութեամբ Ասորեստանը հեռացուցած էր Արեւմուտքէն:

Ընդհանուր քաղաքական վիճակը լաւագոյն առիթը ընծայեց հրեական երկու թագաւորութիւններուն՝ Իսրայէլի եւ Յուդայի, որոնք շտապեցին օգտուելու ընծայուած պատեհ առիթէն. եւ առաջինի ղեկավարութեամբ (Իսրայէլ) վերագրաւելու նախկին հրեական կայսրութեան տարածքները: Մէջբերենք նոյն աղբիւրէն, «Միախմբուած իշխանութեան տարիները Յերոբոամի եւ Յուդայի Ազարիային կը համարուին որպէս բիբլիական Իսրայէլի Երկրորդ Ոսկեդարը: Յերոբոամ գրաւեց Դամասկոսը եւ վերահաստատեց իր սահմանը Լիբանանէն մինչեւ Համաթը՝ Որոնդէսի վրայ: Իր տէրութեան մօտաւորապէս քառասունհինգ տարիներու ընթացքին, հրեաները, ինչպէս եւ իրենց հարեւանները, համակերպուեցան այն մտքին, թէ Հրեաստանը ամենայնառաջագէտ ուժն էր Սուրիոյ մէջ»⁵³:

Հրեայ ժողովուրդի Երկրորդ Ոսկեդարը կարճատեւ էր, նոյնիսկ կէս դար չ'տեսց. բայց ան եկաւ փաստելու, որ հրեայ ժողովուրդը ունէր բաւարար ներուժ՝ Առաջին Ոսկեդարէն մօտ մէկ ու կէս դար ետք՝ ձեռք բերելու իր Երկրորդ Ոսկեդարը, այն ժամանակ երբ մենք (Ասորեստանն ու Ուրարտուն) զբաղուած էինք. եւ տարածքաշրջանը գերծ էր Ասորեստանի ոտնձգութիւններէն:

Կարելի է ըսել, որ եթէ Ասորեստանը 8–րդ դարի կէսին չ'կերտէր իր ընդհանուր պատմութեան մէջ հզօրութեան գագաթնակէտը. ապա Իսրայէլի եւ Յուդայի պատմութիւնները այլ ձեւ կը գրուէին: Պէտք է մատնանշել, որ Երկրորդ Ոսկեդարի կերտումը Ասորեստանին յստակացուց, որ հրեական այդ երկու փոքրիկ թագաւորութիւններէն աւելի վտանգաւորը Ասորեստանի ապագայի ձեռնարկներուն համար՝ Իսրայէլն էր, եւ ոչ թէ Յուդան: Հետեւաբար Ասորեստանը, երբ վերագտաւ իր ուժերը Թագադար Պադասար Գ–ի գահակալութեամբ 745 թ.Ա. եւ

սկսաւ հզօրանալ անոր յաջորդներու օրով, մահացուցիչ հարուածը հասցուց Իսրայէլին 721 թ.Ա., եւ ոչ թէ Յուդային, ինչպէս որ պիտի տեսնենք յաջորդ էջերուն մէջ:

Հրեայ ժողովուրդին Երկրորդ Ոսկեդարին վերջ տրուեցաւ երբ Ուրարտուն այլեւս Ասորեստանին լուրջ ախոյեան մը ըլլալէն դադրած էր. մէջբերենք հետեւեալը, «Թագադար Պադասար Գ–ի (745–727 թ.Ա.) հզօրացումը Ասորեստանի մէջ, շարունակուելով Սարգոն Բ–ով (721–705 թ.Ա.), ճնշեց որեւէ քաղաքական ձգտումներ որ Ուրարտուն կարելի էր ունենար տարածքաշրջանի մէջ»⁵⁴:

Ինչ որ տեղի ունեցաւ Ասորեստանի մէջ Թագադար Պադասար Գ–ի գահակալութեամբ, որուն հետեւանքով Ասորեստանը կերտեց իր պատմութեան վերջին հզօրացումը, ինչպէս որ պիտի անդրադառնանք՝ ունեցաւ իր բացասական ազդեցութիւնը Իսրայէլի եւ Յուդայի վրայ: Կարելի է ըսել, որ Իսրայէլի եւ Յուդայի համար աւելի ձեռնառու պիտի ըլլար, եթէ Ասորեստանը տկար մնար եւ Ուրարտուն հզօրանար, քանի որ Ուրարտուի որդեգրած քաղաքականութիւնը աւելի հաւասարակշռուած էր, հակառակ Ասորեստանի քաղաքականութեանը, որ ընդհանրապէս ծայրահեղ էր:

⁵³ Chaim Herzog & Mordechai Gichon, Battles of the Bible, New York, 2006, p.193.

⁵⁴ Holman Illustrated Bible Dictionary, Tennessee, 2003, p. 96.

5. ԱՍՈՐԵՍԱՆԸ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԸ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐ ԸՆԴԴԵՄ ՈՒՐԱՐՏՈՒՆ ԵՒ ԴԱՄԱՍԿՈՍԻՆ

Մօտ եօթ տարի տեւող (781-774 Ք.Ա.) երկարատեւ ռազմական գործողութիւններէ ետք, Ասորեստանն եւ Ուրարտուն եկան այն համոզման, որ ի վիճակի չէին իրարու մահացուցիչ վերջնական հարուածը հասցնելու: Կը թուի, թէ անոնք եկան այն եզրակացութեան, թէ պայքարի դաշտը պէտք էր, որ հեռացուէր իրենց անմիջական սահմաններէն դէպի հեռաւոր տարածքներ, ուր իւրաքանչիւր կողմ պիտի աշխատէր տկարացնել հակառակորդի ռազմական կարողութիւնները. եւ միայն այդ ընելէ ետք, պիտի յաջողէր վերջնական մահացուցիչ հարուածը հասցնել՝ արդէն իսկ ուժասպառ եղած իր պատմական ոսոխին: Բնականաբար, պայքարի երկու դաշտեր յառաջացան, արեւելքի եւ արեւմուտքի մէջ. մեզ հետաքրքրողն էր Ուրարտուի եւ Ասորեստանի պայքարի դաշտը Արեւմուտքի մէջ, ուր կը գտնուէին Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւնները:

Արեւմուտքի պայքարի դաշտը եղաւ Սուրիոյ եւ անոր յարակից տարածքները, այս հարցով մէջբերենք հետեւեալը Գուրգեն Կարապետեանէն. «Արգիշտիի պնդումը, որ աստուած իրեն ու իր յաջորդներին տուեց Ասորեստանը, տեղիք է տալիս կարծելու, որ թուլանալով՝ Ասորեստանը ստիպուած էր հարկ մուծել: Սրա ապացոյցը կարող է համարել այն, որ Ասորեստանն այլեւս չի դիմադրում Արգիշտիի առաջինին, այլ ակտիւացնում է իր քայլերն Ասորիքի ու իրենից հարաւ ընկած երկրների դէմ»⁵⁵: Յիշուած Ասորիքէն հարաւ եղած երկիրներու շարքին էին, մեզ հետաքրքրող Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւնները:

Նայելով Քարտէս թիւ 1՝ կը տեսնենք, որ հեռաւորութիւնը Իսրայէլի Սամարիա մայրաքաղաքէն մինչեւ Դամասկոս, աւելի կարճ է բաղդատելով Ուրարտուի մայրաքաղաք՝ Տուշպայէն մինչեւ Նինուէ. աւելին, վերջինս խիստ լեռնային է եւ ռազմական արշաւանքներու համար շատ դժուարին. իսկ Սամարիոյ եւ Դամասկոսի միջեւ եղած տարածքները թէեւ լեռնային են, բայց ոչ շատ խիստ:

Այս պատմահանգրուանին Ուրարտուի նուաճումները Արեւմուտքի մէջ ունեցան իրենց դրական ազդեցութիւնը Ասորեստանի եւ Իսրայէլի յարաբերութիւններու վրայ. այս հարցի առնչութեամբ լաւագոյն օրինակն էր Դամասկոսի գրաւումը Իսրայէլի Յերոբովամ Բ-ի (782-753

Ք.Ա.) կողմէ. մէջբերենք հետեւեալը Հարփըր Քօլլինսէն, «Դէպի հիւսիս Ուրարտուի թագաւորութիւնը, կեդրոնացած էր Վանայ լիճի մօտ, կը զարգանար հզօր ուժ դառնալով: Այս հակազդեց Ասորեստանի վրայ: Ք.Ա. 8-րդ դարի սկիզբին Ուրարտուի ընդլայնումը դէպի Արեւմուտք տկարացուց Ասորեստանի վերահսկողութիւնը Սուրիոյ վրայ, եւ հաւանաբար մղեց Ասորեստանը թոյլատրելու ուժեղ Իսրայէլ մը որպէս հակակշիռ իր գլխաւոր հարաւային հակառակորդին՝ Դամասկոսին. անհաւանական չէր որ Դամասկոսի գրաւումը Իսրայէլի Յերոբովամ Բ-ի կողմէ (Դ. Թագաւորաց 14:28) ունեցաւ Ասորեստանի գործօն քաջալերանքը, մանաւանդ որ ինքը եւս յարձակեցաւ այդ քաղաքին վրայ 773»⁵⁶:

Ասորեստանի թագաւորը քաջալերեց Իսրայէլի Յերոբովամ Բ-ին Դամասկոսը գրաւելու մէջ, որովհետեւ վերջինս բարեկամութիւն հաստատած էր տարածքին մէջ նոր ուժ ներկայացնող Ուրարտուի հետ: Ինչպէս եւ Ասորեստանը բարեկամացաւ Իսրայէլի թագաւորութեան հետ, որովհետեւ ան երկարատեւ եւ դարեր տեւող պայքարի պատմութիւն ունէր Դամասկոսի արամեական թագաւորութեան հետ: Միւս կողմէ Ասորեստանը կարիք ունէր սիրաշահելու Արեւմուտքի ուժերը՝ Ուրարտուի դէմ:

Պէտք է ընդգծել, որ Ասորեստանի եւ Իսրայէլի դաշնակցութիւնը ժամանակաւոր բնոյթ ունէր. այդ մարտավարական քայլ մըն էր, եւ ոչ թէ երկարատեւ ծրագրուած ռազմավարութիւն. պիտի տեսնենք, որ Ասորեստանը այս դէպքէն (773 Ք.Ա.) մօտ կէս դար ետք, գրաւեց Սամարիա քաղաքը եւ կործանեց Իսրայէլի թագաւորութիւնը 721 Ք.Ա.:

Բնականաբար Դամասկոսն ալ ունէր իր հաշիւները. ան մէկէ աւելի պատճառներով պիտի բարեկամանար Ուրարտուի հետ, քանի որ Սուրիոյ հիւսիսային տարածքներուն եւ Սիրիայէն դէպի հիւսիս գոյութիւն ունէին հախճական փոքրիկ իշխանութիւններ, որոնք կայսրութիւն դարձած Վանի թագաւորութեան (Ուրարտու) դաշնակիցներն էին, եւ հինգ դարերէ աւելին մեծ ազդեցութիւն ունէին Սուրիոյ վրայ:

Դամասկոսը իր կողմէ պէտք ունէր ուժեղ զինակիցներու՝ պաշտպանելու համար իր գոյութիւնը ընդդէմ Ասորեստանի ոտնձգութիւններուն: Իսկ Եգիպտոսը այս պատմահանգրուանին տկար էր, եւ իր ռազմական ու քաղաքական ազդեցութիւնը կը բացակայէր Սուրիայէն: Որպէս հզօր ուժ տարածքին մէջ ներկայ էր Վանի թագաւորութիւնը, որ իր ազդեցութեան տակ առած էր այդ տարածքի հարստութեան աղ-

⁵⁵ Գուրգեն Կարապետեան, Հայոց Պատմութեան Ուրուագծեր, 1.հատոր, Երեւան, 2002, էջ 227:

⁵⁶ Harper Collins. Atlas of the Bible, Michigan 1999, P. 108.

բիւրը՝ վաճառականութիւնը. «Արգիշտիի իշխանութիւնը ականատես եղաւ Ասորեստանի ամբողջական նուաստացմանը: Անոր ռազմական հմայքը ամբողջովին կործանուած էր: Ան կորսնցուց իր իշխանութիւնը հիւսիսային Իրանէն եկող առեւտրական ճամբաներուն վրայ. եւ արեւմուտքի մէջ՝ ան կորսնցուց մեծ Սուրեական տարածքներ, ինչպէս նաեւ արժեքաւոր երկրամասեր կարկէմիշէն հիւսիս եւ արեւմուտք: Այս տարածքները ամրացուած եւ կառավարուած էին իր մրցակիցի, Ուրարտուի կողմէ: Հետեւաբար, Ասորեստանը կորսնցուց Փոքր Ասիոյ հարուստ մետաղներու վաճառականութիւնը:

Փոքր Ասիան երկկողմանի առեւտրական ճանապարհները եւս գտնուեցան վանի հսկողութեան տակ: Այս տնտեսական աղետները ի հետեւանք Վանեան յաղթանակներուն, պատճառեցին ընդհանուր խզումներ եւ տագնապներ Ասորեստանեան քաղաքականութեան մէջ, որոնք յեղափոխութիւն յառաջացուցին Սուրիոյ մէջ, եւ ապստամբութիւններ Ասորեստանի տարբեր քաղաքներու մէջ: Արարատը⁵⁷ այժմ կանգնեցաւ որպէս գլխաւոր ուժ Արեւմտեան Ասիոյ մէջ»⁵⁸: Այս մէջբերման մէջ, կարելի է նկատել, որ հեղինակը կը գործածէ Ուրարտու, Վանեան, եւ Արարատ անունները նոյն իմաստով միաժամանակ:

Այսպէս, վանի թագաւորութիւնը եւ Ասորեստանը կը փորձէին իրենց դաշնակից ուժեր գտնել՝ այդ տարածքի մէջ. այս պարագային, յիշեալ պատճառներով՝ Ասորեստանը մօտեցաւ Իսրայէլին, իսկ Ուրարտուն Դամասկոսին:

Ուրարտուն Արգիշտի Ա-ի գահակալութեան վերջաւորութեան ձեռք բերած էր մեծ առաւելութիւններ Ասորեստանի նկատմամբ, ինչ որ ազդեց մեզ հետաքրքրող Արեւմուտքի տարածքներուն վրայ. մէջբերենք հետեւեալը յայտնի ուրարտագէտ Պօրիս Բիթրովսքիէն, «Արգիշտի Ա-ի գահակալութեան վերջաւորութեան 8-րդ դարի կէսին Ք.Ա. Ուրարտուն իր ուժի գագաթնակէտին էր: Իր հեղինակութիւնը հզօրապէս հաստատուած էր դէպի հիւսիս՝ Անդրկովկասի մէջ, եւ Ուրմիոյ Լիճի երկրամասի շուրջ: Արեւմուտքէն ան յաջողութեամբ յառաջացած էր Հաթուրու երկրամասի մէջ: Հիւսիսային Սուրիան ենթակայ էր Ուրարտուին, որ այժմ կը վերահսկէր արեւմտեան Ասիոյ գլխաւոր առեւտրի ուղիները: Ուրարտական թագաւորութիւնը պատճառ էր ճանապարհը ասորեստանցիներու առջեւ՝ Փոքր Ասիան նուաճելու, եւ Ուրարտական մշակոյ-

թը սկսած էր թափանցել Միջերկրականի տարածքին, եւ ներքին Փոքր Ասիոյ մէջ:

Ուրարտուի վերելքը եւ իր գրաւումը Միջերկրական տանող ուղիները, կենսականօրէն ազդեց Ասորեստանի շահերը եւ անոր հրեց երկրորդական դիրքի վրայ. բայց Ասորեստանը որ առժամեայ տնտեսական եւ քաղաքական յետադիմութեան մէջ էր, եւ անկարող դիմադրելու Ուրարտական յառաջացմանը, իր տարածքները մէկ ընդ մէկ հեռացան անոր հաւատարմութիւնէն»⁵⁹:

6. ՍՈՒՐԻԱՆ ՈՒՐԱՐՏՈՒՆ ԼՊԱՏԱԿ, ԵՒ ԻՍՐԱՅԷԼ ՈՒ ՅՈՒԴԱՅ ՆՈՐ ԿԱՅՈՒԹԵԱՆ ԱՌԱՋ

Արգիշտի Ա-ին յաջորդեց իր որդին Սարգուրի Բ. (764-735 Ք.Ա.), որուն թագաւորութեան տարիները կարելի է բաժնել երկու մասի՝ նկատի ունենալով Ասորեստանի վիճակը, ու անոր կարեւորութիւնը մեր ուսումնասիրութեան առնչութեամբ: Առաջին շրջանը 764-745 Ք.Ա., երբ Ասորեստանը տակաւին կը մնար իր թոյլ վիճակի մէջ. եւ երկրորդ շրջանը՝ երբ Ասորեստանի գահին բազմեցաւ Թագ-դաթ Փաղասար Գ. (745-727 Ք.Ա.) հռչակաւոր թագաւորը, որ հիմքը դրաւ Ասորեստանի երրորդ եւ վերջին կայսրութեանը:

Առաջին շրջանին (764-745 Ք.Ա.) Ասորեստանը տկար վիճակի մէջ գտնուելով ի զօրու չէր արշաւանքներ կազմակերպելու իր սահմաններէն դուրս, հետեւաբար Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւնները զերծ մնացին ասորեստանեան արշաւանքներէ. այդ կարելի է տեսնել Ֆուգակ թիւ 3ի մէջ (Գլուխ Գ.): Իսրայէլ եւ Յուդայ կը շարունակէին իրենց երկրորդ նսկեղարը, որու մասին անդրադարձանք 4-րդ բաժինի մէջ:

Սարգուրի Բ-ի օրով սկսաւ լուրջ պայքար մը Սուրիոյ տիրապետութեան համար, ինչ որ բնականաբար պիտի ունենար իր ազդեցութիւնը Իսրայէլի եւ Յուդայի վրայ: Ասորեստանի Աշուր Նիրարի Ե. (754-746 Ք.Ա.) թագաւորը գահը բարձրանալուն պէս փորձեց երկպառակութիւն յառաջացնել Ուրարտուի դաշնակիցներու մէջ. «Մաս-

⁵⁷ Հեղինակը ըսել կուզէ Ուրարտուն, այսինքն վանի թագաւորութիւնը:

⁵⁸ M. Chahin, The Kingdom of Armenia, London, 2001, p. 80.

⁵⁹ Boris B. Piotrovsky, The Ancient Civilization of Urartu, Geneva 1969, p. 72.

նաորապէս, ֆ.ա. 754թ. նա հարկադրում է Արպաղի արքային *“դաշնակցելու”* պայմանագիր կնքել, ապա բանակցութիւններ սկսում Մանայի, իսկ միւս կողմից՝ Ուրմն երկրի որոշ ուժերի դրդում հակառակարտական ելույթի՝ զօրք մտցնելով այնտեղ»⁶⁰: Պէտք է յիշել, որ Սարգուրի Բ. երկաթե կամրով, ձախողութեան մատնեց Ասորեստանի այդ փոր ձերը:

Արպաղ քաղաքը, որ կեդրոնն էր տեղական թագաւորութեան մը, կը գտնուէր հիւսիսային Սուրիոյ մէջ՝ Կարթեմիշէն հարաւ արեւմուտք, ներկայ Թել Արֆաղը, մօտաւորապէս 25 մղոն Հալեպէն հիւսիս-արեւմուտք: Արպաղի առնչութեամբ շատ յստակ էր, որ Ասորեստանի թագաւորը փորձեց զայն ունենալ իրեն դաշնակից, կանգնեցնելու համար Ուրարտուի յառաջխաղացումը դէպի Արեւմուտք: Մէջբերենք Հարփըր Քօլլինսէն, «Ստոյգ է, որ Ասորեստանը դաշնակիցներ կը գործածէր, ուժերու նմարը փոխելու համար, ինչպէս նկատելի է Աշուր Նիրարի Ե-ի (754-745) փորձը իշխելու հիւսիսային Սուրիոյ վրայ Արպաղի հետ դաշնակցելով, թէեւ այս պարագային այդ փորձը անազդեցիկ մնաց ընդդէմ Ուրարտական յառաջացման»⁶¹:

Այս հարցով Ասորեստանը ձախողեցաւ մէկ ուրիշ այլ պատճառով մը: Արպաղ քաղաքը այս հանգրուանին դարձած էր Արամիական Պէլթ Ագուսի թագաւորութեան մայրաքաղաքը, եւ կեդրոնը Հաթ-Արամիական դաշնակցութեան մը, որ համակիր էր Ուրարտուին եւ ուղղուած Ասորեստանի դէմ: Հաթերը կը ներկայանան հայերուն ազգակից հնդեւորդական հին ժողովուրդներէն մէկը, այդ պատճառով ինքզինքնին ազգակից կ'ըզգային Վանի թագաւորութեան, եւ անոնց զինակցութիւնը Սարգուրի Բ-ի հետ շատ բնական էր. ու հետեւաբար Ասորեստանի փորձը Արպաղը առնելու իր քաղաքական ազդեցութեան տակ պսակուեցաւ անյաջողութեամբ:

Ասորեստանի այս տկար շրջանին Սարգուրի Բ. արշաւեց Ուրմիոյ լիճէն դէպի հարաւ գտնուող երկիրներու վրայ, եւ զրաւեց ու Ուրարտուին միացուց Մաննա երկիրը. ապա շարժուելով դէպի հարաւ՝ նուաճեց Բաբելոնը (Բաբիլոն երկիր), եւ այդպիսով կայսրութեան հարաւային սահմանը յառաջացաւ մինչեւ Պարսից ծոց: Վանի թագաւորութեան այս արշաւանքի ժամանակ Ասորեստանը կղզիացած մնաց իր սահմաններէն ներս եւ չ'համարձակեցաւ շարժուիլ Ուրարտուի դէմ, կամ որեւէ այլ արշաւանքներ կազմակերպելու:

⁶⁰. Մեր Յաղթանակները, Հատոր Ա., Երեւան, 2008, էջ 122, (Բամի հեղինակ՝ Արտակ Մովսիսեան):

⁶¹. Harper Collins. Atlas of the Bible, Michigan, 1999, p.108.

Ասորեստանը կը գտնուէր պաշտպանողական դիրքի մէջ. իր ուժերը բաւարար էին միայն ետ մղելու սպասուած յարձակում մը Ասորեստանի վրայ: Եւ յիրաւի 753 կամ 752 Ք.Ա. Սարգուրի Բ. մեծ արշաւանք մը կազմակերպեց Ասորեստանի դէմ. արշաւանք մը որու մասին մանրամասնութիւններ չունինք, միայն գիտենք, թէ իր դէմ պատերազմեցաւ Աշուր Նիրարի Ե. (754-745 Ք.Ա.) եւ կարողացաւ պաշտպանել Ասորեստանը Ուրարտուի յարձակումէն:

Յուլի Թիւ 4ի մէջ յստակ է, որ Աշուր Տան Գ-ի եւ Աշուր Նիրարի Դ-ի թագաւորած տարիներուն՝ Ասորեստանեան ոչ մէկ արշաւանք տեղի ունեցած է Իսրայէլի եւ Յուդայի վրայ, այդ որովհետեւ ինչպէս յիշեցինք Ասորեստանը կղզիացած մնաց իր սահմաններէն ներս՝ Ուրարտուի հզօրացման հետեւանքով:

ՅՈՒՑԱԿ-ԹԻՒ 4

ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՆ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՎՐԱՅ

ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐ	ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՒՈՐ	ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐ	ԱՐՇԱՒԱՆՔ ԸՍՏ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ
Յերոբոամ Բ. (782-753)	Ազարիա (767-740)	Աշուր Տան Գ. (772-754)	
Չաքարիա (753-752)	.		
Սեղդում (752-752)		Աշուր Նիրարի Դ. (754-745)	
Մաննեմ (752-742)		Թագղարթ Փաղասար Գ. (745-727)	Ասորեստանի Փուղ թագաւորի արշաւանքը
Փակիա (742-740)			
Փակէէ (740-732)	Յովաթամ (740-732)		Ասորեստանի Թագղարթ Փաղասարի արշաւանքը

Արևմուտքի մէջ, Երկայ Հալէպ քաղաքի մօտ գտնուող Արպադ քաղաքը իրեն դաշնակից ունենալով՝ Սարգուրի Բ-ը իրեն ենթարկեց նաև Ռուիշիանին (Դամասկոսի թագաւորութիւնը). «Յաջորդ տարի Սարգուրին հասնում է նոր բացառիկ յաջողութեան՝ յաղթելով Ռուիշիանի երկրի արքա Ռաշունին եւ նրան պարտադրելով դաշնակցել իր հետ: Սարգուրին առաջինն էր, որ Վանի թագաւորներից, դուրս է գալիս Միջերկրական ծովի արեւելեան աւազան»⁶²: Բնակնաբար Սուրիոյ հպատակութիւնը Վանի թագաւորութեան ահագանգ մըն էր Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններուն: Միւս կողմէ, այս քայլով Ասորեստանի շրջափակումը կը լրանար երեք կողմերէն, ինչ որ աւելի պիտի խեղդեր զայն. ու եթէ շարունակուէր Ասորեստանը վստահաբար խեղդամահ պիտի ըլլար:

Ասորիքը (Սիւրեայ) կը Երկայանար ռազմավարական մեծ նշանակութիւն ունեցող տարածք մը, երկու պայքարող գերպետութիւններուն համար. այս առնչութեամբ Յովհաննէս Կարապոյզեան յիշած է, «Այս կատաղի պայքարում թէ՛ Ասորեստանը, թէ՛ Ուրարտուն ձգտում էին ամէն կերպ իրենց կողմը գրաւել Զագրոսի եւ յարակից շրջանների, ինչպէս նաև Եփրատի աւազանում գտնուող թագաւորութիւնների ու իշխանութիւնների տնտեսական եւ ռազմական ուժը բարեկամական դաշինքի հիման վրայ: Այդպիսի նշանաւոր քաղաքական կազմաւորումներից մէկը Դամասկոսի իշխանութիւնն էր, որը բացարձակօրէն անցել էր Ուրարտուի արքա Սարգուրի Բ-ի (764–735) կողմը: Այդ նոյնը շարունակուեց նաև այն ժամանակ, երբ Ուրարտուի զահին արդէն բազմել էր Ռուսա Ա. (735–713)»⁶³:

Վստահաբար Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւնները զերծ չէին տարածքաշրջանի մէջ տեղի ունեցած վերջին զարգացումներէն՝ ի մասնաւորի Դամասկոսի հպատակութիւնը Ուրարտուին, եւ այդ նոր իրականութեան ազդեցութիւնը իրենց տնտեսական կեանքի վրայ: Այսպէս, Վանի թագաւորութեան ռազմական եւ քաղաքական այս յաջողութիւնները Արեւմուտքի մէջ Սարգուրի Բ-ի օրով պատճառ եղան, որ անոր քաղաքական եւ ռազմական ազդեցութիւնը հասնի մինչեւ ոչ շատ հեռաւոր Պաղեստինը եւ Հրեաստանը, այս կապակցութեամբ մէջբերենք Եղիա Ս. Քասունիէն հետեւեալը. «Սարգուրի Բ.ի իշխանութիւնը Սիւրիոյ մէջ ուղղակի կը հասներ մինչեւ Հալէպ գոնէ. իսկ անուղղակի կերպով կը ճանչցուէր մինչեւ Պաղեստին եւ իր ազդեցութիւնը կը

ներգործէր Իսրայէլի ու Յուդայի թագաւորութեանց քաղաքական ուղղութեան վրայ»⁶⁴: Այս պատմահանգրուանին, Ուրարտուի ազդեցութեան տարածման մասին մէջբերենք եւս հետեւեալը Մ. Շահինէն, «Ետքը կար հարկը տարիէ շրջան մը, որուն մէջ Արարատը ոչ միայն պարզապէս ասպատակեց բայց նուաճեց եւ ամբացաւ Ասորեստանի հպատակ նահանգներուն մէջ, ինչպէս կիլգանը եւ Խուրուշկեան արեւելքի մէջ, եւ Արպադն ու Համարը արեւմուտքի մէջ, եւ Մաննան ու Պարսուան հարաւ արեւելքի մէջ. եւ նոյնիսկ յարձակեցաւ Ասորեստանի կեդրոնական ամրութիւններու վրայ՝ յատկապէս նոյնինքն նշանաւոր մեծն Նինուէ քաղաքը: Ի հետեւանք այդ մեծածաւալ նուաճումներու Ուրարտուն կարգաւորեց առեւտուրը արեւելքէն արեւմուտք, եւ Եգիպտոսի ու Պաղեստինի վաճառականութիւնը որ Սուրիոյ վրայով կ'անցներ Անադոլիա. այսինքն առեւտուրը եւ այն ժողովուրդներուն ճակատագրերը, որոնք աշխարհագրականօրէն աւելի շատ հասանելի էին Ասորեստանին քան թէ Ուրարտուին»⁶⁵:

Սարգուրի Բ-ի օրով Ուրարտուի (Վանի թագաւորութիւն) ռազմական գործողութիւններուն ի հետեւանք՝ Ուրարտուի կայսրութեան նոր սահմանները արձանագրեցին իրենց ամենաընդարձակ վիճակը. «Սարգուրի Բ-ի կառավարման ժամանակաշրջանում Վանի տերութիւնն ունեցել է տարածքային ամենամեծ աճը: Այն հիւսիսում հասնում էր Սեւ ծով (Ճորոխի աւազանում գտնուող Կուլխա երկրի նուաճումով), հիւսիս-արեւելքում՝ Կուր գետ (Ուրտեխի (Արցախ) երկրի միաւորմամբ), արեւելքում՝ Կասպից ծով (Պուլուաղի երկրի գրաւումով), արեւմուտքում՝ Փոքր Ասիա (անդերփրատեան Մելիտեա, Մուշանի եւ Զապշա երկրների հնազանդեցումով), հարաւում ընդգրկում էր Բաբելոնիան, հարաւ-արեւմուտքում՝ Դամասկոսի թագաւորութիւնը (Ռուիշիանի): Չորս ծովերի միջեւ ստեղծում է հզօր մի տերութիւն»⁶⁶:

Ուրարտուի հիմնած կայսրութեան սահմանները Սարգուրի Բ-ի օրով, երբ ան արձանագրեց իր ամենաընդարձակ հանգրուանը. կարելի է տեսնել Քարտէս թիւ 4ի մէջ, որ կը քաղենք Մեր Յաղթանակները Ա. հատորէն⁶⁷:

⁶⁴ Եղիա Քասունի, նոյնը, էջ 419:

⁶⁵ M.Chahin, The Kingdom of Armenia, London, 2001, p., 170, 171.

⁶⁶ Արտակ Մովսիսեան, Հայոց Պատմութեան Աշխարհակալութիւնները, Երեւանի Պետական Համալսարան 2008, էջ 40, 41:

⁶⁷ Մեր Յաղթանակները, Հատոր Ա., Երեւան, 2008, էջ 126, (Բաժնի հեղինակ՝ Արտակ Մովսիսեան):

⁶² Մեր Յաղթանակները, Հատոր Ա., Երեւան, 2008, էջ 123, (Բաժնի հեղինակ՝ Արտակ Մովսիսեան):

⁶³ Յովհաննէս Կարապոյզեան, Աստուածաշնչական Հայաստան, էջ 125:

7. ԿԱՐԵՒՈՐ ԵՒ ՀԵՏԱՔՐՔԻՐ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ

Խօսելի է առաջ Սարդուրի Բ-ի թագաւորութեան երկրորդ շրջանի մասին հարկաւոր է նշել, որ բազմաթիւ օտար աղբիւրներ կը յիշեն, թէ Ասորեստանը Սալմանասար կամ Սալմանասար-էն ետք ունեցաւ տկար յաջորդներ, որոնց թագաւորութեան ընթացքին ժամանակաւորապէս Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւնները կարողացան խաղաղութեամբ ապրիլ, մէջբերենք մէկը այդ աղբիւրներէն, «Այն իրողութիւնը, որ Ասորեստանը ունեցաւ Սալմանասար Գ-էն ետք տկար թագաւորներ, ինչ որ թոյլատրեց Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններուն համագիտ ժամանակաշրջան, որ ամէն պարագայի տակ՝ նշանակեց միայն յետաձգութիւն: Երբ Ասորեստանը զբաղուած էր իր նահանգներու մէջի ապստամբութիւններով, Իսրայէլ եւ Յուդայ կարողացան վայելելու կարճատեւ խաղաղութեան շրջան մը 825 մինչեւ 745 Ք.Ա.»⁶⁸:

Այս եւ նման աղբիւրները չեն յիշեր, որ յիշեալ ժամանակաշրջանին 825-745 Ք.Ա. Ասորեստանը տկարացաւ ոչ թէ՛ միայն այն պատճառով, որ Սալմանասար Գ-ի յաջորդները տկար էին, կամ թէ զբաղուած էին ներքին հարցերով, այլ նաեւ, որովհետեւ Հայկական լեռնաշխարհի մէջ ծնունդ առած Վանի թագաւորութիւնը (Ուրարտուն) իր հզօրութեամբ այդ նոյն պատմաշրջանին շուրջ մէջ ձգեց հզօր Ասորեստանը: Հենց այս պատճառով էր, որ Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւնները վայելեցին յիշեալ խաղաղութիւնը: Այս աղբիւրը եւ նմանները ճշմարտութեան պատուհանը չեն բանար. չեն անդրադարձար այն իրողութեանը, որ Յուդայի եւ Իսրայէլի խաղաղութեան ժամանակաշրջանը կը պարտի Ուրարտուի հզօրութեանը, եւ ոչ թէ միայն Ասորեստանի Սալմանասար Գ-ի յաջորդներու տկարութեանը: Այս իրականութիւնը կամ դիտումնաւոր՝ Հայկական լեռնաշխարհի ժողովուրդներու պատմական դերը խաւարի մէջ պահելու համար է. կամ ալ պարզապէս անոնք միակողմանի տեսակետներ կուզեն հաղորդել ընթերցողին: Երկու պարագային ալ, ցաւալի է, որովհետեւ ճշմարտութիւնը կը մնայ խաւարի մէջ, ինչ որ անաչառ եւ համապատասխան չէ բաւմեկեւորող դարի գիտական հսկայ զարգացումներուն եւ ձեռքբերումներուն:

Մէջբերենք եւս ուրիշ կարեւոր աղբիւր մը, ուր նմանապէս՝ Ուրարտուի գործիւնը կը վերագրէ Ասորեստանի հարստութեան նուազացմանը. «Իններորդի վերջաւորութեան՝ եւ ութերորդ դարերու սկիզբին, Ասորեստանի հիւսիսին գտնուող լեռներուն՝ ախոյեան Ուրար-

տուն վերելքի մէջ էր: Երբ Ասորեստանի հարստութիւնը նուազեցաւ 783էն ետք՝ տկար թագաւորներու եւ զօրաւոր գաւառային կառավարիչներու ներքոյ. Ուրարտացիք շարժուեցան հարաւ՝ Պարսկաստանի վրայ, եւ արեւմուտք՝ Եփրատէն այնդին՝ հիւսիսային Սուրիոյ մէջ: 745 Ք.Ա. Ուրարտուն արդէն նուաճած կամ հաստատած էր դաշնակցութիւններ հարաւ-կեդրոնական Անաթօլիայի եւ հիւսիսային Սուրիոյ գրեթէ բոլոր կարեւոր նահանգներու հետ, եւ հաստատած էր իր գերիշխանութիւնը տարածքաշրջանին վրայ»⁶⁹:

Ուրիշ աղբիւր մը Ուրարտուի հզօրութեանը եւ Ասորեստանի այս տկար պատմաշրջանի մասին կը յիշէ, թէ Ասորեստանը Ատատ Նիրարի Գ-ի երեք որդիներու գահակալութեան տարիներուն՝ տկարութեան մէջ էր. ընթերցողին այն տպաւորութեան մէջ ձգելով, որ Ասորեստանի տկարացման պատճառը, իրար յաջորդող Ատատ Նիրարի Գ-ի երեք որդիներն էին. մէջբերենք հետեւեալը, «Երեք որդիներ Ատատ Նիրարի Գ-էն եղան Ասորեստանի յաջորդ երեք թագաւորները: Սակայն համեմատաբար քիչ տեղեկութիւններ կան անոնց մասին, եւ Ասորեստանը իրականութեան մէջ նուազացման ժամանակամիջոցի մէջ էր: Երեքէն առաջինը Սալմանասար Գ.-ն էր, երկրորդը Աշուր Տան Գ.-ն էր եւ երրորդը Աշուր Նիրարի Ե.-ն էր»⁷⁰:

Պետութիւններու եւ կամ կայսրութիւններու հզօրութեան ելեւէջները կ'ունենան անպայման իրենց արտաքին եւ ներքին պատճառները, որոնց մասին ուսումնասիրելու ժամանակ անհրաժեշտ է անաչառ եւ բազմակողմանի ճշմարտութիւններու բացայայտում:

Այս առնչութեամբ կան պատմաբաններ, որոնք անաչառ են, մէջբերենք հետեւեալը ծօն Տագլսէն, ուր ան կը բացատրէ Ասորեստանի եւ Ուրարտուի (Վանի թագաւորութեան) տարբեր քաղաքականութիւնները շրջանի փոքր պետութիւններու հանդէպ, «Ասորեստանեան հզօրութիւնը սկսաւ նուազիլ աստիճանաբար, սակայն երբ Ուրարտացիք զօրացան շուրջ 9-րդ դարուն Ք.Ա. իրենց կայսրութիւնները հիմնելու ընթացքին, երկու մրցակիցները որդեգրեցին տարբեր ռազմավարութիւններ: Մինչ Ասորեստանցիք գաղութատիրեցին երկրամասեր սպաննելով կամ տարագրելով նուաճուած երկիրներու բնակչութիւնը. Ուրարտացիք աւելի քաղաքագէտ էին: Անոնք նախընտրեցին կնքել դաշինքներ նուաճուած

⁶⁸ Werner Keller, The Bible as History, New York, 1995, p 239.

⁶⁹ The Oxford Companion to the Bible, Oxford University Press 1993 Edited by Bruce M. Metzger and Michael D. Coogan p. 63.

⁷⁰ Jack Finegan, Archaeological History of The Ancient Middle East, New York, 1996, p. 110.

երկիրներու հետ, արտօնելով իւրաքանչիւրը ինքնակառավարուել Ուրարտական կայսրութեան վարչական կազմի համաձայն»⁷¹:

Ասորեստանի յիշեալ քաղաքականութիւնը գրաւուած երկիրներու հանդէպ՝ հիմնական պատճառներէն մէկն էր, որ Իսրայէլի եւ Յուդայի նման փոքր թագաւորութիւններ յաւելեալ առելութեամբ լեցուէին Ասորեստանի դէմ. ինչ որ նոյնը չէր Ուրարտուի պարագային: Աւելին, կարելի է ըսել, որ Ասորեստանի՝ եւ ապա իրեն դէրը յաջորդող Բաբելոնի հարուածներուն տակ էր, որ վերջնականօրէն կործանուեցան Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւնները, առաջինը՝ Ասորեստանի ձեռքով, իսկ երկրորդը՝ Բաբելոնի. ինչպէս որ պիտի անդրդառնանք յաջորդ էջերու մէջ:

8. ԻՄՐԱՅԷԼԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ԼՊԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՍՈՐԵՍՏԱՆԻՆ Ի ԼԵՏԵԻԱՆՔ ՈՒՐԱՐՏՈՒԻ ՊԱՐՏՈՒԹԵԱՆԸ ԿՈՒՄՄՈՒԻՒ Ա. ԶԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ

Ասորեստանի տկար վիճակին վերջ տուաւ երկրի բանակը, որ շատ դժգոհ էր պետութեան քաղաքական եւ ռազմական թոյլ վիճակէն: Բանակը դիմեց լեղափոխութեան, եւ գահ բարձրացուց Ասորեստանի արքայական ընտանիքին չ'պատկանող անձ մը: Յեղափոխութեան ղեկավարը՝ ինքզինքը ներկայացուց որպէս Ատատ Նիրարի Գ-ի սերունդէն, եւ իր անձը կոչեց Թագդաթ Փաղասար, ասորեստանեան յայտնի արքայական սիրուած անունով:

Ասորեստանի այս նոր ղեկավարի համար անհրաժեշտ էր ազատուիլ Վանի թագաւորութեան մշտական վտանգէն, որովհետեւ ան Ասորեստանին ամենամերձ լուրջ վտանգն էր: Թագդաթ Փաղասար իր ռազմական գործողութիւնները Ուրարտուի դէմ սկսաւ 744 Ք.Ա. արշաւելով Նամրի երկրի վրայ (Ներկայիս Իրաքեան Սուլեյմանիայ նահանգը), տես Քարտէս թիւ 1: Այդ ժամանակ հիւսիսային Միջագետքի մէջ գտնուող Նամրի երկիրը մաս կը կազմէր Ուրարտուի թագաւորութիւնէն: Ասորեստանեան բանակը չ'հանդիպեցաւ Ուրարտուի բանակին, ու հեշտութեամբ գրաւեց Նամրի երկիրը:

Ասորեստանը Թագդաթ Փաղասարի օրով ազատուեցաւ Ուրարտուի վերահսկողութիւնէն, եւ սկսաւ նոր վերելք մը տես Գծացուցակ թիւ 2: Մէջբերենք հետեւեալ կարեւոր վկայութիւնը, ուր շատ յստակօրէն կը յիշուի, թէ Ասորեստանը ենթարկուած էր Վանի թագաւորութեանը, ինչ որ շատ հազուագիւտ անաչառ յիշատակութիւն մըն է. «Ասորեստանի միւրնուանը Ուրարտուի հարցերով վերջ գտաւ Թագդաթ Փաղասար Գ-ի (744-727 Ք.Ա.) գահակալութեամբ: Իրական հիմնադիրը Ասորեստանեան կայսրութեան»⁷²:

Թագդաթ Փաղասար Գ. (746-727 Ք.Ա.) չ'համարձակեցաւ արշաւել ուղղակի Ուրարտուի վրայ, այլ որոշեց հարուածել Սարդուրի Բ-ի դաշնակիցներուն Ասորիքի (Սուրիոյ) մէջ: Աճ 743 Ք.Ա. հսկայ բանակով շարժուեցաւ Արեւմուտք՝ նպատակ ունենալով մահացու հարուած հասցնելու Ուրարտուի դաշնակիցներուն. տես Ցուցակ թիւ 2:

Ասորեստանի համար ճակատագրական հարց էր, Արեւմուտքէն հեռացնելու Ուրարտուի ազդեցութիւնը, որովհետեւ Սուրիան իր Միջերկրականի նաւահանգիստներով հարստութեան կարեւոր երաշխիք էր: Երկու հսկաներու պայքարը Սուրիոյ վրայ, բնականաբար պիտի ազդէր խորապէս մօտակայ Իսրայէլի եւ Յուդայի փոքրիկ թագաւորութիւններուն վրայ: Մէջբերենք հետեւեալը, «Ասորեստանի համար հիմնական վտանգը Ուրարտուն էր: Ուրարտուն եւ Ասորեստանը կը ձգտէին տիրապետելու Սուրիական ճանապարհները, որոնք խիստ կարեւոր էին Ասորեստանին փայտի, մետաղներու եւ ձիերու համար»⁷³:

Թագդաթ Փաղասար Գ. իր հսկայ բանակով՝ անցաւ Եփրատը ու մտաւ Կումմազէնի (Կումմուխի, կամ Կումմախա) երկիրը, եւ յառաջանալով՝ պաշարեց Արպադ քաղաքը, կարբէմիշէն հարաւ-արեւմուտք, ներկայ Սուրիական Հալէպ քաղաքէն դէպի հիւսիս, տես Քարտէս թիւ 1: Արպադ քաղաքին օգնութեան հասաւ Սարդուրի Բ. իր բանակով. ուր իրեն միացան նաեւ իր դաշնակիցները՝ Կումմուխի, Մելիտիսի եւ Գուրգամի փոքր թագաւորութիւնները՝ իրենց բանակներով: Սպասուած ճակատամարտը տեղի ունեցաւ Արպադ քաղաքին մօտ, ու տեւեց մէկ ամբողջ օր. եւ վերջացաւ Սարդուրի Բ-ի եւ իր դաշնակից ներու պարտութեամբ:

Այդ հանգրուանին Արպադ քաղաքը ռազմավարական մեծ նշանակութիւն ունէր. Նիկողայոս Ադոնց այդ կը բացատրէ, յիշելով, «Ըստ

⁷¹ John M. Douglas, The Armenians, 1992, New York, p. 22.

⁷² Holman Illustrated Bible Dictionary, Tennessee, 2003, p. 135.

⁷³ Karen Rhea Nemet-Nejat, Daily Life in Ancient Mesopotamia, London, 1998, p. 38.

Լպոնիմների ցանկի մի ծանոթություն՝ 743 թուականին Թիգլաթպալասարը արշաւեց Արպադի դէմ եւ ջախջախեց Ուրարտուի ուժերը: Դա նշանակում է, որ Արպադ երկիրը հարել էր ուրարտական կողիցիային: Եթէ Արպադը, այսօրուայ Ռֆադը՝ Հալեպից հիւսիս, անցնէր թշնամուն Ասորեստանը Սիրիայից կտրուած կը լինէր: Դրա համար էլ Ասորեստանի թագաւորի առաջին հարուածն ուղղուեց Արպադի դէմ: Ուրարտուի թագաւոր Սարգուրին, իր դաշնակիցների հետ միասին, փութաց օգնել Արպադին»⁷⁴:

Կուժմուխի միօրեայ ճակատամարտին Սարգուրի Բ. ունեցաւ մեծ կորուստներ, որոնք աւելի սաստկացուցին իր դիմագրաւած ներքին հարցերը. այդ բոլորը ստիպեցին իրեն հեռանալ Արեւմուտքէն, ու նահանջել Ուրարտու: Իսկ Արպադ քաղաքը՝ շարունակեց անյոյս դիմադրութիւնը Թագղաթ Փաղասար Գ-ի յարձակումներուն ամբողջ երեք տարի, մինչեւ 740 Ք.Ա.:

Ճիշդ է Կուժմուխի ճակատամարտը ուժգին հարուած մը եղաւ Ուրարտուին. սակայն ան այդ հարուածով ուժաթափ չէղաւ: Ասորեստանցիք հակառակ իրենց մեծ յաղթանակին, չ'համարձակեցան մտնել վանի թագաւորութեան սահմաններէն ներս: Նշենք այստեղ, որ Արպադի մօտ տեղի ունեցած ճակատամարտը պատմութեան մէջ յիշուած է Կուժմուխի անունով. քանզի Արպադ քաղաքը կը գտնուէր Կուժմուխ երկրի մէջ:

Ասորեստանեան արձանագրութիւններու համաձայն, Սարգուրի Բ-ի բանակը յանկարծակիի եկած էր. այդ կարելի է բացատրել միայն, որ Կուժմուխը անցած էր Ասորեստանի կողմը. մէջբերենք Հայիմ Թատմուրէն, «Նշմարելի է, որ Կուժմուխը երբէք չէ յիշուած թշնամի ուժերու շարքին, թերեւս այն ցոյց կուտայ, որ ան մնաց Ասորեստանին հաւատարիմ հպատակը: Արդարեւ, կարելի է կասկածիլ թէ Թագղաթ Փաղասարի յանկարծակի յարձակումը Ուրարտական ուժերուն վրայ, երբ անոնք կանգնէին Կուժմուխէն. կարելի պիտի ըլլար միայն Կուժմուխի աշխոյժ ներակցութեամբ ի կողքին Ասորեստանի»⁷⁵: Այս տրամաբանական կը դարձնէ Ուրարտուի զգալի պարտութիւնը. եւ Սարգուրի Բ-ի անմիջական նահանջը դէպի Ուրարտու:

Կուժմուխի Ա. ճակատամարտի արդիւնքը 743 Ք.Ա. նպաստաւոր չէր Իսրայէլի եւ Յուդայի հրեական թագաւորութիւններուն, որովհետեւ այդ պիտի բաջալերէր Ասորեստանը իրագործելու իր երազանքը,

գրաւել ամբողջ Արեւմուտքի տարածքը՝ ինչպէս եւ Իսրայէլ ու Յուդայ, եւ արշաւելու հարուստ Եգիպտոսի վրայ: Պէտք է մատնանշել, որ Ուրարտուի պարտութիւնը այս ճակատամարտին, վերջ տուաւ Իսրայէլի եւ Յուդայի երկրորդ Ոսկեդարին, որու մասին անդրադարանք: Ուրարտուի հզօրութիւնը զգալի վայրէջք արձանագրեց, տես Գծացուցակ Թիւ 2: Ասորեստանը վերելք արձանագրեց, ու Ուրարտուի ձեռքէն խլեց տարածքաշրջանի ամենահզօր պետութեան դիրքը:

Այս պատմական ճակատամարտի ամենակարեւոր արդիւնքը եղաւ այն, որ Ուրարտուն կորսնցուց իր դաշնակիցները Արեւմուտքի մէջ, եւ ապա Ասորիքը վերածուեցաւ յառաջաւոր կեդրոնի, ուրկէ ասորեստանեան բանակները անցան նուաճողական արշաւանքներու դէպի հարաւ՝ Պաղեստին ու Հրեաստան, եւ ապա Եգիպտոս: Կարելի է ըսել, որ Կուժմուխի Ա. ճակատամարտը եղաւ Ասորեստանի համար այդ տարածքները նուաճելու բանալին:

Այս մեծ ճակատամարտէն ետք, ռազմական գործողութիւնները Ուրարտուի եւ Ասորեստանի միջեւ՝ ժամանակաւորապէս դադրեցան: Ոչ յայտարարուած պարտադրական խաղաղութեան շրջանը՝ Սարգուրի Բ-ի եւ Թագղաթ Փաղասար Գ-ի միջեւ տեւեց մօտ եօթ տարի (742-735 Ք.Ա.)՝ տես Յուցակ Թիւ 3, որուն ընթացքին վանի թագաւորութիւնը դարմանեց Կուժմուխի ճակատամարտէն իր ստացած վէրքերը. եւ սկսաւ պատրաստուիլ նոր պատերազմի Ասորեստանի դէմ. յուսալով, որ պիտի կարողանար անգամ մը եւս Արպադը գրաւելով՝ Ասորեստանը անջատել Սուրիայէն:

Իսկ Ասորեստանի յաղթական Թագղաթ Փաղասարի Գ-ը, Կուժմուխի ճակատամարտէն ետք, եւ Ուրարտուի ազդեցութիւնը հեռացնելէ յետոյ՝ գրաւեց ամբողջ տարածքը. Իսրայէլ եւ Յուդայ ստիպուեցան տուրք վճարել Ասորեստանին: Այս առնչութեամբ մէջբերենք հետեւեալը, «Մէկ կամ երկու տարուայ ընթացքին, 738թ. Թագղաթ Փաղասար Գ-ը (Աստուածաշունչի Փուղը) կարողացաւ նուաճել ամբողջ Սուրեան, եւ հարկահաւար ու ծանր տուրք առնել նոյնիսկ Իսրայէլէն եւ Յուդայէն»⁷⁶:

Աստուածաշունչի մէջ յիշուած է, որ Իսրայէլի Մանայեմ թագաւորի տարիներուն 752-742 Ք.Ա. Ասորեստանի թագաւորը արշաւած է Իսրայէլի թագաւորութեան վրայ, «19 Ասորեստանի Փուղ թագաւորը երկրին վրայ եկաւ: Մանայեմ հազար տաղանդ արծաթ տուաւ

⁷⁴ Նիկողայոս Ադոնց, Հայաստանի Պատմութիւն, Երեւան, 1972, էջ 96:

⁷⁵ Hayim Tadmor, The Inscriptions of Tiglath-Pileser III King of Assyria, Jerusalem 1994, p. 262.

⁷⁶ Chaim Herzog & Mordechai Gichon, Battles of the Bible, New York, 2006, p. 194.

Փուղին, որպես զի անիկա իրեն օգնական ըլլալ, թագաւորութիւնը իր ձեռքին մէջ հաստատելու համար: 20 Մանայեմ այս արծաթը Ասորեստանի թագաւորին տալու համար Իսրայէլի բոլոր հարուստներուն վրայ հարկ դրաւ: Ամէն մէկէն յիսունական սիկլ⁷⁷ արծաթ առաւ: Ասորեստանի թագաւորը ետ դարձաւ ու այն երկրին մէջ չ'կեցաւ»⁷⁸: Ասորեստանի թագաւորի անունը յիշուած է "Փուղ": Շատ տրամաբանական է, որ այս արշաւանքը կազմակերպած է Ասորեստանի Թագաւոր Փաղասար Գ-ը Կուսմուխի ճակատամարտէն ետք, եւ ոչ թէ առաջ: Թերեւս Փուղը, յիշեալ թագաւորի գործածական անուններէն մէկն էր, կամ արշաւող ասորեստանեան բանակի զօրավարի անունը, բայց յիշուած է Աստուածաշունչի մէջ՝ որպէս Ասորեստանի թագաւոր:

Աստուածաշունչի մէջ յիշուած է նաեւ, որ Ասորեստանի թագաւորը ետ դարձաւ ու այն երկրին մէջ չ'կեցաւ. վստահաբար պատճառներէն մէկը այն էր, որ Վանի թագաւորութիւնը տակաւին հզօր էր, եւ զգալի սպառնալիք կը ներկայացնէր Ասորեստանին: Մինչեւ այն ժամանակ, երբ այդ մեծ վտանգը (Ուրարտուն) գոյութիւն ունէր Ասորեստանի գլխուն վերեւ, Ասորեստանի համար անկարելի էր՝ իր ցանկացած աշխարհակալութիւնները իրագործել Արեւմուտքի մէջ, կամ այլուր:

⁷⁷ Սիկլը Հրեական Շեկել մետաղադրամն էր, որ հաւասար էր Հռոմեական 4 դինարի:

⁷⁸ Աստուածաշունչ, Գ. ԹԱԳԱՒՈՐԱՅ 15:19-20:

9. ՈՒՐԱՐՏՈՒԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԿՈՒՄՄՈՒԻԻ Բ. ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ՝ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ՈՒ ՅՈՒԴԱՅԻ ԴԱՌՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՍԿԶԲԸ

Բնականաբար, Ուրարտուն չէր կրնար հեշտութեամբ մարտել իր պատմական մրցակիցի՝ Ասորեստանի նուաճումները Սուրիոյ, եւ ընդհանրապէս Արեւմուտքի մէջ: Սարգուրի Բ. 735 Ք.Ա. անգամ մը եւս իր բանակով շարժուեցաւ դէպի Կուսմուխի երկիրը, տես Յուցակ թիւ 3: Ասորեստանի եւ Ուրարտուի բանակները իրարու հանդիպեցան Կուսմուխի երկրի մէջ. այս անգամ եւս՝ յաղթանակը ասորեստանցիներու կողմէն էր: Այս պատերազմի մասին շատ տեղեկութիւններ մեզի հասած չէ:

Յաղթանակէն ետք, Թագաւորապալասար Գ. չ'շարունակեց իր նուաճումները Արեւմուտքի մէջ. ան աշխատեցաւ, զօրաւոր՝ ու եթէ հնարաւոր էր մահացու հարուած հասցնել պարտուած Ուրարտուին: Ասորեստանի հզօր զահակալի արշաւանքը Ուրարտուի վրայ, հակառակ իր մեծ յաղթանակին 735 Ք.Ա. կը շեշտէ մեր մատնանշածը, թէ Ուրարտուն իր գոյութեամբ Ասորեստանի գլխուն վերեւ, հսկայ խոչընդոտ մըն էր Ասորեստանի աշխարհակալութեանց դիմաց:

Ի հետեւանք Կուսմուխի երկրորդ ճակատամարտին յաջորդող Ասորեստանի եւ Ուրարտուի միջեւ շարունակուող պատերազմին՝ Յուդայի թագաւորութիւնը ժամանակաւորապէս ազատեցաւ Ասորեստանին տուրք վճարելէ. մէջբերենք հետեւեալը, «Յիշատակուած չէ Յուդայէն հարկ ստանալու մասին, հաւանաբար որովհետեւ Թագաւորապալասար մտահոգուած էր վերադառնալու Ասորեստան, շարունակելու համար վերջնական կարգադրութիւնները Ուրարտուի դէմ, որոնք սկսած էին անցեալ տարիէն, բայց դադարեցուած էին Ազարեային եւ իր դաշնակիցներուն պատմելու համար»⁷⁹:

Սարգուրի Բ. պարտուած բանակով նահանջեց դէպի Ուրարտու. իսկ Թագաւորապալասար Գ. հետապնդեց նահանջող բանակին եւ պաշարեց Վանի թագաւորութեան Տուշպա մայրաքաղաքը: Ուրարտու-Ասորեստան պայքարի պատմութեան մէջ՝ առաջին անգամն էր, որ շատ կատաղի կռիւներ տեղի կ'ունենար Տուշպայէն դուրս եւ ներս: Դիմադրութիւնը շատ բուռն էր. Թիգլաթպալասար Գ. համոզուեցաւ, որ անկարելի էր Վանի թագաւորութիւնը նուաճել. ու ան ստիպուեցաւ արագօրէն նահանջել թշնամի հողերէն, վախճալով՝ թէ բուռն դիմա-

⁷⁹ H.R.Hall, M.A., D.Litt., F.S.A., The Ancient History of the Near East, London, 1924, p. 464.

դրութիւնը կարող էր ոչնչացնել իր ամբողջ բանակը՝ հակառակ որ Տուշպայ քաղաքէն շատ մասեր ենթարկուեցան մեծ անբուժանքներու։ Արեւելոս Թուրքիայի այս արշաւանքի մասին կը յիշէ. «Թիգլաթպալասար Գ. հասաւ Տուշպա, Ուրարտուի մայրաքաղաքը 735 Ք.Ա. եւ պաշարեց զայն, սակայն չ'կարողացաւ գրաւել քաղաքը. նմանապէս չ'կարողացաւ մշտականօրէն գրաւել Ուրարտուէն որեւէ մաս։ Հիւսիսային Սուրիան երկրորդ անգամ գրաւելը, Ասորեստանի տիրապետութիւնը պարտադրեց արեւելեան Փոքր Ասիոյ իշխանութիւններուն վրայ, որոնք կը գտնուէին Տաւրոսեան լեռնաշղթայէն հիւսիս եւ վերին Եփրատէն արեւմուտք։ Այս վիճակը ամբողջապէս անջատեց Ուրարտուն Կիլիկիայէն ու Սուրիայէն. սակայն այն ջանքը, որ տրամադրուեցաւ վասն Ասորեստանի իշխանութեան պահպանմանը՝ այդ հեռուոր նահանգներու մէջ, շատ սուղի նստեցաւ Ասորեստանի վրայ»⁸⁰։

Ճիշդ է, Սարգուրի Բ. չ'յանձնուեցաւ, ի հետեւանք Կուսմուխի Բ. ճակատամարտին եւ Ասորեստանի արշաւանքին Ուրարտուի վրայ, սակայն այդ բոլորը ծանր հետեւանքներ ունեցան. կարելի է ըսել, թէ Ուրարտուի հզօրութիւնը կտրուեցաւ, ու ան իր դիրքը որպէս Արեւմտեան Ասիոյ ամենահզօր ուժ՝ վերջնականօրէն զիջեց Ասորեստանին, տես Գծացուցակ թիւ 2։

Հետաքրքրական է այստեղ իմանալ, թէ ինչո՞ւ եօթը տարիներու ընթացքին 742–735 Ք.Ա. Ուրարտուն երկու մեծ ճակատամարտերէ պարտուած դուրս եկաւ։ Ասորեստանի մէջ, Թիգլաթպալասար Գ. զահ բարձրացաւ 745 Ք.Ա., եւ հազիւ երկու տարի յետոյ՝ 743 Ք.Ա. Կուսմուխի Առաջին ճակատամարտին ձեռք բերաւ իր առաջին մեծ յաջողութիւնը. այդ վստահաբար ի հետեւանք չէր Ասորեստանի հզօրացման այսքան կարճ ժամանակի ընթացքին. ինչ որ տրամաբանական չէ։ Սարգուրի Բ-ի այս երկու ռազմական անյաջողութիւնները՝ կարելի է բացատրել, որ ան այդ տարիներուն ստիպուեցաւ իր զինուորի զգալի մասը գործածել բարբարոս հնդեւրոպացի ժողովուրդներէն Կիմմիւրներու դէմ, որոնք Սեւ Ծովի տափաստաններէն ներխուժեցին Կովկաս եւ Փոքր Ասիայ, ու վտանգեցին Վանի թագաւորութեան գոյութիւնը։

Դիտումնաւոր, մենք պիտի գործածենք Թիգլաթպալասար Գ. եւ Թագղաթ Փաղասար Գ. անուցները, որովհետեւ այդ երկուքն ալ գործածուած են. ինչպէս կարելի է այդ նկատել։

Արեւմուտքի մէջ ուժերու դասաւորման այս նոր զարգացումը՝ Կուսմուխի երկրորդ ճակատամարտէն ետք 735 Ք.Ա., ազատ արձակեց

Ասորեստանի ձեռքերը տարածքաշրջանին մէջ։ Ասորեստանի յառաջիկա դացումը Արեւմուտքի մէջ, ուշացաւ Ուրարտուի ռազմական ներկայութեան պատճառով. ու երբ այդ արգելքը վերացաւ, երբ Ուրարտուի վտանգը մեծ մասամբ վնասազերծուեցաւ. Արեւմուտքը ենթարկուեցաւ նոր իրավիճակի։ Պատմական դէպքերը զարգացան ի վնաս Իսրայէլի եւ Յուդայի փոքրիկ թագաւորութիւններուն. Ասորեստանը մտահոգուած չ'ըլլալով իր հիւսիսային հարեւանի Ուրարտուի մեծ ուժէն, իր ամբողջ զինուորը շարժեցուց դէպի Արեւմուտք։

Թագղաթ Փաղասար Գ. արշաւեց Արեւմուտք եւ գրաւեց ամբողջ Սուրիան, եւ Իսրայէլի ու Յուդայի թագաւորութիւնները։ Իր յաջորդները, տասնըշորս տարի ետք 721 Ք.Ա. գրաւեցին Իսրայէլի թագաւորութեան Սամարիա մայրաքաղաքը, ու ընդմիշտ կործանեցին հրեական այդ թագաւորութիւնը. իսկ Յուդայի թագաւորութիւնը ամփոփուած շարունակեց իր գոյութիւնը եւս մօտ մէկ ու կէս դար. ինչպէս, որ պիտի անդրադառնանք յաջորդ էջերու մէջ։

Թագղաթ Փաղասար Գ-ի վերջին պատերազմական գործողութիւններու մասին, մէջբերենք հետեւեալը, ուր հեղինակը կը նշէ, թէ ինչպէս Թագղաթ Փաղասար Գ. զբաղուեցաւ Ուրարտուի դէմ պայքարելով՝ ու հեռու մնաց Պաղեստինէն, «738ին երբ ան կ'ստանար հարկերը Ռիզիէն, Մանայեմէն եւ այլ արեւմտեան կառավարիչներէն, եւ 734ի միջեւ՝ երբ ան արշաւեց հարաւ Միջերկրականի ծովեզերք, Թագղաթ Փաղասարի Գ-ը զբաղուած էր պատերազմական գործողութիւններով Ուրարտուի դէմ հիւսիսի մէջ եւ Միտեայի դէմ արեւելքի մէջ, եւ այսպէս՝ հեռու մնաց Պաղեստինէն։ Ու երբ ան դասաւորեց հարցերը այդ շրջաններու մէջ, ասորեստանցի թագաւորը շարժեցաւ դէպի հարաւային Սուրիայ եւ Պաղեստին նպատակ ունենալով ապահովելու վերահսկումը արեւելեան Միջերկրականի վանառականութիւնը եւ ընկնելու հակա-ասորեստանեան դաշնակցութիւնը, կազմուած մի քանի անհաւատարիմ նահանգներէ, որոնք կարճ ժամանակ առաջ առաջարկած էին իրեն մակերեսային ենթարկութիւն, մի միայն նպատակ ունենալով կազմակերպելու ընդդիմութիւն՝ երբ ան զբաղուած ըլլար այլուր»⁸¹։

Այս մէջբերման մէջ շատ յստակ յիշուած է, որ Ասորեստանի զբաղումութիւնը իր պատմական պայքարով Ուրարտուի դէմ, իրեն հեռու պահեց հրեական զոյգ թագաւորութիւններէն։ Այստեղ յիշուած է նաեւ Ասորեստանի պայքարը արեւելքի մէջ Միտեայի դէմ, բայց իրա-

⁸⁰. Արեւելոս Թուրքիայի, Թարիխ Ալ-Բաշարիա (Մարդկութեան Պատմութիւնը-Արաբերէնով), Ա. Մաս, Թարիխ էլ Բաշարիա, էջ 154։

⁸¹. J. Maxwell Miller and John H. Hayes, A History of Ancient Israel and Judah, Philadelphia, 1986, p. 330.

կանութիւնը այն էր, որ այդ հանգրուանին Ուրարտուի ներկայացուցած սպառնալիքը Ասորեստանին՝ շատ աւելի մեծ էր բաղդատմամբ Միտեայի սպառնալիքին: Վերջինիս սպառնալիքը լրջացաւ աւելի ուշ ժամանակներուն:

Ասորեստանին ընդդիմադիր տեղական ուժերը Արեւմուտքի մէջ, որոնք կ'ուզէին ազատուիլ Ասորեստանի ծանր լուծէն՝ օգտուելով Թագադար Փաղասարի բացակայութիւնէն համախմբուեցան: Անոնք յոյս ունէին օգնութիւն ստանալ Ասորեստանի ախոյեան Ուրարտուէն. որ հետեւեալ մէջբերման մէջ յիշուած է Արմինեայ-Արարատ անունով: «Հակա-ասորեստանեան կողմը հիմա իր գագաթին էր: Եգիպտոսը անկարող էր բարոյական օգնութեան աւելին ընծայելու. միւս կողմէ, Ասորեստանի թշնամիները կ'ակնկալէին շօշափելի օգնութիւնը՝ Արմինեայէն (Արարատէն), որ կանգնեցաւ Թագադար Փաղասարի դէմ երբ ան զբաղուած էր մարերով՝ հեռաւոր արեւելքի մէջ: Դաշնակցութիւն մը կազմուեցաւ Իսրայէլի Փակէէն եւ Դամասկոսի Ռասիէն, որուն միացան Փիւնիկեան երկու ծովահանգիստները՝ Տիրոսը եւ Սիդոնը, ինչպէս նաեւ մէկ քանի Պաղեստինեան աւաններ եւ Շամսի անունով արաբ թագուհի մը»⁸²:

Կոմմոսի երկրորդ ճակատամարտէն, եւ Ուրարտուի պարտութիւնէն տարիներ ետք՝ տեղական ուժերը տակաւին յոյս ունէին, որ Ուրարտուն շուտով ոտքի պիտի կանգնի եւ շարունակէ իր պայքարը Ասորեստանի դէմ: Այդ իրենց համար մեծ բարիք պիտի դառնար, ազատուելու Ասորեստանի տիրապետութիւնէն, բայց այդպէս չ'եղաւ: Միւս կողմէ, Վանի թագաւորութեան բացակայութիւնը անոնց ստիպեց իրարու հետ դաշնակցելու, փրկուելու համար Ասորեստանի գերիշխանութիւնէն:

Իսրայէլի եւ Դամասկոսի թագաւորները աշխատեցան Յուդայի թագաւորն ալ միացնել իրենց, բայց Յուդայի Աքազ թագաւորը մերժեց միանալ անոնց ընդդէմ հզօր Ասորեստանին, ինչ որ, անոնց դրդեց Յուդայի թագաւորութեան դէմ: Անոնք դիմեցին պատերազմի, ստիպելու համար Յուդայի Աքազ թագաւորին, որ միանայ իրենց:

Յուդայի Աքազ թագաւորը (732-716 Ք.Ա.) դիմեց Ասորեստանի Թագադար Փաղասար թագաւորի օգնութեան: Քաղեր Աստուածաշունչէն, «7 Աքազ Ասորեստանի Թագադար-Փաղասար թագաւորին դեսպան-

ներ դրկեց ու քսաւ. «Ես քու ծառայող ու որդիդ եմ. ելի՛ր ու զիս ազատէ՛ Ասորիներուն թագաւորին ձեռքէն ու Իսրայէլի թագաւորին ձեռքէն, որոնք իմ վրայ ելեր են»»: 8 Աքազ Տէրոսը տանը մէջ ու թագաւորին տանը գանձերուն մէջ գտնուած արծաթն ու ոսկին առաւ եւ Ասորեստանի թագաւորին ընծայ դրկեց: 9 Ասորեստանի թագաւորը անոր մտիկ ըրաւ եւ Ասորեստանի թագաւորը Դամասկոսի վրայ գնաց ու զանկաւ առաւ եւ անոր բնակիչները կիր գերի տարաւ ու Ռասիւնը մեղուց»⁸³:

Ասորեստանը խոստացաւ Յուդայի թագաւորին պաշտպանել, այնքան ժամանակ, որ Յուդան առնչութիւն չ'էր ունենար՝ Ասորեստանի թշնամիներու հետ, եւ որոշուած տարեկան հարկը կը վճարէր:

Մէջբերուած Աքազ թագաւորի օգնութեան աղերսանքին մէջ յիշուած է "ազատէ՛ Ասորիներուն թագաւորին ձեռքէն". հարկաւոր է զանազանել Ասորեստանի ժողովուրդին՝ ասորեստանցիներուն եւ Ասորիքի (Սուրիոյ) ժողովուրդի ասորիներու միջեւ, որոնց կեդրոնն էր Դամասկոսը: Ասորիները արամեացիներու յաջորդներն են, եւ անմիջական կապ չունին հիւսիսային Միջագետքի ասորեստանցիներու հետ, ի բացի որ երկու ժողովուրդներն ալ ծագումով կը պատկանին Սեմական ժողովուրդներու մեծ ընտանիքին:

Թագադար Փաղասար Գ. չ'պիտի կարենար արշաւել Արեւմուտք եւ օգնութեան հասնիլ Յուդայի Աքազ թագաւորին, եթէ ուժեղ հարուած հասցուցած չ'ըլլար Ուրարտուին, եւ գոնէ ժամանակաւորապէս հանգստացած անոր սպառնալիքէն: Այս առնչութեամբ մէջբերենք հետեւեալը, ուր յստակօրէն այդ կը շեշտուի, «Թագադար-Փաղասար անմիջապէս պատասխանեց կոչին (Աքազի կոչին) եւ 734 ան երեւցաւ Սուրիոյ մէջ՝ Ուրարտուն աւերելէ ետք»⁸⁴:

Պէտք է յիշել այստեղ, որ Դամասկոսի եւ Իսրայէլի ռազմական արշաւանքը Յուդայի դէմ շարունակութիւնն էր տարածքաշրջանի մէջ Ուրարտուի եւ Ասորեստանի պայքարին, նկատի ունենալով, որ Դամասկոսի Ռաժուն թագաւորը Ռուսա Ա-ի դաշնակիցն էր. մէջբերենք հետեւեալը Յովհաննէս Կարապոյեանէն, «Ասորեստանեան սեպագիր աղբիւրների համաձայն Թիզլարպալասար Գ-ի (745-727) օրոք Դամասկոսի (Ասորիքի) թագաւորն էր Ռաժունը, որը նախապէս բարեկամ էր ձեւանում Ասորեստանին: Սակայն, քաղաքական դէպքերի զարգացումը հասցրեց այն բանին, որ Ռաժունը բացարձակապէս անցաւ Ռուսա Ա-ի

⁸² Max L. Margolis and Alexander Marx, History of the Jewish People, Philadelphia, 1956, p. 95, 96.

⁸³ Աստուածաշունչ, Դ. ԹԱՎԻՍՏԱՆ 16:7-9:

⁸⁴ H.R.Hall, M.A., D.Litt., F.S.A., The Ancient History of the near East, London, 1924, p. 464.

կողմը՝ ընդդէմ Թիգլթպալասար Գ-ի: Բարեբախտաբար, այս մասին բաւական մանրամասն տեղեկութիւններ են պահպանուած նաեւ Աստուածաշնչում:

Այսպէս, օրինակ, Ասորիքի արքայ Ռեծունը (սեպագիր աղբիւրներում Ռածուն, Աստուածաշնչի հայերէն թարգմանութեան մէջ Ռասոն) արշաւում է Յուդայի թագաւորութեան վրայ:

Յուդայի թագաւոր Աքազը (735–715), նեղուելով թշնամիներից, դեսպան է ուղարկում Ասորեստանի Թիգլթպալասար Գ-ի մօտ՝ օգնութիւն հայցելու նպատակով, չմոռանալով նաեւ նամակ եւ թանկարժէք նուէրներ ուղարկել⁸⁵:

Ասորեստանի այս արշաւանքը Դամասկոսի վրայ տեղի ունեցած էր Ուրարտուի Ռուսա Ա-ի (735–714 թ.ա.) թագաւորութեան օրով, որովհետեւ Աքազ թագաւորած է Յուդայի վրայ 732թ.-էն ետք, երբ Ուրարտուի մէջ արդէն Սարգուրի Բ-ին յաջորդած էր իր որդին Ռուսա Ա-ը:

Պետք է յիշել այստեղ, որ Յուդայի Աքազ թագաւորի դիմումը Ասորեստանի Թիգլթպալասար Գ-ին, զգալի վնասներ հասցուց տարածքաշրջանին: Այս հարցով յատկանշական է մէջբերել հետեւեալը, «Յուսահատ, Ահազ (Աքազ) օգնութիւն խնդրեց Ասորեստանէն: Ասորեստանցիք եկան եւ յաղթեցին արշաւող զօրքերուն, բայց անոնք պահանջեցին բարձր գին իրենց օգնութեան համար: Չորս երկարատեւ հետեւանքներ յառաջացան Ահազի վարմունքէն:

1. Ասորեստանը խլեց Յուդայէն քանի մը ելեւմտական աղբիւրներ:

2. Կորուստը հարուստ Իլաթ քաղաքի, որ նշանաւոր էր որպէս կարելոր վաճառականական նաւահանգիստ:

3. Ասորեստանը աւելի հզօրացաւ տարածքաշրջանին մէջ:

4. Յուդային օգնութեան գալով, Ասորեստանը պատմեց հիւսիսային թագաւորութեանը՝ Իսրայէլին, վերջնականապէս վերջ տալով անոր գոյութեանը՝ քանի մը տարիներ ետք»⁸⁶:

Յուցակ թիւ 5ի մէջ կարելի է տեսնել, որ Կումմուխի Առաջին Ճակատամարտէն ետք սկսան Թագդաթ–Փաղասարի արշաւանքները Արեւմուտքի վրայ:

ՅՈՒՑԱԿ–ԹԻՒ 5

ԹԱԳԴԱԹ ՓԱԳԱՍԱՐ Գ.Ի ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԸՍՏ	ՏԱՐԻ	ԴԵՊՔ
Սեպագիր աղբիւրներու	Ք.Ա. 744	Արշաւանք Ուրարտուի հպատակ Նամրի երկրի վրայ
Պատմութեան	Ք.Ա. 743	Կումուխի առաջին ճակատամարտը Սարգուրի Բ-ի հետ
Աստուածաշունչի	Ք.Ա. 743–էն ետք	Փուղ թագաւորի արշաւանքը Իսրայէլի Մանայէիմ թագաւորի վրայ
Սեպագիր աղբիւրներու	Ք.Ա. 738	Արշաւանք Սուրիոյ վրայ եւ հարկերու գանձում Իսրայէլէն եւ Յուդայէն
Սեպագիր աղբիւրներու	Ք.Ա. 735	Կումուխի երկրորդ ճակատամարտը Սարգուրի Բ-ի հետ
Սեպագիր աղբիւրներու	Ք.Ա. 734	Սգնութիւն Յուդայի Աքազ թագաւորին
Աստուածաշունչի		Արշաւանք Իսրայէլի Փակէլ թագաւորի վրայ

⁸⁵ Յովհաննէս Կարապոյզեան, Աստուածաշնչական Հայաստան, էջ 125:

⁸⁶ David Barret, Christopher D.Hudson, Todd Bolen, Bible Atlas & Companion, Barbour Publishing 2008, p. 102.

10. ԱՐԵՒՄՈՒՏՔԷՆ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ՉԱՐԱԲԱՍՏԻՆ ԱՀԱՋԱՆԳ ՄԸ ԻՍՐԱՅԷԼԻՆ ԵՒ ՅՈՒԴԱՅԻՆ

Թագղաթ Փաղասար Գ-ը 734-732 թվականներին նույնպես մեզ հետաքրքրող Արևմուտքը: Ասորեստանյան զորքերը սպառնալից են լինում, եւ Թագղաթ Փաղասար Գ-ը մեծ ինքնավստահութամբ իր զինուորի վրայ, վերջինս մեծ փորձառութիւն ձեռք բերած էր իր երկարատեւ պայքարով Ուրարտուի դէմ: Այդ բոլորը Ասորեստանի գահակալին քաջալերեցին իր գրաւած բոլոր տարածքները վերածելու Ասորեստանեան կայսրութեան տեւական նահանգներ:

Ասորեստանի զինուորի զարգացման եւ հզօրացման մէջ զգալի դեր ունէր անոր պատմական պայքարը Ուրարտուի դէմ: Ասորեստանի մշտական պատերազմները Ուրարտուի դէմ, ի նպաստ Ասորեստանին, քաջալերեցին Թագղաթ Փաղասար Գ-ին Արևմուտքը նուաճելու: Այս հարցով մէջբերենք հետեւեալը, «Երբ Ասորեստանը շարժուեցաւ դէպի արեւմուտք 8-րդ դարի երկրորդ կէսին, կործանեց Իսրայէլի թագաւորութիւնը եւ Յուդան դառցուց իրեն հպատակ: Մղելով յաճախակի արշաւանքներ իր Միջագետքի հիւսիսային հողամասի մէջ, Ասորեստանը իր բանակը վերածեց պատերազմական զերագանց գործիքի, որով կարողացաւ նուաճել Մերձաւոր Արեւելքի մեծ մասը: Եսային տեսաւ Ասորեստանի յաղթանակները Իսրայէլի եւ Յուդայի վրայ որպէս Տիրոջ քաւումը իր ժողովուրդին, որոնցմէ քիչերը տակաւին մնացած էին հաւատարիմ: Ան նաեւ կանխագուշակեց Ասորեստանի անկումը, որ տեղի ունեցաւ Բաբելոնի ձեռքով 612 թ.ա. » Երբ Տէրը վերջացուց իր ամբողջ գործերը... պիտի պատմէ Ասորեստանի գոռոզ, պոռոտախօս եւ ինքնահաւան թագաւորը (Եսայեայ 10:12)»⁸⁷:

Այս մէջբերման մէջ յիշուած է Միջագետքի հիւսիսային հողամասը, որ վստահաբար կը նշանակէ Վանի թագաւորութիւնը (Ուրարտուն): Դժբախտաբար կան յայտնի եւ ծաւալուն ուսումնասիրութիւններ, ուր յստակօրէն Ուրարտուի անունը չէ յիշուած. կամ անոնք կը բաւականան վերոյիշեալ նման ոլոր ու մոլոր արտայայտութիւններով: Նման ուսումնասիրութիւններ, խաւարի մէջ կը ձգեն Հայկական լեռնաշխարհի ժողովուրդներու դերը Միջին Արեւելքի հին պատմութեան մէջ. ինչ որ, համաշխարհային չափանիշով՝ զգալի վնաս կը հասցնէ հայ ժողովուրդի Պատմութեան: Անդրադարձանք 7-րդ բաժինի մէջ այս հարցի մասին, ուր յիշեցինք քանի մը կարեւոր մէջբերումներ:

⁸⁷ Readers Digest, Great People of the Bible and How they lived, p. 222.

Սուրիոյ նուաճումը, եւ արամեացիներու պարտութիւնը եկան միանալու Արեւմուտքէն Ուրարտուի հեռացումի իրողութեան. այդ բոլորը Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններու քաղաքական դրութիւնը աւելի վտանգեցին. Ուրընըր Քիւլըր յիշած է այդ մասին, «Շարունակական իրար յաջորդող պատերազմները վերջ չ'գտան մինչեւ որ նոր աշխարհի ուժը՝ Ասորեստանը ջախջախեց Արամեացիներուն: Բայց Ասորեստանի վերելքով Իսրայէլի օրերը, արդարեւ երկու թագաւորութիւններու օրերը, հաշուած էին»⁸⁸:

Թագղաթ Փաղասար Գ. որոշած էր ընդմիշտ կործանել իր դէմ ըմբոստացած Իսրայէլի թագաւորութիւնը. ան իր կազմակերպած մեծածաւալ արշաւանքի ժամանակ 732 թ.ա. պաշարեց Իսրայէլի թագաւորութեան Սամարիա մայրաքաղաքը: Վերջինս քաղաքական անսպասելի փոփոխութեան հետեւանքով մը միայն փրկուեցաւ Թագղաթ Փաղասար Գ-ի զայրոյթէն ու չ'կործանուեցաւ, երբ Էլայի որդին՝ Ովսէէն սպանեց Ասորեստանի թշնամի Փակէէ թագաւորին, եւ թագաւոր եղաւ, ու իշխեց անոր փոխարէն (732-723 թ.ա.): Մէջբերենք Աստուածաշունչէն հետեւեալը այս քաղաքական զարգացումներու մասին, «29 Իսրայէլի Փակէէ թագաւորին օրերը Ասորեստանի Թագղաթ-Փաղասար թագաւորը եկաւ ու Իյօնը եւ Աբէլ-Բեթմաարան ու Յանովէն եւ Կադէսն ու Յասորը եւ Գաղաադն ու Գալիլիան եւ Նեփթալիմի բոլոր երկիրը առաւ ու անոնց բնակիչները Ասորեստան գերի տարաւ: 30 Էլային որդին Ովսէէն Ռովմէլային որդիին Փակէէին դէմ դաւանաւորութիւն ըրաւ եւ զանկաւ զարկաւ մեռցուց ու անոր տեղ ինք թագաւոր եղաւ Ոգիայի որդիին Յովաթամին քսաներորդ տարին»⁸⁹:

Այս արշաւանքի ժամանակ Թագղաթ Փաղասար հասաւ մինչեւ Եգիպտոսի սահմանները. իսկ Իսրայէլէն դէպի հիւսիս՝ ան գրաւեց Մակեդոնիդը, Ասորը ու Գալիլիան. եւ անոնք վերածեց Ասորեստանեան նահանգներու. տես Քարտէս թիւ 1: Այսպէս, Ուրարտուի տկարացումով եւ անոր հեռացումով այդ տարածքաշրջանէն, Ասորեստանը դառցաւ տարածքաշրջանի սանձարձակ տէրն ու տիրականը:

Անդրադառնալով Թագղաթ Փաղասար Գ-ի պատերազմներուն 734-732 թվականներին, մէջբերենք հետեւեալը, «Երկու յետին նպատակներ կային Թագղաթ Փաղասար Գ-ի նոր նախաձեռնութիւններու եւ քաղաքականութեան արեւմուտքի մէջ: (1) Ծրագրեց նուազեցնել կամ ոչնչացնել ուրարտական ազդեցութիւնը հիւսիսային Սուրիոյ մէջ եւ ամրապնդել ասորեստանեան հեղինակութիւնը այդ տարածքի մէջ: Իր անմիջական

⁸⁸ Werner Keller, The Bible As History, New York, 1995, p. 228.

⁸⁹ Աստուածաշունչ Դ. ԹԱՊԱՒՈՐԱՅ 15.27-30:

երևր նախորդներու իշխանութեան տարիներուն, Ուրարտուի թագաւորութիւնը բուն Ասորեստանէն դէպի հիւսիս եւ հիւսիս-արեւմուտք՝ ընդարձակած էր իր ներկայութիւնը եւ ազդեցութիւնը ասորեստանցիներու հաշուին»⁹⁰:

Թագաւոր Փաղասար Գ-ը նուազեցնելու կամ ոչնչացնելու համար վանի թագաւորութեան ազդեցութիւնը հիւսիսային Սուրեայէն, Պաղեստինէն եւ Հրեաստանէն, դիմեց այդ իրագործելու ուժեղ ռազմական ներկայութեամբ: Ի տարբերութիւն իր անմիջական նախորդ՝ Աշուր Նիրարի եւ ին, երբ ան փորձեց իշխել հիւսիսային Սուրիոյ վրայ, Արպադի թագաւորի հետ դաշնակցելով: Գործ մը, որ ձախողեցաւ Ուրարտուի ռազմա-քաղաքական ներկայութեան յառաջացման հետեւանքով, ինչպէս որ անդրադառնաք 6-րդ բաժինի մէջ:

Թագաւոր Փաղասար Գ-ի երկրորդ կարեւոր նպատակն էր հետեւեալը. կը քաղենք նոյն աղբիւրէն, «(2) Ասորեստանի թագաւորը կուզեր ոչ միայն ապահովել Ասորեստանի վաճառականութիւնը արեւմուտքի հետ, այլ նաեւ վերահսկելու Արեւելեան Միջերկրականի ծովափի վաճառականութիւնը: Տիրապետելով վաճառականութեան ուղիները հիւսիսային Սուրիայով դէպի արեւմտեան Փոքր Ասիայ, Ուրարտուն կը գրկեր Ասորեստանը իր կարիքաւոր իրենէն ինչպէս մետաղները, փայտեղէները եւ ձիերը: Յառաջացած պակասը Ասորեստանի մէջ, առաջ բերաւ լայնատարած ապստամբութիւններ հայրենիքի մէջ, մօտ 760 թուականէն սկսեալ: Ասորեստանի վերահսկողութիւնը արեւմուտքէն եւ հիւսիսէն եկող առեւտուրի ճանապարհներու վրայ կը նկատուէր անհրաժեշտութիւն՝ ապահովելու կարիքներու մատակարարումը եւ գոհացնելու ասորեստանեան պահանջները հայրենիքէն ներս: Հաւանաբար Թագաւոր Փաղասար շարժուեցաւ դէպի հարաւային Սուրիայ-Պաղեստին հաստատելու համար Ասորեստանի վերահսկումը ամբողջ միջտարածքային առեւտուրի արեւելեան Միջերկրականի ափի երկայնքին ու շեղելու համար արեւմուտքի վաճառականութեան հոսքը դէպի բուն Ասորեստան»⁹¹:

Ուրեմն, Ասորեստանը իր ներքին տնտեսական բարգաւաճման պահպանման համար, շարժուեցաւ դէպի Արեւմուտք, ու գրաւեց ամբողջ Սուրիան, Պաղեստինը եւ Հրեաստանը: Այդպիսով, Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւնները այս պատմաշրջանին ենթարկուեցան

Ասորեստանի ռազմական ոտնձգութիւններուն. եւ ոչ միայն այդ, այլ Թագաւոր Փաղասար Գ. առեւտրական խիստ կարեւորութիւն ներկայացնող այդ տարածքները կցեց իր կայսրութեան, որպէս Ասորեստանի նահանգներ:

Ինչպէս յիշուած է, թէ Աստուածաշունչի եւ թէ ասորեստանեան արձանագրութեանց մէջ՝ Թագաւոր Փաղասար կազմակերպեց բռնագաղթեր իր գրաւած տարածքներու ժողովուրդներուն, անոնց արմատախիլ ընելով՝ տկարացնելու ապագայի ապստամբական շարժումները: Ան կազմակերպեց ժողովուրդներու մեծ տեղաշարժեր. հետեւեալ աղբիւրը այդ տեղաշարժուած ժողովուրդներու տոկոսը կը հասցնէ բնակչութեան կէսին, ինչ որ շատ բարձր տոկոս է: Մեզ հետաքրքրողը այն է, որ Արեւմուտքի այդ գրաւուած տարածքներու մէջ բռնութեամբ բնակեցուած օտարականներու զգալի մասը բռնագաղթուած է Հայաստանէն. մէջբերենք հետեւեալ շատ կարեւոր պարբերութիւնը, «Գրեթէ բնակչութեան կէսը իւրաքանչիւր նուաճուած նահանգէն գերի տարուեցաւ, եւ անոնք փոխարինուեցան օտար գերիներով, Հայաստանէն եւ այլուր. գաղթականներ Բաբելոնեայէն եւ ուրիշներ: Հետեւաբար, բնիկ բնակչութիւնը իւրաքանչիւր այդ տարածքներէն շատ տկարացաւ. մինչ բնակեցուած օտարականները ատուեցան տեղացիներէն՝ ինչպէս եւ իրենց ասորեստանցի տերերը. բնականաբար անոնք միանալով Ասորեստանեան տերերուն իրենց նպատակ դրին բարձր պահելու Ասորեստանեան օրէնքը: Ասորեստանի նախկին թագաւորները գործադրեցին նուաճուած երկիրներէն գերիներ վերցնելը, բայց Թագաւոր-Փաղասար եղաւ առաջինը, որ այդ փորձառութիւնը կանոնաւորեց, որպէս իմացականուած քաղաքականութիւն»⁹²: Ուշագրաւ է, որ այս աղբիւրը Ուրարտուի փոխարէն կը յիշէ Արմինիայ (Հայաստան), ինչ որ պատմականօրէն տրամաբանական կոչումն էր Ուրարտուին:

Այս բռնագաղթերով Թագաւոր Փաղասար՝ մէկէ աւելի նպատակներ կ'իրագործէր մէկ կողմէն ան կը տկարացնէր Արեւմուտքի մէջ իր գրաւած տարածքներու ժողովուրդներու ուժը, միւս կողմէ, նոյնը կը կատարէր Ուրարտուի եւ Բաբելոնի նկատմամբ: Այս բռնագաղթերու քաղաքականութիւնը բաւական յաջող միջոց էր բոլոր գրաւուած տարածքներու ժողովուրդներու մօտ՝ ապստամբական շարժումները կանխարգելու: Բայց պէտք է նշել, որ հակառակ այդ բոլորին՝ հզօր Ասորեստանի մահացուցիչ հարուածի մէջ կարեւոր դեր ունեցան Բաբելոնի եւ Հայկական լեռնաշխարհի ժողովուրդները, դաշնակցելով մարերու հետ. ինչպէս որ պիտի անդրադառնանք:

⁹⁰ J. Maxwell Miller and John H. Hayes, A History of Ancient Israel and Judah, Philadelphia, 1986, p. 317, 318.

⁹¹ J. Maxwell Miller and John H. Hayes, same, p. 317, 318, 319.

⁹² H.R.Hall, M.A., D.Litt., F.S.A., The Ancient history of the Near East, London, 1924, p. 466.

Գրառուած երկիրներու ժողովուրդներու բռնագաղթերու քաղաքականութիւնը ամենուրեք ծայրահեղ թշնամանք տարածեց Ասորեստանի դէմ. եւ գրեթէ մէկ դար ետք Ասորեստանը ընդմիջտ, առանց որեւէ խղճահարութեան արմատախիլ եղաւ պատմութեան բեմէն: Մէջբերենք հետեւեալ պարբերութիւնը արաբ պատմագէտ Պսամ Ալ Ասալիէն՝ Նիմուէի կործանման մասին. «Ասորեստանեան ռազմականութիւնը փլուզեցաւ իր ծայրայեղութեան պատճառով. եւ ատելութիւնը, որ կարելի չէր մարել՝ մղիչ ուժը դառցաւ պարտուածներու համախմբման: Ահաբեկչութիւնը կը պահանջէ աւելի շատ ուժեր քան թէ, ինչ որ կը պահանջէ կակուղ պահպանման քաղաքականութիւնը. եւ բանակը իր կարողութիւնը կ'սպառէ իր բոլոր ուժերով միշտ կանգնելով՝ պատրաստ վիճակի մէջ: Ասորեստանցիք՝ բնաջնջելով Տորոս եւ Զագրոս լեռներու բնակչութիւնը, ճամբայ բացին Սև ծովի ժողովուրդ՝ սկիւրներու, եւ մարերու առաջնէ: Ինչպէս եւ, ժողովուրդներու արքունիքներու Ասորեստանի խորքը, քաջալերեց տեղի տալու ներսէն իսկական արշաւանքի, երբ անոնց զօրաւոր ղեկավարները ըմբոստացան, եւ խղճալի հողագործները ապստամբեցան: Այսպիսով, 612 Ք.Ա. դաշնակցութիւն մը յառաջացաւ մարերու եւ բարելոնցիներու միջեւ հիմնայատակ արմատախիլ ընելու ասորեստանցիներուն, ջարդով մը որուն նմանը մինչեւ այդ տեղի չէր ունեցած: Նիմուէի կործանումը լրիւ էր, այնպէս որ Քսենոֆոնի եւ իր տաս հազար յոյն վարձկան զինուորներու միտքէն չ'անցաւ, թէ այդ վայրի մէջ թաղաք մը կար, երբ երկու դար ետք անցան Նիմուէի փլատակներու առջեւէն»⁹³:

Քսենոֆոն, որ յայտնի յոյն մատենագիր եւ զօրավար էր. 401 Ք.Ա. մաս կը կազմէր տասհազարանոց վարաձկաններու յունական բանակին, որ արշաւեց Պարսկաստան պաշտպանելու պարսիկ Աքեմէնեան գահի թեկնածուին: Յունական վարաձկաններու բանակը իրենց պաշտպանած թեկնածուի սպանութիւնէն ետք, այլեւս որոշ նպատակ չ'ունենալով նահանջեց Բաբելոնէն, դէպի Ասորեստան, ապա Հայաստանի վրայով դէպի Յունաստան: Բարեբախտաբար Քսենոֆոն գրի առաւ յունական բանակի նահանջի ընթացքին իր բոլոր տեսածները որպէս ականատես. յետագային Քսենոֆոն այդ գրութիւնները հաւաքեց մէկ գիրքի մէջ «Անաբասիս» (Տասը Հազարի Նահանջը) խորագրին տակ. ուր յիշատակութիւն չկար Նիմուէի մասին. ինչպէս նշուած է վերոյիշեալ մէջբերման մէջ:

⁹³ Պսամ Ալ Ասալի, էլ Հարր ու էլ Հադարա (Պատերազմ եւ Քաղաքակրթութիւն -Արաբներով), Պէյրութ, էջ 138:

Յիշենք այստեղ, որ Աստուածաշունչի Ասորեստանեան ժամանակաշրջանի մարգարեներէն Նավումը՝ վկայած է Ասորեստանի ցոյց տուած այս դժման վերաբերմունքին տարածքաշրջանի այլ ազգերուն, որոնցմէ էին Իսրայէլի եւ Յուդայի հրեայ ժողովուրդները: Ան գուշակած է նաեւ Նիմուէի կործանումը, որպէս պատիժ ասորեստացիներու յիշեալ արարքներուն:

11. ՌՈՒՍԱ Ա. ԵՒ ՍԱԼՄԱՆՍԱՐ Ե. ՈՒ ՍԱՄԱՐԻԱՅԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Ասորեստանի մէջ, 726 Ք.Ա. Թիգլաթ Պալասար (Թագաւոր Փաղասար) Գ-ին յաջորդեց իր որդին Սալմանասար Ե. (726-722 Ք.Ա.), որ ստացաւ իր հօրմէ ընդարձակ կայսրութիւն մը, եւ անոր պահպանման ծանր բեռը, որուն հետեւանքով կարճատեւ եղաւ իր թագաւորութեան շրջանը:

Սալմանասար Ե-ի օրով Արեւմուտքի մէջ նոր դաշինք մը յառաջացաւ, որուն առաջին անգամ ըլլալով միացաւ Եգիպտոսը. որովհետեւ Եգիպտոսի շահերը Սուրիոյ մէջ՝ սկսած էին տուժել Ասորեստանի արշաւանքներով Թիգլաթ Պալասար Գ-ի օրով՝ ինչպէս յիշեցիք անցեալ բաժինի մէջ: Բնականաբար տեղական այս նոր դաշինքին նեցուկ կը կանգնէր նաեւ Ասորեստանի պատմական մրցակիցը՝ Ուրարտուն:

Սալմանասար Ե. 725 Ք.Ա. արշաւեց Արեւմուտք եւ պաշարեց Իսրայէլի թագաւորութեան Սամարիա մայրաքաղաքը: Սամարիան անվախօրէն՝ Եգիպտոսի եւ հաւանաբար Ուրարտուի քաջալերութեամբ ապստամբեցաւ, Ասորեստանի դէմ: Սամարիայի պատմական պաշարումը տեւեց մօտ երեք երկար տարիներ, որուն ընթացքին Ասորեստանի բանակը մեծ կորուստներ ունեցաւ: Այս արշաւանքի մասին քաղերը Աստուածաշունչէն հետեւեալը, «1 Յուդայի Աթազ թագաւորին տասնըներկորդ տարին Իսրայէլի վրայ էլայի որդին Ովսէն թագաւոր եղաւ Սամարիայի մէջ ու ինը տարի թագաւորեց: 2 Տէրոջը առջեւ չարութիւն ըրաւ, բայց ոչ իրմէ առաջ եղող Իսրայէլի թագաւորներուն պէս: 3 Ասոր դէմ ելաւ Ասորեստանի Սաղմանասար թագաւորը: Ովսէն անոր ծառայ եղաւ ու անոր հարկ կու տար: 4 Ասորեստանի թագաւորը Ովսէնի վրայ նեցգութիւն գտաւ, որովհետեւ անկա Եգիպտոսի Սովա թագաւորին ղեսպաններ ղրկեր էր ու Ասորեստանի թագաւորին ամէն տարուան հարկը վճարած չէր, ուստի Ասորեստանի թագաւորը զանկա

բռնեց ու բանտին մէջ կապեց: 5 Ասորեստանի թագաւորը բոլոր երկրին վրայ արշաւեց. Սամարիայի վրայ ալ արշաւեց ու զանկա երեք տարի պաշարեց»⁹⁴:

Ուրեմն Սալմանասար Ե. կամ Սաղմանասար թագաւորը ինչպէս յիշուած է Աստուածաշունչի մէջ, Սամարիան պաշարեց երեք տարի 725–723 Ք.Ա. ու չ'կարողացաւ զայն գրաւել. հակառակ այն ճշմարտութեանը, որ Ասորեստանի բանակը կը գտնուէր իր ռազմական հզօրութեան մէջ: Այս երկարատեւ պաշարումը հին պատմութեան մէջ շատ հազուագիւտ էր, երբ Սամարիայի նման փոքրիկ բերդաքաղաք մը դիմադրեց ամբողջ երեք տարի՝ եւ Ասորեստանի նման հզօր զինուորի մը: Սալմանասարի անյաջողութիւնը կարելի է վերագրել ոչ միայն Սամարիայի անառիկութեան եւ բուռն դիմադրութեան, այլ հետեւեալ արտաքին ու ներքին հարցերու:

Սամարիայի պաշարման ընթացքին Ասորեստանեան ներքին վիճակը կայուն չէր: Ասորեստանի մէջ ապստամբութիւն ծագեցաւ, որուն դրդապատճառներէն էին Սալմանասար Ե-ի ներքին քաղաքականութիւնը, ուր ան փորձեց իր հիմնական յենարանը դարձնել բանակը՝ ի հենուկա ազնուականութեան ու քրմութեան ցանկութիւններուն: Սալմանասար Ե-ի հրահանգը, որով ան ջնջեց Աշուր աստուծոյ տաճարներու արտօնութիւնները, ներքին զայրոյթ եւ ատելութիւն պատճառեց իր անձի դէմ: Ի վերջոյ Սալմանասար Ե. դաւադրութեամբ սպանուեցաւ 722 Ք.Ա. եւ Սարգոն Բ. գահ բարձրացաւ:

Միեւնոյն ժամանակ Ասորեստանի քաղաքական արտաքին վիճակը հաստատուն չէր, Ուրարտուն կրկին սկսած էր իր ռազմական գործողութիւնները Ասորեստանի դէմ՝ օգտուելով Ասորեստանի ներքին եւ արտաքին ծանր վիճակէն: Մէջբերենք հետեւեալը, «Ըստ երեւոյթիմ, ասորեստանի համար ստեղծուած այդ ծանր ժամանակներին է վերաբերում Ռուսա Ա-ի քաղաքականութեան աշխուժացումը եւ ռազմական որոշ յաջողութիւնները հարաւում: Այդ մասին է պատմում Թոփուզալայի աստուրա-ուրարտական երկլեզուեան արձանագրութիւնը: Այդ աղբիւրի համաձայն, Ռուսա Ա-ը դեռեւս շարունակում է պահպանել իր դիրքերը անառիկ լեռներում ընկած անմատչելի անտառներով ծածկուած, ստրատեգիական խոշոր նշանակութիւն ունեցող Արդիինի-Մուսասիրում: Այստեղ ուրարտական թագաւորը նախ ծաւալում է պաշտամունքային բնոյթի զանազան կառոյցների շինարարութիւն, այնուհետեւ իր բանակը համալրելով Մուսասիրի թագաւոր Ուրզանայի տրամադրած օժանդակ զօրքերով ու մարտակառքերով, շարժում է

դէպի "Ասորեստանի լեռները", ուր մեծ կորուստներ է պատճառում թշնամուն»⁹⁵:

Նոյն այս հարցի մասին մէջբերենք Գուրգեն Կարապետեանէն, ուր ան խօսելով Սամարիայի պաշարումի եւ Սալմանասարի սպանութեան մասին կըսէ, «Օգտուելով Ասորեստանի ժամանակաւոր թուլացումից Ռուսա I-ը, իրեն միացնելով Մուծածիրի զօրքերը, արշաւեց Ասորեստան, որի մասին թողեց արձանագրութիւն: Հաւանաբար սա Վանի թագաւորութեան վերջին արտաքին արշաւանքն էր Ասորեստանի դէմ, որովհետեւ Ասորեստանում գահ բարձրացաւ Սարգոն II-ը, որի կառավարման տարիները համապատասխանում են Ասորեստանի ամենամեծ հզօրութեան ժամանակաշրջանին»⁹⁶:

Ռուսա Ա-ի ռազմական գործողութիւնները Ասորեստանի դէմ կարելի է բացատրել հետեւեալ կերպով. Ասորեստանը զբաղուած էր Սամարեայի պաշարումով, հետեւաբար շատ յարմար առիթ էր Վանի թագաւորութեան իր սահմանները աւելի ընդարձակելու, ի հարկէ՝ Ասորեստանի հաշուին:

Պատմական որեւէ տեղեկութիւններ հասած չեն մեզի, թէ ինչ կապ կար Ռուսա Ա-ի այս ռազմական գործողութեան եւ Սամարեայ քաղաքի պաշարման միջեւ: Ուրարտուի շահին էր Ասորեստանի զբաղուածութիւնը պատերազմներով հեռաւոր վայրերու մէջ, միեւնոյն ժամանակ Ուրարտուի շահին չէր Ասորեստանի յաղթանակը, որովհետեւ այդ պիտի քաջալերէր անոր յառաջխաղացումը դէպի Եգիպտոս եւ Միջերկրականի հարուստ նաւահանգիստները, որոնց գրաւումով՝ Ասորեստանը պիտի հարուստանար ու զօրանար, եւ այդպիսով Վանի թագաւորութեան առջեւ պիտի փակուէր այդ նաւահանգիստներու շահաւէտ վաճառականութիւնը:

Եզրափակենք, Սամարեայի երեք տարի տեւող պաշարումը՝ ոսկի առիթ էր Ուրարտուի համար, որմէ փորձեց օգտուիլ Ռուսա Ա. ընդարձակելու իր պետութեան հարաւային սահմանները:

⁹⁵ Հայ փողովորդի Պատմութիւն, հատոր 1, Երեւան, 1971, էջ 321:

⁹⁶ Գուրգեն Կարապետեան, Հայոց Պատմութեան Ուրուագծեր, 1. հատոր, Երեւան, 2002, էջ 230, 231:

⁹⁴ Աստուածաշունչ, Դ. ԹԱԳԱՆՈՐԱՅ 17:1–5:

12. ՌՈՒՍԱ Ա., ՍԱՐԳՈՆ Բ. ՌԻ ՍԱՄԱՐԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

Ասորեստանի նոր գահակալ Սարգոն Բ-ի (722-705 թ.ա.) առաջ կը կանգնէին ռազմաքաղաքական պայքարի, նոյն հին երեք ճակատները, որոնցմէ էին Դամասկոսի, Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւնները: Նոյն այդ հարցերով զբաղուեցաւ իրմէ առաջ Թիգլաթ Պալասար Գ-ը ինչպէս յիշեցինք. մէջբերենք հետեւեալը, «Այս նոր թագաւորի կեանքը, որ ի վերջոյ զօհուեցաւ պատերազմի դաշտին մէջ վասն կայսրութեան, կրկնութիւն մըն էր Թիգլաթ Պալասար Գ-ի կեանքին: Սարգոն Բ-ի պարտականութիւնները հետեւեալներն էին.

1-Արամէական փոքր պետութիւնները Բաբելոնի երկրին մէջ, եւ Բաբելոնի թագաւորութիւնը:

2-Ուրարտուն եւ հիւսիսային ու հիւսիս-արեւելեան ժողովուրդները:

3-Ասորիքը եւ Պաղեստինը»⁹⁷:

Սարգոն Բ-ի կեանքը եղաւ ռազմական արշաւանքներու շարան մը, վերանուանելու իր դէմ ապստամբած երկիրները: Ան ջանաց պահպանել Ասորեստանի կայսրութիւնը իր ընդարձակ սահմաններով. ինչ որ ինչպէս պիտի տեսնենք, իր եւ Ասորեստանի ռազմական ուժերէն շատ վեր էին:

Յայտնի արաբ պատմաբան Տահա Պակըր հետեւեալ մէջբերումի մէջ Ուրարտուն կը կոչէ հայկական պետութիւնը, արաբերէնով Ալ Տաուլա էլ արմէնիաթ, ինչ որ պատմականօրէն շատ ճիշդ բնորոշում է: Իօսելով Սարգոն Բ-ի արշաւանքներու դրդապատճառներու մասին, ան կ'անդրադառնայ Ասորեստանի դէմ գոյացած եւ չ'յայտարարուած դաշնակցութեան մասին, հիմնուելով "Թշնամիիս թշնամին բարեկամս է"՝ գաղափարախօսութեան վրայ: «Սարգոն Բ. զբաղուեցաւ հպատակ երկիրներու կարեւոր հարցերը լուծելով, հարցերէն մաս մը արդիւնք էին իշխանութեան փոփոխութեան, եւ մաս մըն ալ, որ մեծ մասն էր, արդիւնք էին իր նախորդ թագաւորի՝ Թիգլաթ-Պալասարի հեռաւոր նուաճումներուն Իրանի մէջ, եւ ճնշումը Իլամական պետութեան վրայ. ինչպէս նաեւ Սուրիոյ, Փիւնիկիոյ եւ Պաղեստինի գրաւումը Ասորեստանի կողմէ. Եգիպտական պետութիւնէն խլեցին իր ամենակարեւոր տնտեսական եկամուտները եւ ծովային ու ցամաքային կապակցութիւնները: Այս բոլորին վրայ Հայկական պետութիւնը կ'սպասէր հարմար առիթին ազատուելու համար ասորեստանեան ազդեցութենէն: Այս

բոլորը՝ այդ երեք պետութիւնները դարձուցին բնական դաշնակիցներ ասորեստանցիներու դէմ»⁹⁸:

Սարգոն Բ.՝ նշանաւոր եղաւ պատմութեան մէջ, իր լաւ կազմակերպած հետախուզական լրտեսական ցանցերով: Ան մեծ ուշադրութեամբ կը հետեւէր Ուրարտուի ներքին եւ արտաքին լուրերուն, որոնք կ'ըստանար իր զինուորագրած բազմաթիւ լրտեսներէն: Սարգոն Բ. իր գահակալութեան յաջորդ տարին իսկ՝ որոշեց շարունակել իր նախորդի յարձակումը եւ վերջնականօրէն գրաւել Իսրայէլի Սամարիա մայրաքաղաքը, ու կործանել Իսրայէլի թագաւորութիւնը:

Սարգոն Բ. իր ստացած հետախուզական լրտեսական ցանցերէն բաւարար տեղեկութիւններ ստացած էր, որ Ուրարտուի Ռուսա Ա. թագաւորը զբաղուած էր հնդեւրոպացի կիմմիրներու արշաւանքին առաջը առնելով, ու հետեւաբար Ասորեստանի համար Ուրարտուի ներկայացուցած վտանգը վնասազերծուած էր: Միւս կողմէ, Բաբելոնի մէջ վիճակը շատ լարուած չէր, Սալմանասր Ե-ի սպանութիւնը ժամանակի մը համար մեղմացուցած էր բաբելոնցիներու ատելութիւնը Ասորեստանին: Ուստի ժամանակը շատ հարմար էր, օգտուելու առիթէն եւ վերջ տալու իր նախորդի՝ Սալմանասր Ե-ի Սամարիան գրաւելու անյաջող փորձին, ինչպէս յիշեցինք:

Սարգոն Բ. կազմակերպեց իր պատմական արշաւանքը Իսրայէլի վրայ. ան իր նախորդներէն շատ աւելի խիստ վարուեցաւ Իսրայէլի թագաւորութեան հետ: Սարգոն Բ. ընդմիջտ պատմութեան բեմէն հեռացուց այդ պետութիւնը, որ Ովսէլ (732-722 թ.ա.) թագաւորի օրով կը փորձեր ազատուիլ ասորեստանեան լուծէն՝ դաշնակցելով հեռաւոր Եգիպտոսի հետ, եւ հաւանաբար Ուրարտուի հետ, որ Ռուսա Ա-ի (735-714? թ.ա.) ղեկավարութեամբ կ'աշխատէր հաւաքել իր ուժերը եւ շարունակել պայքարը Ասորեստանի դէմ:

Իսրայէլի վերջին թագաւոր Ովսէլի այդ քայլը դաշնակցելու հեռաւոր Եգիպտոսի հետ կը բացատրուի, որպէս աղետալի քայլ մը⁹⁹: Այո, Ովսէլի այդ քայլը ճակատագրային սխալ եղաւ, եւ աղետալի արդիւնք ունեցաւ, քանի որ Եգիպտոսը այդ հանգրուանին ի զօրու չէր կանգնելու Ասորեստանի ոտնձգութիւններուն դէմ. իսկ Ուրարտուն զբաղուած էր հնդեւրոպացի կիմմիրներու ներկայացուցած վտանգը հեռացնելով:

⁹⁷ Անտոն Մօրտկալ, Թարիխ էլ-Շարկ էլ-Ատնա էլ-Կատիմ (Պատմութիւն Հին Միջին Արեւելքի), էջ 303:

⁹⁸ Տահա Պակըր, Մուկատամա Ֆի Թարիխ էլ-Հատարաթ էլ-Կատիմա (Մուտք Հին Քաղաքակրթութեանց Պատմութեան-Արաբերէնով), էջ 511:

⁹⁹ The Oxford Companion to the Bible, 1993, p.332.

Ասորեստանի Սարգոն Բ. թագաւորը 721 Ք.Ա. արշաւեց Իսրայէլի միմակ եւ անօգնական մնացած թագաւորութեան վրայ, գրաւեց եւ կողոպտեց Սամարիա մայրաքաղաքը. գերի տարաւ քաղաքի բնակչութեան հիմնական մասը: Սամարիայի անկման մասին Աստուածաշունչի մէջ գրուած է, «6 Ովսէէին իններորդ տարին Ասորեստանի թագաւորը Սամարիան առաւ ու Իսրայէլը Ասորեստան փոխադրեց եւ զանոնք Գովզան գետին թով Քաղայի ու Քաթովրի մէջ ու Մարնու քաղաքներուն մէջ բնակեցուց, 7 քանգի Իսրայէլի որդիները զիրենք Եգիպտոսի երկրէն, Եգիպտոսի Փարաոն թագաւորին ձեռքէն ազատող իրենց Տէր աստուծոյն դէմ մեղք գործեցին եւ ուրիշ աստուածներու վախցան»¹⁰⁰: Ինչպէս յիշուած է, Տէրը Իսրայէլին տուաւ Ասորեստանի ձեռքը զայն պատժելու, որովհետեւ անոնք հեռացած էին Աստուծոյ ճամբայէն: Ասորեստանի ժամանակակից մարգարէներէն Միքիան կանխատեսաւ Սամարիայի, ինչպէս եւ Երուսաղէմի անկումը: Միքիա Ք.Ա. 8-րդ դարի մարգարէ էր, եւ ժամանակակիցը Եսայի, Ամովսի եւ Ովսեայ մարգարէներուն: Ան կապեր Յուդայի գիւղերէն մէկուն մէջ. եւ իր կոչը ուղղուած էր Իսրայէլի մայրաքաղաք Սամարիայի, ինչպէս նաեւ Երուսաղէմի բնակիչներուն¹⁰¹:

Աստուածաշունչէն քաղուած յիշեալ մէջբերման մէջ չէ յիշուած Ասորեստանի թագաւորին անունը: Մէկ այլ տեղ յիշուած է, որ ան Սաղմանասարն էր, մէջբերենք հետեւեալը, «9 Եզեկիա թագաւորին չորրորդ տարին, որ Իսրայէլի թագաւորին՝ Էլայի որդիին Ովսէէին՝ եօթներորդ տարին էր, Ասորեստանի Սաղմանասար թագաւորը Սամարիայի վրայ յարձակեցաւ ու զանկաւ պաշարեց: 10 Երեք տարիէն զանկաւ առաւ: Սամարիա Եզեկիայի վեցերորդ տարին (այսինքն Իսրայէլի թագաւորին Ովսէէին իններորդ տարին) առնուեցաւ»¹⁰²: Անհրաժեշտ է յիշել այստեղ, որ գրեթէ բոլոր պատմական աղբիւրները կը յիշեն, որ Սարգոն Բ-ն էր, որ գրաւեց Սամարիան ու վերջ տուաւ Իսրայէլի թագաւորութեան, եւ ոչ թէ՛ իր նախորդ Սաղմանասարը:

Այսպիսով, կործանուեցաւ հրեական հիւսիսային թագաւորութիւնը՝ Իսրայէլը, որուն վերջին թագաւորը եղաւ Ովսէ (732-722 Ք.Ա.) տես Յուցակ թիւ 1: Իսրայէլի վերջնական հեռացումը պատմութեան բեմէն Ասորեստանի ձեռքով՝ հարուած մըն էր Ուրարտուի հեռաւոր շահերուն, քանի որ Դամասկոսը, Իսրայէլը եւ տարածքի միւս

փոքր թագաւորութիւնները Ուրարտուի տեղական կարեւոր դաշնակիցներն էին Ասորեստանի դէմ: Յիշեցինք 11-րդ բաժինի մէջ, թէ ինչպէս Ուրարտուն օգտուեցաւ այն երեք տարիներէն՝ երբ Սաղմանասար Ե. զբաղուած էր Իսրայէլի մայրաքաղաք՝ Սամարիայի պաշարումով, ու փորձեց ընդարձակել իր սահմանները Ասորեստանի հաշուին:

Հետեւեալ մէջբերման մէջ, յայտնի ուրարտագէտ Պորիս Բիթթովսքի շատ համառօտ՝ կը լուսաբանէ Ասորեստանի եւ Ուրարտուի միջեւ տեղի ունեցած քաղաքական զարգացումները, եւ Սուրիոյ ու Պաղեստինի ներգործութիւնը այդ քաղաքականութեան վրայ: Կը լուսաբանէ նաեւ Ուրարտուի Ռուսա Ա. թագաւորի վարած քաղաքականութիւնը Ասորեստանի նկատմամբ: Մէջբերենք հետեւեալը, «Ներքին եւ արտաքին պայքարի այս դժուարին պայմաններու մէջ, Ռուսա Ա. փորձեց պահպանել իր թագաւորութեան ուժը: Ան հետապնդեց ճարպիկ արտաքին քաղաքականութիւն, խուսափելով բացայայտ բախումէ Ասորեստանի հետ. այժմ վերահաստատեց իր նախկին զօրութիւնը, եւ սկսաւ փնտռել իր սահմաններու ապահովութեան պահպանումը դաշինքներով՝ իր հարեւան երկիրներու տիրողներու հետ: Բարեբաղդաբար ասորեստանցի թագաւորը, Սաղմանասար Ե., զբաղուած էր ներքին խռովութիւններով եւ չ'կարողացաւ մտածել Ուրարտուի մասին: Այսուհանդերձ 722 Ք.Ա. յանկարծակի փոփոխութիւն եղաւ կացութեան մէջ, երբ Սարգոն, Թիգլաթ Պալասար Գ-ի որդին, տապալեց իր եղբայրը եւ յափշտակեց ասորեստանեան զահր: Իր գահակալութեան սկիզբէն իսկ Սարգոն ցոյց տուաւ խիստ շահագրգռութիւն իր հարեւան երկիրներու մէջ ընթացող դէպքերուն: Սուրիոյ եւ Պաղեստինի մէջ, ան հետաքրքրուած էր փոքրիկ իշխանութիւններու մէջ տեղի ունեցող աշխուժութիւններով, որոնց կ'երկրորդէր Եգիպտոսը. հարաւի մէջ իր նպատակն էր Բաբելոնը բերել ենթարկումի. եւ հիւսիսի մէջ ան պատրաստուեցաւ կործանելու իր մշտական թշնամին, Ուրարտուի թագաւորութիւնը: Սարգոն սկսաւ զբաղուիլ Սուրիայով եւ Պաղեստինով, պարտութեան մատնելով Եգիպտոսի Շաբաս փարաւոնի ուժերը, եւ ետքը իր ուշադրութիւնը դարձուց հիւսիսային ճակատի վրայ»¹⁰³:

Ռուսա Ա. (735-714 Ք.Ա.) իր բանակը վերականգնակերպելէ ետք, սկսաւ ընդհատուած պայքարը Ասորեստանի դէմ: Ան պայքարի դաշտը Հայկական լեռնաշխարհի սահմաններէն հեռացնելու միտումով՝ եւ այլ պատճառներով, զարկ տուաւ նոր դաշինքի մը Արեւմուտքի մէջ: Ռուսա Ա. իր զինակիցներու ցանկին վրայ աւելցուց հնդեւրոպացի ժողովուրդներէն Մուշգիներուն:

¹⁰⁰. Աստուածաշունչ, Դ. ԹԱԳԱՆՈՐԱՅ, Սամարիայի անկումը 17:6:

¹⁰¹. Աստուածաշունչ, ՄԱՐԳԱՐԷՆԹԻՍԻՆ, ՄԻՔԻԱՅԻ 1:

¹⁰². Աստուածաշունչ, Դ. ԹԱԳԱՆՈՐԱՅ, 18:9-10:

¹⁰³. Boris B. Piotrovsky, The Ancient Civilization of Urartu, Geneva, 1969, p. 86.

Սարգոն Բ. նախագահով այս նոր դաշինքի վտանգը, արագ շարժեցաւ հարուածելու զայն, ի մասնաւորի երբ Կարթէմիշի Հաթական թագաւորութիւնը քաջալերուելով Ռուսա Ա-էն յայտարարեց իր անջատումը ասորեստանեան կայսրութիւնէն, փորձելով ազատիլ Ասորեստանի ծանր լուծէն: Սարգոն Բ. 717 Ք.Ա. հսկայ բանակով արշաւեց Կարթէմիշի հաթական պետութեան վրայ, եւ վերջ տուաւ հաթերու այդ վերջին պետութեան:

Կարթէմիշի թագաւորութեան անկումը եւ Իսրայէլի կործանումը պատմութեան բեմէն հեռացուցին Վանի թագաւորութեան երկու թեկնածու դաշնակիցներ: Այդպիսով, Ուրարտուն մէկ առ մէկ կը կորսնցնէր իր դաշնակիցները Արեւմտքի մէջ:

Սարգոն Բ. 714 Ք.Ա. կազմակերպեց իր հռչակաւոր արշաւանքը Ուրարտուի վրայ: Այս արշաւանքի վերջաւորութեան ան անակնկալօրէն յարձակեցաւ եւ կողոպտեց Ուրարտուի Մուսասիր կրօնական քաղաքը, փրկելու համար իր արշաւանքը ստոյգ ճախորդութիւնէ:

Սարգոն Բ-ի վերջին տարիներու մասին շատ տեղեկութիւններ հասած չեն մեզի: Անոր վերջին արշաւանքը եղաւ արեւելեան Փոքր Ասիոյ մէջ գտնուող Թապալ կոչուող երկրի վրայ, ուր տեղի ունեցաւ անոր եղերական մահը, պատերազմի դաշտին վրայ, կամ դաւադրութեան մը հետեւանքով, որուն ետեւ հաւանաբար կանգնած էր իր որդին Սենքերիմ կամ Սինհարիբ: Ինչ որ հաստատ է, Սարգոն Բ. սպանուեցաւ 705 Ք.Ա. ու չ'արժանացաւ թաղուելու Ասորեստանի մէջ: Ընդունուած կարծիքը այն է, որ ան ինկաւ պատերազմի դաշտի մէջ՝ հնդեւրոպացի կիմմիթներու դէմ մղուած պատերազմի ժամանակ, Կիլիկիոյ մէջ:

Դ. ԳԼՈՒԽ

ՈՒՐԱՐՏՈՒԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՍՏՈՒԱԾԱՅՈՒՆՉԻ ՄԷՋ

Ի տարբերութիւն անցեալ Գլուխի բաժիններու պատմութեան, տեսանք, թէ Ուրարտուի ներկայութիւնը այդ դէպքերու զարգացման մէջ զգալի էր, բայց Աստուածաշունչի մէջ որեւէ յիշատակութիւն չկար: Այս Գլուխի բաժիններու պատմութեան մասին յիշատակութիւններ կան Աստուածաշունչի մէջ, որոնց պիտի անդրադառնանք յաջորդաբար պատմական դէպքերու ժամանակագրային հետեւողականութեամբ:

Մեզ հետաքրքրող յիշատակութիւնները ամփոփուած կը տեսնէք Յուցակ թիւ-6ի մէջ. յաջորդ բաժիններու միւթերը աւելի մատչելի դարձնելու համար:

Այստեղ անհրաժեշտ է յիշել, որ յառաջիկայ բաժիններու մէջ մեր նպատակն է քննարկել Աստուածաշունչի մէջ յիշուած միայն պատմական տեղեկութիւնները Հայաստանի (Ուրարտուի, կամ Արարատեան թագաւորութեան) մասին. մենք պիտի չ'անդրադառնանք Աստուածաշունչի մէջ յիշուած նախապատմական դարաշրջանի երկու այլ կարեւոր դրուագներու մասին, որոնք են, Եդէմ-դրախտը իր չորս գետերով¹⁰⁴, եւ մեծ ջրհեղեղի պատմութիւնն ու Նոյեան տապանի նստիլը Արարատի լեռներուն վրայ¹⁰⁵:

1. ՍԻՆՀԱՐԻԲԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՒՐԱՐՏՈՒՆ

Ասորեստանի մէջ Սարգոն Բ-ին յաջորդեց իր որդին Սինհարիբ (705-681 Ք.Ա.): Ան իր հօր նման եղաւ հզօր թագաւոր մը: Սարգոն Բ-ի մահէն ետք, Ասորեստանի գերիշխանութեան դէմ ապստամբութիւններ ծագեցան Բաբելոնի, Սուրիոյ եւ Հրեաստանի մէջ: Սինհարիբ խստօրէն ճնշեց այդ ապստամբութիւնները. ան գրեթէ հիմնայատակ կործանեց Բաբելոն քաղաքը 689 Ք.Ա.: Բաբելոնի ապստամբութիւնը եւ անոր անլուծելի հարցը Ասորեստանի համար կենաց մահու հարց էր. ինչպէս պիտի տեսնենք մահացուցիչ հարուածը Ասորեստանին, եկաւ Բաբելոնէն. հետեւաբար Ասորեստանի մտավախութիւնները Բաբելոնէն, շատ արդարացի էին:

¹⁰⁴ Աստուածաշունչ, ԾՆՆԴՈՅ, 2:11-15:

¹⁰⁵ Աստուածաշունչ, ԾՆՆԴՈՅ, 8:4:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՄԱՐԳԱՐԷ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԸՐՋԱՆ Ք.Ա.	ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹԸ	ՏԱՐԵՐԺԱՆ Ք.Ա.	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԸ	ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ
Եսայեայ 740-690	Սինհարիբի սպանությունը	681	Արարատի երկիր	Մարգարեություն Եսայեայ 37:36,38
Եսայեայ	Սինհարիբի սպանությունը	681	Արարատի երկիր	Դ.Թագաորաց 19:36-37
Երեմիայ 626-587,4	Նաբո գործնուոր Բ-ի արշաանքը	594-592	Արարատի թագաորություն	Մարգարեություն Երեմիայի 51:27
Եզեկիել	Գողգործիք Աստուծոյ	593	Թորգոմա Տուն	Մարգարեություն Եզեկիելի 38-5,6
Եզեկիել	Թաղման երգ մը Տիրոսին համար	Հաւանաբար 593	Թորգոմա Տուն	Մարգարեություն Եզեկիելի 27-14

Անհրաժեշտ է լիջել որ Աստուածաշունչի մէջ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ Գիրքի մէջ կան 16 Մարգարեներու անուններ՝ ներքիւ լիջուած հետեւողականութեամբ: Այս մարգարեներէն առաջին երեքը Եսայեայ, Երեմիայ եւ Եզեկիել միայն ունին լիջատակութիւններ Հայաստանի մասին ինչպէս որ ցոյց կուտանք Յուցակ Թիւ 6-ի մէջ:

Մարգարեներու անուններն են-

- | | |
|--------------|----------------|
| 1. Եսայեայ | 2. Երեմիայ |
| 3. Եզեկիելի | 4. Դանիէլի |
| 5. Ովսեայ | 6. Յովելեայ |
| 7. Ամովսայ | 8. Աբդիու |
| 9. Յովնանու | 10. Միքիայ |
| 11. Նաոււմայ | 12. Ամբակումայ |
| 13. Սոփոնեայ | 14. Անգեայ |
| 15. Զաքարեայ | 16. Մաղաքեայ |

Երբ Սարգոն Բ. սպանուեցաւ 705 Ք.Ա., Յուդայի Եզեկիա թագաորը, յարմար գտաւ՝ օգտուելու ստեղծուած իրավիճակէն, ազատուելու Ասորեստանի գերիշխանութիւնէն: Եզեկիա սկսաւ համագործակցիլ Ասորեստանի դէմ ապստամբած բաբելոնցիներու հետ. հանդիպեցաւ Մարդաք Բաղդանի պատգամաբերներուն ու բաբելոնցիներու հակաստորեստանեան առաջնորդին: Եզեկիա թագաորը, շարժուեցաւ Յուդայի սահմաններու մօտ գտնուող, եւ ասորեստանցիներու կողմնակից Ակկարոնի թագաւորին դէմ. վերջինս գերի տարուեցաւ Երուսաղէմ: Այս բոլորը Յուդայի կողմէ, թշնամական գործողութիւններ էին ուղղուած Ասորեստանի դէմ:

Կարելի է ըսել, որ Յուդայի Եզեկիա թագաւորի քայլերը անխոհեմ էին: Ասորեստանի մօր թագաւորը՝ Սենքերիմ (Սինհարիբ) ջախջախեց բաբելոնցիներու ապստամբութիւնը, ապա արշաւեց դէպի Արեւմուտք. մանաւանդ, որ հիւսիսէն Ուրարտուն ալ ժամանակ լուրջ վտանգ չէր ներկայացնէր Ասորեստանին:

Նախ բացատրենք Վանի թագաւորութեան (Ուրարտուի) վիճակը, ապա անցնինք խօսելու Յուդայի Եզեկիա թագաւորին պատմելու՝ Ասորեստանի արշաւանքի մասին:

Այս պատմահանգրուանին Ասորեստանի պատմական ոսոխը՝ Ուրարտուն, զբաղած էր հնդեւրոպացի կիմֆրներու արշաւանքները կասեցնելով, եւ ի վիճակի չէր Ասորեստանը վտանգելու: Հակառակը՝ Ուրարտուի Արգիշտի Բ. (714-685 Ք.Ա.) թագաւորը 704 Ք.Ա. ստիպուեցաւ խաղաղութեան դեսպանութիւն մը ղրկել Ասորեստան տես Յուցակ Թիւ 7: Սինհարիբ բաբելամութիւն ցոյց տուաւ Ուրարտուի խաղաղասէր դեսպանութեան. ու երկու մշտնջենական ոսոխները կնքեցին խաղաղութեան դաշինք մը:

Ինչպէս կը տեսնենք չիշեալ Յուցակին մէջ Ուրարտուի գաւառակները չորս անգամ խաղաղութեան դեսպանութիւններ ղրկած են Ասորեստան. եւ Արգիշտի Բ-ի այս քայլը երկրորդն էր: Արգիշտի Բ. որպէս բաբելամական քայլ ձիւր ղրկեց Սինհարիբին, մէջբերենք Լէօէն, «Արգիշտի Բ. ձիւրներ է ընծա ուղարկում Սանհարիբին, որ նշանակում է եթէ ոչ կատարեալ հպատակութիւն, գոնէ բաբելամութեան ցոյց անել»¹⁰⁶: Մեր կարծիքով Արգիշտի Բ-ի նպատակն էր Բաբելամութեան ցոյց անելը: Փորձենք լուսաբանել:

Սարգոն Բ-ի մահէն ետք, Սինհարիբ շատ լուրջ մտահոգութիւններու առջեւ կը գտնուէր. որովհետեւ Ասորեստանի գերիշխանութեան

¹⁰⁶ Լէօ, Երկերի ժողովածու, Ա. հատոր, Երեւան, էջ 234:

դէմ ապստամբութիւններ ծագած էին Բաբելոնի, Սուրիոյ եւ Հրեաստանի մէջ: Իսկ Ուրարտուի նկատմամբ Սինհարիբ մտահոգուած չէր: Հարի Սագգ կ'անդրադառնայ Սինհարիբի դիրքի մասին Ուրարտուի նկատմամբ, «Սինհարիբ տագնապներ չունէր Ուրարտուի հետ իր հիւսիս-սային սահմանի երկարութեամբ ի հետեւանք իր հօրը գործունէութեան, եւ իր անձնական ուղղակի գործունէութեան այդ շրջանի մէջ. եւ հարուածին, որ Ուրարտուն ստացաւ կիմմիրներէն»¹⁰⁷:

Միւս կողմէ, Ուրարտուն ալ զբաղուած էր բարբարոս կիմմիրներու արշաւանքները դիմադրելով: Արգիշտի Բ-ին յաջորդեց իր որդին Ռուսա Բ. (685–645 Ք.Ա.), որ ստիպուեցաւ պահելու իր նախորդի խաղաղասէր յարաբերութիւնները Ասորեստանի Սինհարիբ թագաւորի հետ:

ՅՈՒՑԱԿ ԹԻՒ 7

ՈՒՐԱՐՏՈՒ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՆՆԵՐԸ ԱՍՈՐԵՍՏԱՆԻՆ

ԴԵՍՊԱՆՈՒԹԻՆ	ՈՒՐԱՐՏՈՒ	ԱՍՈՐԵՍՏԱՆ
704 Ք.Ա.	ԱՐԳԻՇՏԻ Բ. 714–685 Ք.Ա.	ՍԻՆՀԱՐԻԲ 705–681 Ք.Ա.
654 Ք.Ա.	ՌՈՒՍԱ Բ. 685–645 Ք.Ա.	ԱՇՈՒՐՊԱՆԻԲԱԼ 669–626 Ք.Ա.
645 Ք.Ա.	ՍԱՐՏՈՒՐ Գ. 645–625 Ք.Ա.	ԱՇՈՒՐՊԱՆԻԲԱԼ

Թէ ինչու Ուրարտուն այդ դիրքի մէջ էր, մէջբերենք հետեւեալը Մ. Շահինէն, ուր ան կը լուսաբանէ, թէ հիւսիսային թագաւորութիւնները (որոնցմէ էր Ուրարտուն), ուժասպառ եղած էին կիմմիրներու արշաւանքներէն. «Գահին հասնելով Սինհարիբ ժառանգեց Ասորեստանի պայքարը ոչ միայն իր հարաւի զօրաւոր հարեւան Բաբելոնի հետ, բայց եւ Սուրիոյ ու Պաղեստինի հետ. անձնապէս ան պատրաստութիւններ տեսաւ արշաւելու Եգիպտոս: Անոր համար, կը թուի թէ կիմմիրներու աւարառութիւններէն ետք, ուժասպառ հիւսիսային թագաւորութիւնները դադրած էին նեղիչ ըլլալէ. եւ իրենք զիրենք կիմմիրները ժամանակաւորապէս ցրուած էին»¹⁰⁸: Ուստի "բարեկամութեան ցոյց անելը" օգտակար եւ տրամաբանական էր երկու կողմերուն, թէ Ասորեստանի եւ թէ Ուրարտուին:

Ուրարտուի պարտադրուած այս քաղաքական դիրքը Ասորեստանի հանդէպ քաջալերիչ ազդակ մը հանդիսացաւ Սինհարիբին արշաւելու Յուդայի թագաւորութեան վրայ, պատժելու համար ապստամբ Յուդայի Եզեկիա թագաւորին, որ դադրած էր Ասորեստանին հարկեր վճարելէ: Սինհարիբ արշաւեց Արեւմուտք ու պաշարեց Յուդայի Երուսաղէմ մայրաքաղաքը:

Աստուածաշունչի մէջ յիշուած է այս դէպքի մասին Եսայի մարգարէի կողմէ, թէ ինչպէս Յուդայի Եզեկիայ (716–687 Ք.Ա.)¹⁰⁹ թագաւորը կ'աղօթէ Աստուծոյ եւ կը խնդրէ անոր օգնութիւնը: Եսայի մարգարէականով կանխատեսաւ ոչ միայն Երուսաղէմի ազատագրումը ասորեստանցիներէն, այլ նաեւ անոր նուաճումը բաբելացիներու կողմէ, մօտաւորապէս մէկ դար ետք: Եսայի մարգարէն Յուդայի թագաւորին քաջալերեց ապաւինել Աստուծուն եւ չ'յանձնուիլ Ասորեստանին: Ան լուր ղրկեց Եզեկիային ըսելով, որ Աստուած լսեց իր աղօթքը եւ Ասորեստանի Սենքերիմ (Սինհարիբ) թագաւորը պիտի չ'մտնէ Երուսաղէմ քաղաքը:

Եսայի մարգարէն կը ներկայանայ Ասորեստանեան ժամանակաշրջանի մեծ մարգարէն, որ ապրած է Երուսաղէմի մէջ, ու ժամանակակից Յուդայի Ազարիա, Յովաթամ, Աբազ եւ Եզեկիա թագաւորներուն: Եսայիի մարգարէական առաքելութիւնը տեսած է մօտաւորապէս

¹⁰⁸ M. Chahin, The Kingdom of Armenia, London, 2001, p. 94.

¹⁰⁹ Հստ որոշ աղբիւրներու Եզեկիայ թագաւորած է Յուդայի վրայ 724–697 Ք.Ա. եւ Սենքերիմի արշաւանքը տեղի ունեցած է 701 Ք.Ա.: Տես Chaim Herzog & Mordechai Gichon, Battles of the Bible, New York, 2006, p.16 and p.210.

¹⁰⁷ Հարի Սագգ, Ատամար Բաբել (Բաբելոնի Հզօրութիւնը –Արաբերէնով), էջ 153

կէս դար 740–690 Ք.Ա.¹¹⁰: Ան հեղինակն է Հին կտակարանի համա-
նուն մարգարէութեան 1–33 եւ 36–39 գլուխներուն: Մնացած գլուխ-
ները կը պատկանին երկրորդ Եսայի մարգարէին, որ ապրած է մէկ ու
կէս դար ետք:

Եսայի իր պատգամը կ'ուտայ Յուդայի թագաւորին, մէջբերենք
հետեւեալը՝ «ԵՍԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԸ ԹԱԳԱՆՈՐԻՆ» Գլուխէն:

«33 Ասոր համար Ասորեստանի թագաւորին վրայով Տէրը
այսպէս կ'ըսէ.

«Անհկա այս քաղաքը պիտի չմտնէ,

Անոր նետ պիտի չնետէ,

Անոր դէմ պատնէշ պիտի չկանգնեցնէ, այլ

34 Իր եկած ճամբայէն ետ պիտի դառնայ

Ու այս քաղաքը պիտի չմտնէ:

35 Ես այս քաղաքը պիտի պաշտպանեմ ու զանհկա ազատեմ,

Ինծի համար ու իմ ծառայիս Դաւիթին համար»¹¹¹

Այս արշաւանքէն տարիներ առաջ, Սինհարիբ կամ Սենքերիմ
կարգաւորելու համար Ասորեստանի զահաժառանգութեան հարցը, իր
որդիներէն Ասորհատունը, որ կ'երկրորդէր հաշտութեան քաղաքականու-
թիւնը Բաբելոնի հետ, յայտարարեց իրեն զահաժառանգ: Իր այս որո-
շումը զայրացուց միւս որդիներուն, որոնք որոշեցին նախ սպաննել
իրենց հօրը՝ Սինհարիբին, ապա զահէն հեռացնել իրենց եղբոր Ասոր-
հատունին: Ապստամբ որդիները իրենց այս որոշումին առաջին մասը
իրագործեցին մեծ յաջողութեամբ, երբ Սինհարիբ զբաղուած էր իր ար-
շաւանքով Յուդայի դէմ:

Սինհարիբի բանակը մեծ վնասներու կը հանդիպի Հրեաստանի
մէջ, եւ ան ստիպուած կը նահանջէ իր երկիրը: Ահա այս մեծ ձախոր-
դութիւնէն օգտուեցան իր երկու որդիները, ու սարքեցին այդ մեծ
դաւադրութիւնը 681 Ք.Ա.: Այս պատմական դէպքի մասին յիշուած է
Աստուածաշունչի Հին կտակարանի մէջ, «35 Ու այն գիշեր Տէրոջը
հրեշտակը ելաւ եւ ասորեստանի բանակին մէջ հարիւր ութսունըհինգ
հազար մարդ զարկաւ: Երբ առաւօտուն կանուխ ելան, ահա անոնց
ամէնքը մեռած մարմիններ էին: 36 Եւ Ասորեստանի Սենքերիմ թա-

գաւորը չուեց զնաց ու վերադառնալով նստեց Նինուէ քաղաքի մէջ:
37 Եւ այն ժամանակ, երբ նա իր աստծո՝ Նեսարի տանը երկրպագում
էր (Կուրբերին), նրա որդիները՝ Ադրամելէքը եւ Սարասարը, սպանեցին
նրան սրով ու Արարադի երկիրը փախան եւ նրա փոխարեն որդին՝
Ասորդանը թագաւոր եղաւ»¹¹²:

Այս նոյն դէպքի մասին յիշուած է նաեւ Եսայեայ մարգա-
րէութեան մէջ: «36 Ու Տէրոջը հրեշտակը ելաւ եւ Ասորեստանի բա-
նակին մէջ հարիւր ութսունըհինգ հազար մարդ զարկաւ: Երբ
առաւօտուն կանուխ ելան, ահա անոնց ամէնքը մեռած մարմիններ էին:
37 Ուստի Ասորեստանի Սենքերիմ թագաւորը չուեց զնաց ու դարձաւ
Նինուէի մէջ նստաւ: 38 Երբ անհկա իր Աստուծոյն Նեսարին տանը
մէջ երկրպագութիւն կ'ընէր, անոր որդիները Ադրամելէք ու Սարասար
զանհկա սուրով զարկին ու Արարատի երկիրը փախան եւ անոր տեղ
անոր որդին Ասորդան թագաւոր եղաւ»¹¹³:

Ասորհատունը իր ձգած արձանագրութիւններու մէջ յիշած է այդ
դէպքի մասին, ամբաստանելով իր եղբայրներուն, առանց յիշելու
անոնց անունները. «Իմ եղբայրները մի ամբարիշտ միտք չղացան,
նրանք մոռացան աստուածներին, դաւադրութիւն սարքեցին եւ իմ մէջ-
քի ետեւ այնպիսի գործ միջեցին, որը աստուածների սրտովը չէր: Հա-
կառակ աստուածների կամքին նրանք ուզեցին հօրս համակրանքը իմ՝
նրա խոնարհ ծառայի նկատմամբ փոխել, բայց նրա սիրտն ինձ գուր-
գուրում էր, եւ նրա աչքերը յառած էին իմ իրաւունքի վրայ: Նրանք
ապստամբեցին եւ թագաւորութեանը տիրանալու համար սպանեցին
Սենհաբերիբին»¹¹⁴:

Նշմարելի է, որ Աստուածաշունչի յիշեալ երկու տարբեր մասերու
մէջ յիշուած պատմութեան մէջ՝ նշուած է նոյնը, որ հայրասպան որդի-
ները փախան Արարատի երկիրը: Անոնց փախուստը Հայաստան կաս-
կածներ կը յարուցանէ, թէ արդեօք Ուրարտուն որեւէ մասնակցութիւն
ուներ այդ պատմական արարքի մէջ: Հարկաւոր է լուսաբանել:

Սինհարիբի անակնկալ սպանութիւնէն եւ Ասորեստանի մէջ անկա-
յունութիւն յառաջացնելով բնականաբար առաջին հերթին պիտի օգ-
տուէին Ասորեստանի թշնամիները. այս առնչութեամբ մէջբերենք հե-
տեւեալը Մայքըլ Ռաուֆէն, «Սինհարիբ անձամբ ենթարկուեցաւ դաժան

¹¹⁰ G. Ernest Wright, The Layman's Bible Commentary, Isaiah, Atlanta, 1982, p. 14.

¹¹¹ Աստուածաշունչ, ՄԱՐԳԱՐԷՆԻԹԻՆ ԵՍԱՅԵԱՅ, 37:33–35:

¹¹² Աստուածաշունչ Գ. ԹԱԳԱՆՈՐԱՅ, 19:36–37:

¹¹³ Աստուածաշունչ, ՄԱՐԳԱՐԷՆԻԹԻՆ ԵՍԱՅԵԱՅ, 37:36,38:

¹¹⁴ Նիկողայոս Աղոնց, Հայաստանի Պատմութիւն, էջ 130:

մահի: Ան անաբեկուեցաւ իր զաւկին Արտա Մուլիսի կողմէ 680: Հրեաներուն համար այդ հատուցում էր իր յարձակմանը Երուսաղէմի վրայ. բաբելոնացիներուն համար այդ պատիժ էր իր Բաբելոնի սրբապղծութեանը: Արդարեւ կարելի էր որ հոն մասամբ Բաբելոնեան մասնակցութիւն կար այդ դաւադրութեան մէջ, բայց թերեւս ան հետեւանքն էր արքայական ընտանիքի գծողութեան»¹¹⁵:

Մայքըլ Ռաուլֆ իր խօսքին մէջ չի յիշեր Ուրարտուի մասին, թերեւս այն պատճառով, որ Ասորեստան եւ Ուրարտու արդէն յայտարարուած բարեկամներ էին, ինչպէս յիշեցինք: Կամ գուցէ իր համոզմամբ՝ որ ան մասնակցութիւն չունէր այդ դէպքի մէջ, հակառակ որ վանի թագաւորութիւնը կարող էր օգտուիլ ասորեստանեան ներքին սուր երկպառակութիւնէն: Չ'մոռնանք յիշելու, թէ Ուրարտուի բարեկամութիւնը Ասորեստանի հետ տեղի ունեցաւ իր զբաղուածութիւնէն բարբարոս կիմֆիրներու արշաւանքներու ընթացքին, ինչպէս յիշեցինք:

Հիմնական երեք օգտուող կողմեր կային Սինհարիբի սպանութիւնէն, Բաբելոն, Հրեաստան եւ Ուրարտուն: Աշխարհագրականօրէն այս հեռավոր եւ մօտիկ ուժերէն, պատմագէտներէն շատերը կը տեսնէն միայն Բաբելոնի մասնակցութիւնը. թէեւ Ասորեստանի ներքին կամ արտաքին տկարացումը Ուրարտուի շահին էր. իսկ Հրեաստանի (Յուդայի թագաւորութեան) մասնակցութիւնը լրիւ բացառուած է, իր հեռավորութեան եւ տկարութեան պատճառներով:

Աստուածաշունչի մէջբերումներէն հայրասպան որդիները ապաստանեցան Հայաստան (Արարատի երկիր): Անհրաժեշտ է այստեղ յիշել, որ Ուրարտուն որեւէ դեր չունէր Սինհարիբի սպանութեան մէջ, քանի որ մեր ուսումնասիրութեան մէջ նկատեցինք շատ մը փաստեր: Ինչպէս յիշեցինք, վանի թագաւորութեան յարաբերութիւնները Ասորեստանի հետ բարեկամական էին եւ գոյութիւն ունէր խաղաղութեան դաշինք մը երկու հարեւան երկիրներու միջեւ. առաւել Ուրարտուն այս պատմահանգրուանին կը գտնուէր հնդեւրոպական ժողովուրդներու սպառնալիքի տակ, ու մեծ զօհողութիւններով կը շարունակէր պահել իր գոյութիւնը. միւս կողմէ, տրամաբանական չէր, որ հայրասպան որդիները փախչէին Ուրարտու՝ Ասորեստանի բարեկամ երկիրը, ապաստան գտնելու նպատակով: Այս բոլորը՝ կը բացառեն վանի թագաւորութեան կողմէ որեւէ մասնակցութիւն:

Սինհարիբի սպանութիւնը լոկ անաբեկչական արարք չէր, այլ յեղաշրջում օրինական կառավարութեան վրայ. ինչպէս գիտենք դէպքերը զարգացան եւ յեղաշրջման պարագլուխները մղեցին վերջին նականամարտը, որուն հետեւանքով պարտուեցան ու փախան Արմինիա: Եթէ նականամարտը տեղի ունեցաւ Նէսիպիւնի (Մծքիւնի) մօտիկ, ապա դէպի հիւսիս գտնուող հայկական Սասունի լեռնային տարածքը, բաւական մօտիկ եւ ապահով տարածք էր հայարասպաններուն համար, որպէս ապաստարան: Այս դէպքի մասին Հարի Սագգ կը յիշէ. «Ասորեստանեան հիմնական բանակը պատրաստուեցաւ դիմադրելու Ասորհատոնին Նէսիպիւնի մէջ: Ու երբ Ասորհատոն կ'առաջանար երկպառակութիւն մը յառաջացաւ բանակի զօրապետներուն միջեւ, անոնցմէ մաս մը յայտարարեցին իրենց միացումը Ասորհատոնին երբ իմացան, որ Իշտար աստուածը հրաշքներ կը գործէր ի նպաստ անոր. իսկ անաբեկիչները փախան Արմինիա (Ուրարտու): Ասորհատոն ստացաւ Ասորեստանի բոլոր բնակիչներու ընդունելութիւնը, երբ իրեն երկրորդեցին բանակի բոլոր զօրքերը»¹¹⁶: Յիշուած Իշտար աստուածուհին, բաբելոնցիներու մօտ համապատասխան էր հայոց Անահիտ դիցամօթը, երկուքն ալ կը նկատուէին նաեւ պատերազմի տիրուհի:

Հարի Սագգ կը յիշէ, թէ հայրասպան որդիները պարտուելէ ետք, փախան Արմինիա, ու չակերտի մէջ, կը նշէ Ուրարտու. մինչդեռ Աստուածաշունչի մէջ յիշուած է Արարատի երկիր: Այս հարցը պարզաբանելու համար յիշենք այստեղ, որ պատմահայր Մովսէս Խորենացին կը յիշէ, թէ Սանասար եւ Բաղդասար փախան եկան մեզ մօտ, եւ անոնց դիմաւորեց Սկայորդին: Մէջբերենք հետեւեալը, «Նաբուգոդոնոսորի թագաւորութիւնից ութսուն, քիչ աւելի պակաս տարի առաջ այս Սենքերիմը Ասորեստանի թագաւոր է եղել, նա որ Երուսաղէմը պաշարեց հրեաների Եզեկիա առաջնորդի ժամանակ: Նրա որդիները՝ Ադրամէլէքը եւ Սանասարը, նրան սպանելով, փախան եկան մեզ մօտ: Սրանից մէկին, այն է՝ Սանասարին, մեր քաջ նախնի Սկայորդին բնակեցնում է նոյն Ասորեստանի սահմանների մօտ, մեր աշխարհի հարաւ-արեւմտեան կողմում: Նրա սերունդն անելով ու բազմանալով լցրեց Սիմ կոչուած լեռը: Իսկ նրանցից ականաւոր եւ գլխաւոր մարդիկ յետագայում գործերով հաւատարմութիւն ցոյց տալով մեր թագաւորնե-

¹¹⁵ Michael Roaf, Cultural Atlas of Mesopotamia and the Ancient Near East, 1990, p 188.

¹¹⁶ Հարի Սագգ, Ատամար Բաբըլ (Բաբելոնի Հզօրութիւնը-Արաբերէնով), էջ 155:

րին արժանացան այդ կողմերի բղեջխությունը¹¹⁷ ստանալու: Իսկ Արգամոզանը բնակուեց նոյն կողմի հարաւ-արեւելեան մասում¹¹⁸: Արգամոզանը նոյն Ադրամելեք անունն է, որ աղաւաղուելով դարձած է Արգամոզան:

Հին Արեւելքի մէջ սովորութիւն էր, որ թագաւորները կամ թագաւորական ընտանիքի անդամները ունենային մէկէ աւելի անուններ, կամ տիտղոսներ. ինչպէս նաեւ կ'ունենային լրիւ այլ անուններ դրացի ժողովուրդներու կողմէ. կամ թէ իրենց անունները կը յարմարեցուէին յիշեալ ժողովուրդի լեզուին: Այս էր պարագան, որ հայրասպան որդիներու անունները կը տարբերին համաձայն քաղուած աղբիւրին: Այս հարցով վալերի Խաչատրեան յիշած է հետեւեալը, «Ասորեստանի տիրակալ Սինխերիբին սպանող նրա որդիներ Արադ-Նինլիլը եւ Նաբու-շարուսուրը «Աստուածաշնչում» վկայուած են Ադրամելեք եւ Շարքեր, Մովսէս Խորենացու մօտ՝ Ադրամելեք եւ Սանասար, իսկ «Սասունցի Դաւիթ» էպոսում Սանասար եւ Բաղդասար անուններով»¹¹⁹:

Հայ ժողովուրդի ամենամեծ դիւցազներգութիւնը Սասունցի Դաւիթը կամ Սանայ Մոեքը կը բաղկանայ չորս դրուագներէ. Սանասար եւ Բաղդասար, Մեծ Մհեր, Սասունցի Դաւիթ եւ Փոքր Մհեր: Դիւցազներգութեան առաջին մասը Սանասար եւ Բաղդասար արձագանգն էր Սինհարիբի սպանութեան դէպքին, եւ հայրասպան որդիներու փախուստին դէպի Արարատեան աշխարհի՝ Սասունի շրջանը: Դիւցազներգութեան մէջ Սանասարն ու Բաղդասարը Միջագետքի (Տերկալ Իրաքի) մէջ կ'սպանեն իրենց հօրը՝ Պաղտատի խալիֆային եւ կը փախին Հայաստան՝ Սասուն. ինչպէս եւ Նինուէն դարձած է Պաղտատ, եւ Ասորեստանի թագաւորը դարձած է Պաղտատի խալիֆան: Ադրամելիքը դարձած է Բաղդասար, եւ Շարքերը դարձած է Սանասար:

Բոլոր տուեալները մեզ կ'առաջնորդեն այն եզրակացութեան, թէ Աստուածաշունչի Մարգարէութիւն Նախնայի մէջ յիշուած՝ Արարատի երկիրը, ուր ապաստանեցան հայրասպան որդիները՝ Ուրարտուն չէր, այլ Հայկական լեռնաշխարհի՝ Սասունի տարածքին մէջ կեդրոնացած հայկական պետութիւնը, որ կոչուած է Արմէ-Շուպրիա:

¹¹⁷ Բղեջխութիւնը երկրի չորս կողմերէն մէկուն պաշտպանութեան պատխանատւութիւնն էր. այսպէս երկիրը կ'ունենար չորս բղեջխներ:

¹¹⁸ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1968, ԻԳ., էջ 110:

¹¹⁹ Վալերի Խաչատրեան, Հայոց Հին Պատմութեան Հարցերի Շուրջ, Երեւան, 2008, էջ 5:

Ասորեստանեան սեպագիր արձանագրութիւններու մէջ Սասունը կը կոչուէր Շուպրիա (Շուպրիա), անուն մը որ շատ հաւանական է, որ մնացած էր Հայկական լեռնաշխարհի Սուբարի կոչւող հին ժողովուրդի անունէն: Սինհարիբի սպանութենէն ետք, իր երկու զաւակները եւ Ասորեստանի մեծամեծներէն՝ անոնք որոնք հակառակ էին Ասորհատունին, ապաստանեցան Արմէ-Շուպրիա երկիրը. ինչպէս նաեւ հոն ապաստանած էին Ուրարտուի Ռուսա Բ-ի ընդդիմադիրները: Սասունը կամ Շուպրիան մինչեւ այդ ժամանակ, մաս կը կազմէր Ուրարտունէն, բայց այս հանգրուանին ան այլեւս չէր ենթարկուէր Ուրարտուի թագաւորին, ու եղած էր հաւաքավայր մը Ուրարտուի եւ Ասորեստանի ընդդիմադիր ուժերուն:

Պօրիս Բիթթուվսի կը մատնանշէ, թէ անոնք փախան ու ապաստանեցան Շուպրիայ. «Ասորեստանցի Սինհարիբ թագաւորը սպանուեցաւ 681 Ք.Ա. պալատական յեղափոխութեան ընթացքին, եւ Ասորհատունի զահակաւումէն ետք, իր մարդասպանները փախան հիւսիս-արեւմուտք, Շուպրիաի երկիրը, որ սահմանակից էր Ուրարտուին: Հին Կտակարանը յիշատակած է այս տեղեկութիւնները, արձանագրելով որ Սինհարիբի զաւակները, իրենց հայրը սպաննելով, փախան դէպի Ուրարտու (Արարատի երկիրը, կամ Հայկական հողամասը)»¹²⁰:

Արմէ-Շուպրիայի մասին, եւ անոր կապը վանի թագաւորութեան (Ուրարտուի) հետ. ինչպէս եւ անոր հաւանական ապաստարան ըլլալը հայրասպան որդիներուն, մէջբերենք հետեւեալը. «Հայկական լեռնաշխարհում վանի թագաւորութեան կողքին Ք.ա. VIII դ. վերջերից անկախացել եւ սկսել էր լիովին ինքնուրոյն քաղաքականութիւն վարել վանա լճից արեւմուտք եւ հարաւ-արեւմուտք տարածւող Արմէ-Շուպրիա պետութիւնը (Ք.ա. III հազարամեակում այս երկիրը յայտնի էր Սուբուր եւ Արման անուանաձեւերով), որը հակադրում էր վանի տերութեանն ու Ասորեստանին՝ ապաստան տալով այդ երկրներից հեռացած փախստական գործիչների (բարձրաստիճան զինուորականների, մարզպետների եւ աստիճանաւորների, որոնք, թերեւս, քաղաքական ընդդիմադիրներ էին) եւ հրաժարուելով նրանց վերադարձնել: Դեռեւս Ք.ա. 681թ. Ասորեստանում տեղի ունեցած պալատական դաւադրութեան արդիւնքում Սենեքերիմ (Սինխերիբ) արքային սպանած նրա երկու որդիները յաջողութեան չ'հասնելով (զան բարձրացաւ նրանց երրորդ

¹²⁰ Boris B. Piotrovsky, The Ancient Civilization of Urartu, Geneva 1969, p.128.

եղբայրը՝ Ասորդանը (Ասարիադոն, Ք.ա. 680–669թ.), ապաստան էին գտել Հայաստանում, հաւանաբար երկրի հարաւ–արեւմուտքում Արմե–Շուրբիայում»¹²¹:

Ու թէև Արմե–Շուրբիան մաս կը կազմէր Ուրարտուն, սակայն մշտական ապստամբական վիճակի մէջ էր: Այս մեծ դէպքէն՝ Սինհարիի սպանութիւնէն միայն եօթ տարի ետք, 673 Ք.Ա. Ասորհատոն եւ Ռուսա Բ. միասնաբար յարձակեցան Արմե–Շուրբիայի վրայ, ու հոն հաւաքուած ապստամբները պատմեցին: Այս կը փաստէ, թէ երկու զանալակներն ալ զայրացած էին Արմե–Շուրբիայի վրայ. սակայն եւ անոնց պատմից արշաւանքը ուշացաւ, որովհետև Արմե–Շուրբիան հեշտ նուաճուելիք թշնամի չէր. փաստ, որ ան համարձակած էր ապաստան տալ հայրասպաններուն:

Կայ նաեւ մէկ այլ հաւանականութիւն, որ երկու բարեկամ արքաները, Ռուսա Բ. եւ Ասորհատոն մտահոգ էին Արմե–Շուրբիայի մէջ հաւաքուած ըմբոստ ուժերէն: Ռաֆայէլ Իշխանեան կը բացատրէ, «Ռուշան եւ Ասարհադոնը վախենում էին Սասունում հաւաքուած իրենց թշնամիներից, որոնք կարող էին զօրքեր հաւաքել եւ յարձակուել Նինուէի ու Վան–Տոսպի վրայ: Վախը նաեւ այն պատճառն ունէր, որ Սասունում հաւաքուած հակառակորդները զաղտնի բանակցում էին մարերի եւ սկիւթների հետ: Նրանք ուզում էին մարերի եւ սկիւթների օգնութեամբ տապալել Ասորեստանի ու Հայոց թագաւորներին»¹²²: Ինչպէս պիտի տեսնենք յաջորդ էջերուն մէջ Ասորեստանի եւ Ուրարտուի մտահոգութիւնը՝ մարերու եւ սկիւթացիներու հզօրացումէն շատ արդարացի էր:

Յամենայնդէպս, ամենակարեւոր փաստը, թէ հայրասպան որդիները փախան Սասուն (Արմե–Շուրբիա), կը ցերեպայանայ Ասորհատոնի ձգած 673 Ք.Ա. արձանագրութիւնը՝ ուղղուած իր Աշուր աստծուն, որ գրած է Շուրբիայի վրայ իր կատարած արշաւանքի առիթով, «Փախստականներին, որոնք թողել են իրենց տներին եւ փախել Շուրբիա, եւ կտրեցի..., նրանց թթից, աչքից եւ ականջից, (որպեսզի

¹²¹ Մեր Յաղթանակները, Հատոր Ա., Երեւան, 2008, էջ 129, 130, (Բաժնի հեղինակ՝ Արտակ Մովսիսեան):

¹²² Ռաֆայէլ Իշխանեան, Հայերի Մագումը եւ Հնագոյն Պատմութիւնը, Պէյրուք 1984, էջ 88:

ոչ որ) չփախչի ուրիշ երկիր, նրանց վրայ սահմանեցի պատիժ... վերադարձրի նրանց իւրաքանչիւրին իր երկիրը եւ իրենց տներին...»¹²³:

Բոլոր տուեալները մեզ կը տանին այն եզրակացութեան, որ Աստուածաշունչի մէջ յիշուած Արարատի երկիրը, ուր ապաստանեցան հայրասպան որդիները Վանի թագաւորութիւնը (Ուրարտու) չէր, այլ իրեն հպատակ, բայց եւ ապստամբ վիճակի մէջ գտնուող Հայկական լեռնաշխարհի հարաւի՝ Սասունի տարածքի Արմե–Շուրբիան էր. այդ կը փաստեն Ասորհատոնի 673 Ք.Ա. արձանագրութիւնը, եւ Մովսէս Խորենացիի յիշատակութիւնները:

Այս հարցի առնչութեամբ կայ նաեւ այլ յիշատակութիւն մը, որուն կարժէ անդրդառնալ: Համաձայն ասորերէն հին Կտակարանի մէկ թարգմանութեան, Արարատի երկրի տեղ կը յիշուի Կորդուաց աշխարհը, որ կը տեղադրուի Սասունին կից՝ հարաւ արեւելք: Մէջբերենք հետեւեալը Լ. Գ. Մելքոնեանէն, «Յերկիրն Արարադայ ասելով հեղինակը նկատի է ունեցել ոչ թէ Արարատեան երկիրը կամ թագաւորութիւնը, այլ Կորդուաց աշխարհը: Այս ենթադրութիւնը հաստատում է ասորերէն հին Կտակարանի «Պեշիտտո» կոչուած հին թարգմանութեան միջոցով: «Պեշիտտո»-ի համապատասխան բաժնում Արարադի փոխարեն նորից գրուած է Երկիրն Կարդու (Aira Kardu), այսինքն ճիշտ այնպէս, ինչպէս Մար Ավգինի ասորերէն Վարքում»¹²⁴:

¹²³ Լեւոն Շահինեան, "Ուրարտու" Առեղծուածք, Երեւան, 1994, էջ 52, 53:

¹²⁴ Լ.Գ.Մելքոնեան, Հայ–Ասորական Յարաբերութիւնների Պատմութիւնից, Հայկական ԽՍՀ ԳԱ Հրատարակչութիւն Երեւան, 1970, էջ 82. քաղուած էսայի, գլ. Լէ, 38 (Պեշիտտո Թարգմանութիւն):

2. ՆԻՆՈՒԷԻ ԱՆԿՈՒՄԸ, ԱՐԵՒՄՈՒՏՔԻՆ ՏԻՐԱՆԱԼՈՒ ՍՈՒՐ ՊԱՅՔԱՐԸ ԵՒ ՈՒՐԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԴԻՐՔԸ

Այս բաժնի մէջ մանրամասնօրէն կ'անդրադառնանք պատմական հարցերու զարգացումներուն, որոնք շատ կարեւոր են, լաւագոյնս հասկնալու յաջորդ բաժնիներու մէջ յիշուած հարցերը:

Եօթերորդ դարի երկրորդ կէսին Ք.Ա. Մարական բաժանուած ցեղերը միանալով հիմնեցին զօրաւոր պետութիւն մը, որուն մայրաքաղաքն էր Էկրատան (ճերկայ Համադանը, Իրանի մէջ): Մարական պետութիւնը հզօրացաւ Կիաքսարի ժամանակ (625–585 Ք.Ա.), որուն հայոց պատմահայր՝ Մովսէս Խորենացին կ'անուանէ Վարբակէս:

Ասորեստանի հզօր արքայ Աշուրբանիպալի մահէն ետք 626 Ք.Ա. Բաբելոնը անկախացաւ Նաբուպալասարի ղեկավարութեամբ: Ան հիմնեց Բաբելոնեան վերջին թագաւորութիւնը, որ տեւեց մինչեւ 539 Ք.Ա. եւ կոչուեցաւ Բաբելոնի Քաղղէական հարստութիւն:

Մարերու Կիաքսար թագաւորը ծրագրեց վերջնականօրէն կործանել Ասորեստանը, համագործակցելով Ասորեստանի հարաւի պատմական թշնամի Բաբելոնի հետ: Շուտով Մարաստանը եւ Բաբելոնը իրենց համագործակցութիւնը վաւերացուցին դաշինքով մը, եւ զայն ամրապնդեցին քաղաքական ամուսնութեամբ, Բաբելոնի գահակալ Նաբուպալասարի որդին՝ գահաժառանգ Նաբուգոթոնոսոր, ամուսնացաւ մարերու Կիաքսար թագաւորի աղջկայ՝ Ամիտուսի հետ:

Վերջապէս, 614 Ք.Ա. մարերը հիւսիս–արեւելքէն, բաբելոնցիք հարաւէն, միաժամանակ արշաւեցին Ասորեստանի վրայ: Մարերը գրաւեցին Ասորեստանի հին մայրաքաղաքներէն Աշուր քաղաքը (Տիգրիս գետէն արեւմուտք). ապա դաշնակիցները՝ միաժամանակ արշաւեցին մայրաքաղաք Նինուէի ուղղութեամբ, եւ մօտաւորապէս երեք ամիս պաշարելէ ետք գրաւեցին զայն 612 Ք.Ա.: Այսպիսով սկսաւ հզօր Ասորեստանի գոյութեան վերջաւորութեան գործընթացը, տես Գծացուցակ թիւ 1, երբ իր պատմական մրցակից՝ Ուրարտուն կը գտնուէր շատ տկարացած վիճակի մէջ: Մէջբերենք հետեւեալը Մ.Գ. Ներսիսեանէն, «Ասորեստանի կործանման պահերին Ուրարտուի մասին, որպէս ակտիւ ուժի, ամենեւին չի լսուի: Դա հասկանալի է. նա կծկուած էր իր նախկին տարածքի մի մասում եւ կործանման նախադրանքն էր գտնուում»¹²⁵:

Նինուէի անկումէն ետք, ասորեստանեան զօրագուններէն մաս մը նահանջեցին դէպի Փոքր Ասիայ, ու կեդրոնացան Կարկէմիշի մէջ. ուր

ասորեստանեան թագաւորական ընտանիքէն իշխան մը ընտրեցին Ասորեստանի նոր թագաւոր, եւ կոչեցին Աշուր Օպալտ: Նորընտրի արքան սկսաւ համագործակցիլ Եգիպտացիներու հետ, դիմադրելու համար մարերուն եւ բաբելոնցիներուն, եւ վերստին տիրանալու Ասորեստանին: Նինուէի վերջնական անկումը Եգիպտոսին շարժեցուց իր կորսնցուցած տարածքներուն վերատիրանալու Պաղեստինի, Հրեաստանի, Փիւնիկիոյ եւ Սուրիոյ մէջ այդ իրագործելու համար ան դաշնակցեցաւ ասորեստանցիներու հետ: Այսպէս, Եգիպտոս եւ Բաբելոն մուտք գործեցին սուր պայքարի եւ բախման պատմաշրջան մը, որմէ Ուրարտուն անբաժին չ'մնաց:

Դէպքերու զարգացումով յստակ էր, որ մեծ ճակատամարտ մը տեղի պիտի ունենար հիւսիսային Սուրիոյ մէջ, ոչ շատ հեռու Ուրարտուի սահմաններէն: Այդ ճակատամարտէն յաղթական դուրս եկող ուժը, պիտի տիրապետէր մեզ հետաքրքրող Արեւմուտքի տարածքներուն վրայ. եւ պիտի որոշուէր տեղական փոքր թագաւորութիւններու ճակատագիրը, որոնցմէ մէկն էր Յուդայի թագաւորութիւնը:

Բաբելոնի համար անհրաժեշտ էր Ուրարտուն, եւ իրմէ անջատուած Արմէ–Շուպրիայի հայկական թագաւորութիւնը հեռու պահել յիշեալ տարածքներէն, մէկէ աւելի պատճառներով: Այդ իրագործելու համար Բաբելոնը դիմեց գրեթէ տարեկան ռազմական արշաւանքներու իրագործման: Այսպէս 609–608 Ք.Ա. Նաբուպալասար կազմակերպեց ռազմական գործողութիւններ, որոնց մասին յիշուած է իր արքայական արձանագրութիւններու մէջ: Դ. Ճ. Ուլայզմընէն մէջբերենք հետեւեալը, «Աշուր Օպալտ, Եգիպտական մեծ ուժի մը օգնութեամբ, կրկին անցաւ Եփրատը՝ փորձելով վերագրաւել Խառանք: Կը թուի թէ իր հիմնական ճիգը ուղղուած էր Նաբուպալասարի հոն ձգած պահակազօրքի դէմ. բայց արձանագրութեան այս մասը վնասուած է եւ անորոշ: Մօտ երկու ամիս, մինչեւ էլլուլ, Աշուր Օպալտ պահեց պաշարումը բայց առանց յաջողութեան: Միեւնոյն ժամանակ Նաբուպալասար արշաւեց օգնելու իր պաշարուած զինուորներուն: Կը թուի թէ յարձակումը անհրաժեշտ չէր, որովհետեւ ան իր ուշադրութիւնը անմիջապէս դարձուց Իզալայի բլրոտ տարածքի վրայ, քաղաքէն դէպի հիւսիս–արեւելք: Բաբելոնեան արշաւանքի նպատակակէտի այս փոփոխութիւնը կարելի է բացատրել, որ պաշարումը արդէն վերացած էր Նաբուպալասարի հասնելէն առաջ, եւ նոր նպատակը Աշուր Օպալտին հետապնդելն էր, որ թերեւս փախչած էր Ուրարտուի ուղղութեամբ»¹²⁶:

¹²⁵ Մ.Գ. Ներսիսեան, Հայ ժողովուրդի Պատմութիւն, Երեւան, 1972, էջ 45:

¹²⁶ D. J. Wiseman, Chronicles of Chaldaean Kings (626–556 B.C.), p. 19.

Իգալայի տարածքը կը գտնուէր Արմէ-Շուպրիայի հարաւին: Այս նոր դէպքերու զարգացումով Բաբելոնը մտահոգուած էր Ուրարտուի կամ Արմէ-Շուպրիայի մասնակցութեանը, եւ մանաւանդ Աշուր Օպալտի հաւանական փախուստով: Բաբելոնը կը փորձեր նախկին Ասորեստանի տարածքները պաշտպանել հիւսիսէն, ան կը հետապնդէր Ասորեստանի որդեգրած հին քաղաքականութիւնը, որն էր, պահակազօրքեր հաստատել հիւսիսային սահմանային տարածքներու մէջ. միւս կողմէ, կարենալու համար շարունակել սուր պայքարը Եգիպտոսի դէմ՝ Արեւմուտքի վրայ տիրանալու համար: Բաբելոնը պետք ունէր ապահով տեսնելու իր թիկունքը. մանաւանդ ինչպէս տեսանք Գ. Գլուխի 6-րդ բաժինի մէջ, Ուրարտուն երբ հզօրացաւ տիրապետեց Սուրիոյ Միջերկրականի նաւահանգիստներուն, եւ կողիացուց այդ հանգրուանի հզօր ուժին՝ Ասորեստանին. ու եթէ այդ կրկնուէր, ապա Բաբելոնը պիտի զրկուէր Արեւմուտքի հարստութիւններէն: Ուրեմն շատ անհրաժեշտ էր Ուրարտուի եւ կամ Հայկական Լեռնաշխարհի ներկայացուցած վտանգը հեռացնել տարածքաշրջանէն:

Ռազմական գործողութիւնները Հայկական Լեռնաշխարհի ուղղութեամբ շարունակուեցան. յաջորդ տարին Նաբուպալասար աւելի մօտեցաւ Ուրարտուի սահմաններուն: Մէջբերենք նոյն աղբիւրէն. «Իր գահակալութեան տասնութերորդ տարուայ աշնանը (608 Ք.Ա.) Նաբուպալասար շարունակեց իր անցեալ տարուայ արշաւը, յառաջանալով Տիգրիսն ի վեր դէպի Ուրարտուի հարաւային սահմանը: Ընտրուած ուղին հաւանական կը դարձնէ, որ իր առաջին նպատակակէտն էր Բէլթը-Հանունեա, որ կը գտնուէր աւելի արեւելք իր նախկին գործողութիւններու թատերաբեմէն: Նպատակը յստակաբար բլուրներու ժողովուրդներու զսպելն էր, որոնք այլապէս պիտի ասպատակէին ասորեստանեան դաշտավայրերը, որոնք այժմ զուրկ էին ուժեղ գաւառային վարչութիւններէ, եւ զրկած էին բաբելոնցիներուն իրենց վերջին աշխարհակալութեան պտուղներէն: Աւելին, անհրաժեշտ էր պաշտպանել մայր ուղին, որով Բաբելոնեան հիւսիսային պահակազօրքերուն օգնութիւնը պիտի անցնէր»¹²⁷:

Միանշանակ շարունակական արշաւանքները կը հետապնդէին մէկ նպատակ, այն էր Բաբելոնի լուրջ մտահոգութիւնը Ուրարտունէն, Արմէ Շուպրիայէն, եւ ընդհանրապէս հիւսիսէն: Յաջորդ տարի եւս (607 Ք.Ա.) Նաբուպալասար արշաւեց նոյն լեռնային տարածքներու վրայ Ուրարտուի սահմաններու մօտ. բայց ան առողջապահական պատճառներով վերադարձաւ Բաբելոն ու ռազմական գործողութիւնները

յանձնեց իր որդուն՝ գահաժառանգ Նաբուգոթոնոսորին: Անհրաժեշտ է մատնանշել, որ Բաբելոնեան արքայական արձանագրութիւններու մէջ, որեւէ յիշատակութիւն չկայ ուղղակի բախման դէպքի մասին Բաբելոնեան բանակի եւ Ուրարտուի կամ Արմէ Շուպրիայի ուժերու միջեւ. ինչ որ կը նշանակէր, թէ Բաբելոնը չէր ուզեր Եգիպտոսէն զատ այլ ճակատ բանալ: Իսկ իր ռազմական գործողութիւններով ան նպատակ ունէր զգուշացնելու Ուրարտուին եւ Արմէ Շուպրիային չ'միջամտելու իր մղած մեծ պայքարին Եգիպտոսի դէմ:

Վերջապէս, տեղի ունեցաւ ճակատագրական բախումը, որ յայտնի է պատմութեան մէջ **Կարկէմիշի ճակատամարտը** անունով: Բաբելոնի բանակը՝ գահաժառանգ Նաբուգոթոնոսորի ղեկավարութեամբ 605 Ք.Ա. պարտութեան մատնեց Եգիպտացիներուն եւ ասորեստանցիներուն, ու վերջ տուաւ ասորեստանեան պետութեան մնացորդացին: Այսպէս, որոշուեցաւ Սուրիոյ եւ մեզ հետաքրքրող Արեւմուտքի ճակատագիրը:

Այս յաղթանակներէն ետք, Նաբուգոթոնոսոր ստացաւ իր հօր՝ Նաբուպալասարի մահուան լուրը. անապարանքով վերադարձաւ Բաբելոն, ուր թագադրուեցաւ նոյն տարուայ մէջ:

Գահաժառանգ Նաբուգոթոնոսոր Բաբելոնի մէջ թագադրուեցաւ, ու եղաւ պատմութեան մէջ, հռչակաւոր Նաբուգոթոնոսոր Բ-ը: Ասորեստանի նման, Բաբելոնի մէջ զգալի էր Ուրարտուի քաղաքա-մշակութային ազդեցութիւնը. այդ յստակ էր Նաբուգոթոնոսորի թագադրութեան հնադէսի ճոխ ծիսակատարութիւնէն. որու մասին Դ. Մ. Ուայզմըն յիշած է, «Ոչ պակաս, իր թագադրութեան արարողութիւնը ունէր շատ մը երեւոյթներ, որոնք նոյնանման էին իրմէ առաջ նախկին թագադրութեան վկայութիւններու՝ Մարտուխ աստուծոյ, Ուրի՝ Ուր-Նամմուշի, միջին-Ասորեստանեան թագաւորի, Ուրարտական տիրակալի եւ Բաբելոնի Շամա-Շոմ-Օգին արքային 689 Ք.Ա.»¹²⁸:

Նաբուգոթոնոսոր Բ. շուտով վերադարձաւ Սուրիայ շարունակելու իր պայքարը Եգիպտոսի դէմ: Եգիպտոս կը փորձեր վերագրաւել Սուրիան եւ մերձակայ տարածքները, որոնք այժմ մաս կը կազմէին Բաբելոնի կայսրութիւնէն: Այդ նպատակին հասնելու համար, Եգիպտոս սկսաւ դրդել տեղական ուժերը ապստամբելու Բաբելոնի դէմ:

Նաբուգոթոնոսոր Բ. ստիպուեցաւ երկարատեւ պատերազմներ մղել տեղական փոքր ապստամբ պետութիւններու դէմ, այդ պետութիւններէն էր Յուդայի թագաւորութիւնը: Այսպէս, 597 Ք.Ա. Նաբուգո-

¹²⁷ D. J. Wiseman, same, p. 20.

¹²⁸ D. J. Wiseman, Nebuchadrezzar and Babylon, Oxford, 2004, 19, 20.

թոնոսոր Բ.¹²⁹ արշաւեց Յուդայի թագաւորութեան վրայ, գրաւեց Երուսաղէմը եւ Յովաքին թագաւորին գերի տարաւ Բաբելոն ¹³⁰:

Հեռաւոր Արեւմուտքի մէջ իր ռազմական գործողութիւնները յաջողութեամբ շարունակելու համար, Եգիպտոսէն զատ՝ Նաբուգոթոնոսոր Բ-ի համար անհրաժեշտ էր ապահով տեսնել իր հիւսիսային եւ արեւելեան սահմանները: Այս առնչութեամբ մեզի հասած են մեծ մասամբ չ'վնասուած տեղեկութիւններ, որոնք կը պատմեն Նաբուգոթոնոսորի արշաւանքները Կարբեմիշէն մինչեւ Ուրարտուի սահմանները: Մէջքերէնք հետեւեալը. «Եթէ գործողութիւնները մինչեւ հեռաւոր Կարբեմիշը պէտք էր վերագրուէին որոշ խռովութիւններու հիւսիսի մէջ. ապա յաջորդ տարուայ արշաւանքը Տիգրիսի գետափին ի վեր՝ հաւանական էր, որ ուղղուած էր մեծապէս Կարբեմիշէն արեւելք մինչեւ Ուրարտու, Իլամ/Զամու՞ա. ինչպէս Նաբուպալասարի տասնութերորդ տարուանը: 596/5 Ք.Ա. Նաբուգոթոնոսոր իր բանակով բանակեց գետան մօտ, թշնամիէն միօրեայ արաշաւէ հեռու, որ վախեցած՝ նահանջեց: Հակառակորդի անունը գրութեան մէջ վնասուած է, եւ իմ նախնական առաջարկս է, որ ան Իլամի թագաւորն էր. Կարելի է, թէ եւ անտոյզ»¹³¹:

Դ. Ճ. Ուայզմըն տարակուսելի, անստույգ կը սեպէ, թէ հակառակորդը Իլամի թագաւորն էր: Ինչպէս գիտենք Իլամը Պարսկաստանի արեւմտեան տարածքներու մէջ գոյութիւն ունեցող թագաւորութիւնն էր. սակայն հիմնուելով աշխարհագրութեան տուեալներու վրայ, Իլամը շատ հեռու էր յիշուած "Կարբեմիշէն արեւելք մինչեւ Ուրարտու"ի տարածքներէն. ուստի մեր կարծիքով, Նաբուգոթոնոսոր Բ-ի յիշեալ արշաւանքը, եթէ ուղղուած չէր տկարացած Ուրարտուի դէմ, ապա ուղղուած պիտի ըլլար Հայկական լեռնաշխարհի հարաւի՝ Սասունի տարածքի Արմէ-Շուպրիայի մէջ հիմնուած հայկական պետութեան դէմ, որու հզօրութեան մասին անդրադարձանք 1-ին բաժինի մէջ, երբ խօսեցանք Սինհարիբի սպանութեան մասին:

Բաբելոնի սեմական տիրակալ՝ Նաբուգոթոնոսոր Բ. պէտք էր, որ վերապահ ըլլար Ուրարտուէն եւ ընդհանրապէս Հայկական լեռնաշխարհէն, պատմութեան դասերը այդ կը ուսուցանէին մօտիկ անցեալէն, երբ Ուրարտուն էր հիմնական մրցակիցը հզօր Ասորեստանին, ու թէպէտ ներկայիս ան տկարացած էր, բայց Արմէ-Շուպրիայի մէջ հիմ-

նուած հայկական պետութիւնը մասնակցեցաւ Նինուէի վերջնական կործանման. եւ հայկական զօրաբունդերը մեծ մարտունակութիւն կը ցուցաբերէին բոլոր ճակատներու վրայ, ու հեռու չէր անոնց սպառնալիքը նոյնիսկ Բաբելոնէն:

Նաբուգոթոնոսոր Բ-ի հեռատեսութիւնը իրաւացի էր. պատմութիւնը կը յուշէ, թէ իր մահէն ետք 562 Ք.Ա. Բաբելոնի մէջ տեղի ունեցան իրարու յաջորդող յեղաշրջումներ, եւ ի վերջոյ անյայտ ծագումով Նապուցիտըս զօրավարը 556 Ք.Ա. վերջ տուաւ Բաբելոնի անկալուն վիճակին, եւ իշխեց մինչեւ Բաբելոնի վերջնական անկումը 538 Ք.Ա.: Նապուցիտըսի հայկական ծագման մասին վկայեց ուրիշ հայ մը՝ Արաքա Խալտիդան, որ դարձաւ Բաբելոնի թագաւորը 521 Ք.Ա. ու ինքզինքը կոչեց Նաբուգոթոնոսոր Դ. եւ յայտարարեց, թէ Նապուցիտըսին ազգակից էր, ինչպէս որ յիշուած է Աքեմէնեան Դարեհ Լ-ի ձգած Բեհիստունի արձանագրութիւններուն մէջ¹³²:

Ուրեմն Նաբուգոթոնոսոր Բ. նախքան իր կայսրութեան ընդլայնելը դէպի Արեւմուտք, մտահոգուած էր իր թիկունքի ապահովութեամբ, Ուրարտուէն եւ Արմէ-Շուպրիայիէն: Շատ հաւանակն էր, որ անոնք փորձէին միջամտել եւ օգնութեան ձեռք երկարել հիւսիսային Սուրիոյ մէջ հաստատուած հաթերուն, որոնք Հայկական լեռնաշխարհի ժողովուրդներէն էին, մանաւանդ որ հաթերը Ուրարտուի հին դաշնակիցներն էին: Ինչպէս յիշեցինք, այս պատմահանգրուանին, Սուրիոյ այն տարածքները, որ կը գտնուէին Հալէպի եւ Դամասկոսի միջեւ կը կոչուէին Հաթթի. ինչ որ կը նշանակէր, թէ այդ տարածքները ժամանակին կը գտնուէին Հաթ ժողովուրդի ազդեցութեան եւ իշխանութեան ներքեւ:

¹²⁹ Harper Collins Atlas of the Bible, Michigan, 1999, p. 20, And The Timechart of Biblical History, 2000, p 24.

¹³⁰ Աստուածաշունչ Դ. ԹԱՊԱՆՈՒՄՔ 24 : 10-16:

¹³¹ D.J. Wiseman, Nebuchadrezzar and Babylon, Oxford, 2004, p. 34.

¹³² Պետրոս Թովմասեան, Հայկական լեռնաշխարհը եւ Միջագետքը, Երեւան 2006, էջ 107, 131, 132:

ՆԻՆՈՒԷԻ ԱՆԿՈՒՄԷՆ ԵՏՔ ԱՐԵՒՄՈՒՏՔԻՆ ՏԻՐԱՆԱԼՈՒ
ՍՈՒՐ ՊԱՅՔԱՐԻ ԿԱՐԵՒՈՐ ԴԷՊՔԵՐԸ

ՏԱՐԻ Ք.Ա.	ԴԷՊՔ
612	Դաշնակից Մարերու եւ Բաբելոնցիներու արշաւանքը Նիմուէի վրայ: Երեք ամիս պաշարումէ ետք Նիմուէի գրաւումը եւ վերջնական անկումը:
609	Բաբելոնեան արշաւանք մը Ուրարտուի դէմ: Պատերազմի արդիւնքը անձանօթ է, որովհետեւ բնագիրը վնասուած է:
608-605	Նաբուպակասարի արշաւանքը Ուրարտուի լեռնային գաւառ Պիթ-Հանունեայի վրայ:
605	Բաբելական բանակը զահաժառանգ Նաբուգոթոնոսորի ղեկավարութեամբ պարտութեան մատնեց Եգիպտացիներուն Կարկեմիշի ճակատամարտի մէջ, եւ գրաւեց Սուրեան:
605	Նաբուպակասարի մահը եւ Նաբուգոթոնոսոր Բ-ի թագադրութիւնը Բաբելոնի թագաւոր:
597	Նաբուգոթոնոսոր Բ-ի արշաւանքը Յուդայի թագաւորութեան վրայ: Երուսաղէմի գրաւումը եւ Յովաքին թագաւորի, Եզեկիէլ մարգարէի եւ առաջին խումբի արքայի Բաբելոն:
596-595	Նաբուգոթոնոսոր Բ-ի արշաւանքը ուղղուած Կարբեմիշէն արեւելք մինչեւ Ուրարտուի տարածքները:
587-586	Նաբուգոթոնոսոր Բ-ի արշաւանքը Յուդայի վրայ եւ Երուսաղէմի գրաւումը եւ կործանումը:

3. ԵՐԵՄԻԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ ԿՈՉԸ ԵՒ ՈՒՐԱՐՏՈՒՆ

Աստուածաշունչի Երեմիայի մարգարէութեան մէջ կը հանդիպինք Երեմիայի կոչին, երբ Նաբուգոթոնոսոր Բ. Երեմիայ մարգարէի օրով արշաւեց Յուդայի թագաւորութեան վրայ: Աստուածաշունչի մէջ, Երեմիայ մարտահրաւէր կ'ուղղէ քանի մը պետութիւններու արշաւելու Բաբելոնի վրայ, եւ կործանելու զայն: Այս կոչի իրագործուելու պարագային Բաբելոնը պիտի կործանուէր եւ Յուդայի թագաւորութիւնը պիտի փրկուէր անոր սպառնալիքէն: Մէջբերենք Աստուածաշունչէն այդ յորդորը, որ յիշուած է Երեմիայի մարգարէութեան 51-րդ գլուխի, ԲԱԲԵԼՈՒՆԻ ԱՆԱՉԱՌ ԴԱՏԱՍՏԱՆԸ գլուխի մէջ:

...24 «Եւ Բաբելոնի ու Քաղդէացիներու երկրին բոլոր բնակիչներուն
Պիտի հատուցանեմ իրենց բոլոր չարութիւնը,
Ինչպէս ձեր աչքերուն առջեւ Սիօնին ըրին, կ'ըսէ Տէրը:
25 «Ո՛վ բոլոր երկիրը աւերող ապականիչ լեռ,
Ահա ես քեզի դէմ եմ», կ'ըսէ Տէրը,
Իմ ձեռքս քու վրայ պիտի երկնցնեմ,
Քեզ ժայռերէն վար պիտի գլորեմ:
Քեզ այրած լեռ պիտի ընեմ:
26 Ու քեզմէ անկեան քար եւ հիմի քար պիտի չառնեն,
Քանգի յաւիտեանապէս աւերակ պիտի ըլլաս», կ'ըսէ Տէրը:
27 Երկրին մէջ դրօշակ բարձրացուցէր,
Ազգերուն մէջ փող հնչեցուցէր,
Անոր դէմ ազգեր պատրաստեցէր,
Անոր վրայ Արարտի, Մինիի
Ու Ասքանագի թագաւորութիւնները կանչեցէ՛ք,
Անոր վրայ զօրապետներ դրէ՛ք,
Մազոտ մարախներու պէս ձիեր հանեցէ՛ք...¹³³:

Երեմիայ մարգարէի այս պատմական մարտահրաւէրի կոչը կը տեղադրուի 594-592 թուականներուն Ք.Ա.¹³⁴:

¹³³. Աստուածաշունչ, ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԵԱՅԻ, Բաբելոնի Անաչառ Դատաստանը, 51:27:

¹³⁴. Հայ ժողովրդի Պատմութեան Քրեատմատիա, 1., Երեւան, 1981, հատոր, , Երեւան 1981, էջ 116:

Երեմիայ, Հրեաստանի Յուդայի Բաբելոնեան ժամանակաշրջանի մարգարեներէն էր: Անոր մարգարէութիւնները կ'ընդգրկէն մօտ քառասուն տարի (626–584 Ք.Ա.)¹³⁵: Երեմիայ հրեաներուն խոստացաւ, որ անոնք գերի տարուելէ 70 տարի ետք, պիտի վերադառնան: Երեմիայ Երուսաղէմի կործանումէն ետք Ք.Ա. 586թ. հաստատուեցաւ եգիպտոս, ուր եւ մահացաւ¹³⁶:

Երեմիայ մարգարէի կոչի մէջ յիշուած են երեք թագաւորութիւններ, որոնց կոչ կուղուէր արշաւելու Բաբելոնի վրայ. անոնք էին Ասքանազի, Միցիի եւ Արարատի թագաւորութիւնները:

Երեմիայ մարգարէի կողմէ յիշուած Ասքանազի թագաւորութեան մասին, հիմնականօրէն կան երկու կարծիքներ: Առաջին կարծիքը, թէ ան հնդեւրոպացի սկիւթական ժողովուրդի՝ Աշքենազ ցեղերու միութիւնն էր. երկրորդը՝ ան փռուցիացիներու թագաւորութիւնն էր Փոքր Ասիոյ մէջ: Յիշեցք նաեւ, թէ Ասքանազ անուն մենք կը հանդիպինք Աստուածաշունչի մէջ, որպէս, Նոյ նահապետի սերունդէն՝ Թորգոմի եղբայրը. «Եւ Նոյի որդիներուն Սէմին, Քամին ու Յաբեթին ծնունդներն ասոնք են: Զրեղեղէն ետքը անոնց որդիներ ծնան: 2 Յաբեթին որդիները Գոմեր, Մագոգ, Մադա, Յաւան, Թոբէլ, Մոսոր ու Թիրաս էին: 3 Գոմերին որդիները Ասքանազ, Բիփաթ ու Թորգոմա էին:...»¹³⁷:

Միցիի թագաւորութիւնը, Միցիի պետութիւնն էր Ուրմիոյ լիճի հարաւին: Միցիի մասին կարելի է ըսել, որ շատ հաւանական է, որ ան մաս կը կազմէր յիշեալ Արարատի թագաւորութիւնէն, մէջբերենք հետեւեալ բացատրութիւնը, «Աստուածաշունչի եբրայական բնագրում եւ նրա լատինական թարգմանութիւններում երկրանունները թուարկուած են հետեւեալ կերպ՝ «Արարատի, Միցիի եւ Ասքանազի թագաւորութիւններին», իսկ յունականում «Արարատի թագաւորութեանն ու Ասքանազեան գնդին»: Միցիին (սեպագիր աղբիւրներում՝ Մաննա), գտնուել է Ուրմիոյ լճի աւազանի հարաւակողմում եւ Աստուածաշունչի յունական թարգմանութեան մէջ, փաստօրէն, համարուում է Արարատի թագաւորութեան՝ Հայաստանի մի մասը»¹³⁸: Հետեւեալ աշխատութեան մէջ նաեւ Միցիի պետութիւնը, կը նկատուէր Հայաստանէն մաս մը, «Արարատ եւ

Միցիի գաւառներ էին Հայաստանի մէջ: Ասքանազը հաւանական հարեւան գաւառ մըն էր»¹³⁹:

Հայոց պատմահայր՝ Մովսէս Խորենացին խօսած է նաեւ Երեմիայի կոչի մասին, ու անդրադարձած չէ Միցիի պետութեանը: Մէջբերենք, «Եւ որ իսկապէս այդ ժամանակները մեր ազգը թագաւորութիւն ունէր, վկայում է նաեւ Երեմիա մարգարէն իր մարգարէութեան մէջ՝ Բաբելոնի դէմ պատերազմի հրաւիրելով. «Հրաման տուր, ասում է նա, Այրարատեան թագաւորութեանը եւ Ասքանազեան գնդին»: Սա ապացոյց է, որ այդ ժամանակ մենք ունեցել ենք թագաւորութիւն»¹⁴⁰:

Այդ բոլորը կը փաստեն, թէ Միցիի պետութիւնը, այդ ժամանակ՝ մաս կը կազմէր Արարատի թագաւորութիւնէն:

Իսկ Արարատի թագաւորութեան մասին խօսելէ առաջ, լուսաբանենք, թէ ինչու Երեմիայի մարտահրաւէր–կոչը ուղղուած է Բաբելոնէն դէպի հիւսիս, Հայկական լեռնաշխարհի եւ Փոքր Ասիոյ մէջ գտնուող պետութիւններուն. պատճառն այն էր, որովհետեւ հին պատմութեան սկիզբէն ի վեր Միջագետքի մէջ հիմնուած հզօր կայսրութիւններու վերջը տրուած է հիւսիսէն՝ Հայկական լեռնաշխարհէն եւ անոր կցուած շրջաններէն եկող ժողովուրդներու հարուածներով. օրինակները շատ են, այսպէս:

1. Սեմական Աքքադի կայսրութիւնը կործանուեցաւ Կորդվաց երկրի կողմէ, որ կը գտնուէր Ասորեստանի հիւսիսին: Մէջբերենք, «Կորդվաց աշխարհի (կուտիական երկրի) առաջնորդութեամբ մարտնչող Հայկական լեռնաշխարհի եւ յարակից շրջանների տասնեօթ իշխանութիւնների դաշինքի հարուածներից (Ք.ա. 2200թ.)»¹⁴¹:

2. Սեմական Ամմորացիներու հին Բաբելոնի կայսրութեան անկումը, որ պատմութեան մէջ յայտնի է Համմուրապեան հարստութեամբ, իր հռչակաւոր թագաւոր Համմուրապիի (1793–1751 Ք.Ա.) անունով: Այս աշխարհակալութիւնը կործանուեցաւ 1595 Ք.Ա. ի հետեւանք Հայկական լեռնաշխարհի արեւմտեան տարածքներէն՝ հաթերու Մորշելի Ա. թագաւորի անակնկալ եւ աւերիչ արշաւանքով, որոնց հետեւանք ետք լեռնային բարբարոս ժողովուրդներէն Քասսիտները (Քաշիները), օգտուեցան առիթէն եւ գրաւեցին Բաբելոնը, ու իշխեցին մօտ չորս դար:

¹³⁵. The Holman Illustrated Study Bible, Tennessee, 2006, p. 925.

¹³⁶. Աստուածաշունչի Հանրագիտարան, էջ 329 եւ The Holman Illustrated Study Bible, p.1024.

¹³⁷. Աստուածաշունչ, ԾՆՆԴՈՅ 10, Նոյի որդիներուն Սերունդը:

¹³⁸. Մեր Յաղթանակները, Հատոր Ա., էջ 134, 135, (Բաժնի հեղինակ՝ Արտակ Մովսիսեան):

¹³⁹. Howard Tillman Kuist, The Layman's Bible Commentary, Jeremiah, p. 136.

¹⁴⁰. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1968, Գիրք Ա, Գլուխ ԽԶ:

¹⁴¹. Մեր Յաղթանակները, Հատոր Ա., Երևան, 2008, էջ 135, (Բաժնի հեղինակ՝ Արտակ Մովսիսեան):

3. Հայկական լեռնաշխարհի հարաւային տարածքներէն՝ Միտանիի թագաւորութիւնէն, 15-րդ դարին Ք.Ա.՝ Ասորեստանի հին կայսրութեան հասան մահացուցիչ հարուածները:

4. Ասորեստանը Շալմանասար Գ-ի մահէն 824 Ք.Ա. մինչեւ Թազդար Փաղասար Գ-ի գահակալութիւնը 744 Ք.Ա. մօտ ութսուն տարի, մնաց Հայկական լեռնաշխարհի վրայ հիմնուած հզօրացող վանի թագաւորութեան (Ուրարտուի) շուրջին տակ. ինչպէս յիշեցինք այս գիրքի առաջին Գլուխի մէջ:

5. Հայկական լեռնաշխարհի հարաւային տարածքներու մէջ հիմնուած Արմէ-Շուպիրիայի հայերը, մասնակցեցան Ասորեստանի վերջին կայսրութեան կործանման 612 Ք.Ա. դաշնակցելով Բաբելոնցիներու եւ Մարբու հետ:

Այսպէս հին աշխարհը, այս պարագային Հրեաստանը. հզօր Բաբելոնի կայսրութեան մահացուցիչ հարուածը կը տեսնէր նաեւ հիւսիսէն արաշառող ժողովուրդներէն: Երեմիայ մարգարէն իր վերոյիշեալ մարտահրաւեր-կոչէն առաջ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԲԱԲԵԼՈՆԻՆ գլուխի մէջ, կը յիշէ նաեւ հիւսիսէն եկող ժողովուրդի մասին:

«41 Ահա հիւսիսէն ժողովուրդ մը պիտի գայ
Ու մեծ ազգ մը եւ շատ թագաւորներ
Երկրի ծայրերէն պիտի արթննան:
42 Անոնք աղեղ ու նիզակ կը կրեն,
Անոնք անգուր ու անողորմ են:
Անոնց ճայնը ծովու պէս կը գոռայ
Եւ անոնք ձիերու վրայ կը հեծնեն
Ու պատերազմող մարդու պէս
Քեզի դէմ կը շարուին, ո՛վ Բաբելոնի աղջիկ:
43 Երբ Բաբելոնի թագաւորը այս լուրը լսեց,
Անոր ձեռքերը թուլցան.
Նեղութիւնը շրջապատեց զանիկա
Ծննդական կնոջ երկունքին պէս:...»¹⁴²:

Այս տօղերու մէջ յիշուած "հիւսիսէն եկող ժողովուրդը" ըստ Պօրիս Բիթթորովսքիին հնդեւրոպացի կիմմիրները եւ Սկիւթներն էին¹⁴³: Վստահաբար կիմմիրներու եւ Սկիւթներու շարքին էին Հայկական լեռնաշխարհէն եւ անոր կցուած շրջաններէն եկող ժողովուրդները:

Մարտահրաւերին մէջ յիշուած Արարատի թագաւորութեան մասին հարց կայ, արդեօք Երեմիայ մարգարէն ըսել կ'ուզէր տկարացած Ուրարտուն, կամ թէ հզօրացող Արմէ-Շուպիրիայի մէջ հիմնուած Երուանդեան պետութիւնը, որ Ուրարտուի պատմական յաջորդն եղաւ:

Յատկանշական է այն հանգամանքը, որ Երեմեայի մարտահրաւեր-կոչի մէջ յիշեալ երեք թագաւորութիւններու առաջինը, Արարատի թագաւորութիւնն էր, ինչ որ կ'ապացուցէ, թէ ան ամենագոյնցիկն էր յիշեալ երեք ուժերու միջեւ:

Երեմիայ մարգարէի մարտահրաւերին մէջ յիշուած Արարատի թագաւորութեանը մասին կան հետեւեալ մէկէ աւելի բացատրութիւնները:

1. Կան բացատրութիւններ, ըստ որոնց Երեմիայի յիշած Արարատի թագաւորութիւնը Ուրարտուն չէր այլ Արմէ Շուպիրիայի Երուանդեան թագաւորութիւնը: Արմէ-Շուպիրիայի մէջ յառաջացող հայկական իշխող ընտանիքը, որուն նահապետն էր Սկայորդին, կը կոչուէր նաեւ Երուանդեան կամ Երուանդունի. այդ պատճառով՝ եւ ինչպէս պիտի տեսնենք, Ուրարտուին յաջորդող հայկական հարստութիւնը կոչուեցաւ Երուանդաշատ: Սկայորդիի պետութիւնը Մովսէս Խորենացին կը կոչէ Թորգոմայ տունը. յաջորդ բաժինի մէջ պիտի անդրադառնանք այդ հարցին: Այս առնչութեամբ մէջբերենք Հայ ժողովուրդի Քրեստոմատիայի մէջ տրուած բացատրութիւնը, ուր գրուած է. «Այրարատեան թագաւորութիւնը, որին Երեմիան յորդորում է ընդդէմ Բաբելոնի, ամենայն հաւանականութեամբ, Երուանդունիների նորաստեղծ հայկական պետութիւնն էր: Կան նաեւ տեսակէտներ, որ խօսքն այստեղ դէպի անկում գնացող Ուրարտական պետութեան մասին է, որ քիչ է հաւանական: Աստուածաշունչի եբրայական բնագրում եւ նրա Հատինական թարգմանութիւններում յիշեալ երկրանունները թուարկուած են հետեւեալ կերպ «...Արարատի, Միցնիի եւ Ասքանազի թագաւորութիւններին», յունականում՝ «...Արարատի թագաւորութեանն ու Ասքանազեան գնդին»¹⁴⁴:

¹⁴². Աստուածաշունչ, ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՆ ԵՐԵՄԵԱՅԻ, Աստուծոյ Դատաստանը Բաբելոնին, 50:41-43:

¹⁴³. Պ. Պ. Բիթթորովսքի, Ուրարդու Անդրկովկասի Ամենահին Պետութիւնը, Փարիզ, էջ 56:

¹⁴⁴. Հայ ժողովուրդի Պատմութեան Քրեստոմատիա, 1. Հատոր, Երեւան, 1981, էջ 117:

Մէջբերենք եւս Լեւոն Շահինեանէն, ուր ան կը յիշէ, թէ Երեմիայ մարգարէի կոչը ուղղուած էր Արմե-Շուպրիայի մէջ հիմնուած հայկական թագաւորութեանը, «Այս մարգարէութիւնը թուագրուած է մ.թ.ա. 594-592 թուականներով: Այսինքն մ. թ. ա. VI դարի հենց սկզբին արդէն գոյութիւն ունի հայկական կամ Արարատա թագաւորութիւն, որը շատ յուսալի եւ առաջնակարգ ուժ է համարուել ընդդէմ հզօր Բաբելոնի, ունեցել է բաւականաչափ դիրք ու ճանաչում ժամանակի աշխարհում: Իսկ սա նշանակում է, որ ըստ Երեմիայի եւս այդ թագաւորութիւնը գոյութիւն ունէր աւելի վաղ ժամանակից, ինչպէս, նկատել է Մովսէս Խորենացին, ինչպէս երեւում է Բաբելոնեան ժամանակագրութեան եւ Ասարհադոնի տեղեկութիւններից»¹⁴⁵:

Եսայի մարգարէի պատմութեան մէջ յիշուած Ասորեստանի Սենեքերիմ թագաւորի սպանութեան առիթով հայրասպան որդիները ապաստանեցան Արարատի երկիրը, Հայկական լեռնաշխարհի Արմե-Շուպրիայի երկիրը: Ապա մօտ մէկ դար ետք, Երեմիայի կոչ-մարտահրաւերին մէջ կը յանդիպինք նորէն Արարատի երկիր-ին, ուր Յուդան Բաբելոնի արշաւանքէն փրկուելու համար՝ օգնութիւն կը խնդրուէր, Հայկական լեռնաշխարհէն, Արմե-Շուպրիայի մէջ գոյութիւն ունեցող հայկական թագաւորութիւնէն:

Երուանդեան պետութիւնը գործնականապէս սկսած էր ներկայանալ որպէս նախկին Ուրարտուի (Վանի թագաւորութեան) յաջորդը: Գուցէ այդ պատճառով Երեմիայ մարգարէն յիշած է Արարատ անունը, որովհետեւ իր մօտ Ուրարտուն կամ թէ իր յաջորդը՝ Երուանդեան պետութիւնը նոյնն էր, Հայաստանը: Բայց կալ եւս այլ բացատրութիւն մը, որ շատ հաւանական կը դարձնէ թէ Երեմիան ըսել կ'ուզէր Ուրարտուն:

2. Եթէ Երեմիայ ըսել կուզէր դէպի անկում առաջնորդուող Հայկական լեռնաշխարհի Ուրարտուն, ապա պետք է նշել, թէ Երեմիայ մարգարէի այս կոչը օգնութիւն խնդրելու Ուրարտուն նոյնիսկ անոր անկման ընթացքին. մեծ ապացոյց մըն էր, թէ որքան մեծ դեր ունեցած էր Ուրարտուն իր պայքարով Ասորեստանի դէմ, զբաղուեցնելու անոր, եւ հեռու պահելու Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններէն:

Ինչպէս անդրադարձանք այս Գլուխի 2-րդ Բաժինի մէջ, Նինուէի անկումէն ետք Արեւմուտքին տիրանալու սուր պայքար ծագեցաւ, Բաբելոնի եւ Եգիպտոսի միջեւ: Այս պայքարի ընթացքին Բաբելոնի Նաբուպակասար եւ Նաբուգոթոնոսոր Բ. արքաները կազմակերպեցին ռազմական արշաւանքներ Ուրարտուի դէմ. հետեւեալ մէջբերման մէջ Պորիս Բիթթորվսի կը յիշէ, թէ թերեւս այդ բոլորի ազդեցութեան տակ էր, որ Երեմիան իր կոչի մէջ յիշեց Ուրարտուն (Արարատի թագաւորութիւնը). «Բաբելական ժամանակագրութիւն մը, որ մեզ կուտայ մանրամասն տեղեկագրութիւններ, ամիսէ ամիս, Ք.Ա. 616ի եւ 609ի միջեւ, դէպքերու մասին, գլխաւորապէս կապուած Ասորեստանին պարտութեան հետ, կը յիշէ արշաւանք մը Ուրարտուի դէմ (յատկապէս Ուրաշտու աւանի վրայ) 609ին, բայց այդ պատերազմի արդիւնքը անձանօթ է, որովհետեւ բնագիրը վնասուած է այդտեղ»:

Այս բնագիրի շարունակութիւնը, գրուած մէկ այլ յուշակոթողի վրայ եւ տալով տեղեկագրութիւն Ք.Ա. 608էն մինչեւ 605ի դէպքերուն, կան յաւելուած ակնարկութիւն Նաբուպակասարի արշաւանքի մը Պիր-Հանունեայ լեռնային տարածքի մէջ՝ գաւառ մը Ուրարտուի մէջ՝: Հաւանական է, որ Բաբելոնցիներու այս արշաւանքները Ուրարտուի դէմ տակաւին տեղի կ'ունենային Ք.Ա. 6-րդ դարու սկիզբին. եւ պարբերութիւն մը Երեմիայի գիրքի մէջ թուականուած Զէտէկեա թագաւորի գահակալութեան շորորոդ տարին (595 Ք.Ա.) կ'անդրադառնայ Բաբելոնի դէմ կոչի մը միացեալ՝ Մարերուն, Ուրարտացիներուն (Արարատ), Մաննիներուն (Միւնի), եւ Սկիւթներուն (Ասքանազ)»¹⁴⁶:

3. Նիկողայոս Ադոնցի բացատրութիւնը այս հարցի շուրջ, հիմնովին տարբեր է նախորդ յիշուած երկու բացատրութիւններէն¹⁴⁷: Ն. Ադոնց Երեմիայ մարգարէի կոչը կը տեղադրէ մօտ քսան տարի առաջ, այն հանգրուանին երբ տեղի կ'ունենար Ասորեստանի անկումը 612 Ք.Ա., մէջբերենք «Անկասկած, հակադրութիւն գոյութիւն ունէր ասորական եւ ուրարտական մտայնութեան միջեւ, հակադրութիւն, որը լուսաբանում է այն իրողութեամբ, որ մարգարէն կոչ է անում Ուրարտուին՝ օգնութեան գալ Նինուէին վերջ տալու համար»¹⁴⁸: Ըստ այս բացատրութեան, Երեմիայ մարգարէի կոչը Նինուէն կործանելու, փոխուած է, ու հարմարեցուած Բաբելոնի անկման հետ: Ն. Ադոնց Ասորեստանի անմարդկային հրեշային չարիքներուն կը վերագրէ Երեմիայի այս կոչը Նինուէն կործանելու: Մէջբերենք հետեւեալը. «Մարդն ինքնին՝ նրա արժէքը, նրա մարդկային արժանապատւութիւնը, ոչ մի

¹⁴⁵. Լեւոն Շահինեան, Ուրարտու Առեղծուածը, Երեւան, 1994, էջ 58:

¹⁴⁶. Boris B. Piotrovsky, The Ancient Civilization of Urartu, Geneva, 1969, p. 198.

¹⁴⁷. Նիկողայոս Ադոնց, Հայաստանի Պատմութիւն, էջ 282, 283:

¹⁴⁸. Ն. Ադոնց, նոյնը, էջ 285:

գին չունէր ասորեստանցիների համար: Դրանով է բացատրում նրանց անսահման անգթութիւնը, դաժանութիւնը: Մարդ սարսափում է այն յայտարարութիւնների հրէշութիւնից, որ Ասորեստանի վեհապետներն ատանց նեղուելու եւ հպարտութեամբ անում էին: Նրանք իրենց մասին ասում էին, թէ թշնամի երկրների վրայ նետում էին «կատաղած շան» պէս, նրանց հողը ոտնահարում էին «վայրենի ցուլի» պէս եւ նրանց պարտադրում էին «ծանր, անտանելի լուծ»: Հիւանդագին կրքոտութեամբ են նկարագրում նրանք այն սարսափելի արարքները, որ կատարում էին...»¹⁴⁹:

Որպէս եզրակացութիւն, ստույգ իրականութիւնը այն է, որ Երեմիայ իր կոչով օգնութիւն կը խնդրէր Հայաստանէն ու հայ ժողովուրդէն, Ուրարտուէն, Արմէ-Շուպիթիայէն, կամ Երուանդեան Թագաւորութիւնէն կործանելու համար Միջագետքի մէջ կեդրոնացած հզօր բռնակալութիւնը, Ասորեստանն էր նա, թէ Բաբելոնը:

4. ԵԶԵԿԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՒՐԱՐՏՈՒՆ

Աստուածաշունչի եզեկիէլի մարգարէութեան մէջ, Երեմիայ մարգարէի կոչէն մի քանի տարիներ առաջ՝ կր հանդիպինք Հրեաստանին օգնութեան համար հիւսիսէն եկող բարեկամ կամ դաշնակից ժողովուրդներու, որոնց մէջ կար նաեւ Թորգոմայ տունը:

Եզեկիէլ մարգարէ 597 Ք.Ա. Յուդայի Յովաքիմ թագաւորի եւ հրեայ գերիներու առաջին խումբի հետ արքայութեան Բաբելոն: Եզեկիէլ ժամանակակից էր Երեմիային, բայց ան ապրեցաւ արքայութեան Բաբելոնի մէջ. իսկ Երեմիան ապրեցաւ Երուսաղէմի մէջ: Եզեկիէլի մարգարէութեան գիրքի մէջ զետեղուած են իրեն յայտնուած տեսիլքները Բաբելոնի գերութեան տարիներուն: Ան կանխատեսած է Յուդայի թշնամի ազգերու անկումը:

Եզեկիէլի մարգարէութեան 48 համարները կը բաժանուին հիմնականօրէն երկու մասի: Գլուխներ 1-24 Երուսաղէմի անկումէն առաջ. եւ Գլուխներ 25-48 Երուսաղէմի անկումէն ետք, որոնցմէ Գլուխներ 25-38 մարգարէութիւններն են առնչուած օտար ազգերու, եւ կամ անոնց ոսնձգութիւններուն Յուդայի վրայ: Այս վերջին խումբին մէջ, երկու տարբեր աոիթներով, յիշատակուած են Հայկական լեռնաշխարհի մասին, աւելի ստույգ Թորգոմայ տանը մասին. տես Յուդակ թիւ 6:

Եզեկիէլի առաջին յիշատակութիւնը՝ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՏԻՒՐՈՍԻՆ ԴԷՄ ԳԼՈՒԽԻՆ մէջ, ան կը գուշակէ Տիւրոս քաղաքի կործանումը Բաբելոնի Նաբուգոթոնոսոր Բ. թագաւորի ձեռքով, որովհետեւ Տիւրոս քաղաքը շատ վատ խօսած էր Երուսաղէմի մասին, «Վա՛շ, ժողովուրդներուն դո՛ները կոտորեցան, անոր ամէն բանը ինձի փոխանցուեցաւ, անոր ամապատ դառնալով ես պիտի լեցուիմ»¹⁵⁰: Եզեկիէլ ԹԱՂՄԱՆ ԵՐԳ ՄԸ ՏԻՒՐՈՍԻՆ ՀԱՄԱՐ ԳԼՈՒԽԻՆ մէջ, կ'անդրադարձայ Տիւրոս քաղաքի բարգաւաճ վիճակի եւ անոր վաճառականական կապերու մասին՝ բոլոր երկիրներու հետ, որոնցմէ նաեւ Հայկական լեռնաշխարհի: Ան կը յիշէ, «12 Ամէն տեսակ ապրանք շատ ըլլալուն համար՝ Թարսիսի բնակիչները քու վաճառանոցներուդ մէջ արծաթի, երկաթի, անագի ու կապարի առուտուր կ'ընէին: 13 Յաւան, Թոբէլ ու Մոսոր քու վաճառականներդ էին: Անոնք քեզի հետ մարդ կը փոխանակէին ու պղնձէ ամաններու առետուր կ'ընէին: 14 Թորգոմի տունէն քու վաճառանոց -

¹⁴⁹. Ն. Ադոնց, նոյնը, էջ 284:

¹⁵⁰. Աստուածաշունչ, ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵԶԵԿԻԷԼԻ, Մարգարէութիւն Տիւրոսին ԴԷՄ, 26-2:

մերոյ ձիեր ու կառածիեր եւ ջորիներ կը բերէին:»¹⁵¹: Ուրեմն Թորգոմի տունէն, այսինքն Հայաստանէն ձիեր եւ ջորիներ կ'արտահանուէին:

Հայկական լեռնաշխարհի ազնուացեղ ձիերու արտահանումը դէպի հարեւան երկիրներ, գոյութիւն ունէր դարերէ ի վեր: Այս առնչութեամբ մէջբերենք Գուրգէն կարապետեանէն «Երկիրը աչքի է ընկնում ոչ միայն իր հանքերով ու մետաղամշակմամբ, այլեւ զարգացած գիւղատնտեսութեամբ: Լեռնային մարգագետինները հնարաւորութիւն էին տալիս պահել ինչպէս մանր ու խոշոր եղջերաւոր անասուններ, այլեւ ազնուացեղ ձիեր, որոնց արտահանումը մեծ տարածում ունէր ու այստեղի ձիերի բարձր որակի մասին յայտնի էր նոյնիսկ հեռաւոր Պաղեստինում»¹⁵²:

Եզեկիէի այս յիշատակութիւնը, Հայկական պետութեան բարգաւաճ վիճակի մասին կարեւոր յիշատակութիւն մըն է: Թէեւ Տիրոսի, Դամասկոսի, Երուսաղէմի եւ այլ քաղաքներու հետ Ուրարտուն ունեցած է վաճառականական կապեր. սակայն հարց կայ այստեղ, արդեօք Եզեկիէի այս յիշատակութիւնը Ուրարտուի մասին է՞ր, շատ հաւանաբար ոչ: Եզեկիէի յիշած Թորգոմայ տունը շատ հաւանաբար մատնանշելու էր Հայկական լեռնաշխարհի այդ հանգրուանի հզօրացող Արմէ-Շուպրիայի թագաւորութեանը, եւ ոչ թէ տկար վիճակի մէջ գտնուող վանի թագաւորութեան (Ուրարտուն) իր վերջին թագաւոր Ռուսա Գ-ի 605-585 Ք.Ա. օրով. տես Յուլիան Թիւ 1: Անցեալ Բաժնի մէջ յիշեցինք, որ Սկայորդիի հիմնած պետութիւնը Արմէ-Շուպրիայի մէջ՝ Մովսէս Խորենացիին կը կոչէ Թորգոմայ տուն: Յաջորդ Բաժնի մէջ պիտի անդրադառնանք այդ հարցին եւս:

Եզեկիէ կրած է այս Գլուխը Երուսաղէմի անկումէն ետք, ինչպէս յիշեցինք: Այդ ժամանակ ան կը գտնուէր Բաբելոն՝ գերութեան մէջ. ու հեռաւոր Բաբելոնի համար, այդ հանգրուանին Ուրարտուն՝ որեւէ վտանգ չէր ներկայացներ: Բաբելոնի եւ անոր մէջ բնակողներուն ուշադրութիւնը աւելի կեդրոնացած պէտք էր, որ ըլլար Հայկական լեռնաշխարհի հզօրացող Արմէ-Շուպրիայի թագաւորութեան վրայ, եւ ոչ թէ՛ տկար վիճակի մէջ գտնուող Ուրարտուի:

Եզեկիէի երկրորդ յիշատակութիւնը Թորգոմայ տանը մասին իր մարգարէութեան ԳՈԳԸ ՈՐՊԷՍ ԳՈՐԾԻՔ ԱՍՏՈՒԾՈՅ Գլուխի մէջ է:

¹⁵¹. Աստուածաշունչ, ՄԱՐԳԱՐԷՆԻԹԻԻՆ ԵԶԵԿԻԷԼԻ, Թաղման երգ մը Տիրոսին համար, 27-14:

¹⁵². Գուրգէն կարապետեան, Հայոց Պատմութեան Ուրվագծեր, 1 Հատոր Բ. Գիրք, Երեւան, 2002, էջ 15:

Եզեկիէի մարգարէութիւնն էր, Մագոգի երկրի կառավարիչ եւ Ռուս-մեսոքի ու Թոբէի իշխան Գոգի արշաւանքի ժամանակ. ան կ'անխտեսեց Գոգի երկրի կործանումը, ուր մասնակցութիւն կունենան հայերը՝ Թորգոմա տունը: Եզեկիէի մարգարէութիւնը կ'ըսէ Յուդայի Յովաքին թագաւորի գերութեանը հինգերորդ տարին¹⁵³:

Յովաքին թագաւորած է մօտաւորապէս Ք.Ա. (598-597) թուականներուն. հետեւաբար Եզեկիէի պատմածը համապատասխան պէտք է ըլլայ Ք.Ա. 593 թուականին: Ան յիշած է, «Դարձեալ տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով. 2 «Որդի՛ մարդոյ, երեսդ դէպի Մագոգի երկիրը եղող Ռովսի, Մոսորի ու Թոբէի իշխանին՝ Գոգին դարձուր եւ անոր վրայով մարգարէութիւն ըրէ՛ 3 Ու ըսէ՛, Տէր Եհովան այսպէս կ'ըսէ. Ահա ես քեզի դէմ եմ, ո՛վ Գոգ՝ Ռովսի, Մոսորի ու Թոբէի իշխան: 4 Քեզ պիտի շրջապատեմ եւ քու կզակներուդ կարթեր պիտի անցնեմ ու քեզ եւ քու բոլոր բանակդ պիտի հանեմ, ձիերն ու ձիաւորները, ամենքն ալ կատարելապէս հազուած եւ վաճառուորներուն ու ասպարաւորներուն մեծ խումբը բոլորն ալ սուր բռնող. 5 Անոնց հետ Պարսիկները, Եթովպացիներն ու Փուդացիները, ամենքն ալ ասպարաւոր ու սաղաւարտաւոր, 6 Նաեւ Գոմեր ու անոր բոլոր գունդերը, Թորգոմի տունը հիւսիսի ծայրերէն ու անոր բոլոր գունդերը, շատ ժողովուրդներ, քեզի հետ պիտի հանեմ...»¹⁵⁴:

Այս Գլուխի մէջ յիշուած Գօգը եւ կամ Մագոգի երկիրը կարելի չէ պատմականօրէն վերագրել Եզեկիէի ժամանակներու հետ: Շատերը կը կարծեն, որ այս պատմութիւնը աւելի խորհրդանշական է: Այս ուսումնասիրութեան առնչութեամբ կարելորդ այն է, որ Երուսաղէմին օգնութեան հասնողներու ցանկին մէջ կայ Հայաստանը: Նաեւ պէտք է յիշել, որ սովորական օգնութեան մասնակցութիւն մը չէր, այլ Թորգոմայ տունը կ'ուզար իր բոլոր գունդերով՝ «ու անոր բոլոր գունդերը»:

Եզեկիէ կը գուշակէ Գոգի երկրի կործանումը՝ եւ յիշելով կործանողներուն, անոնց մէջ կը յիշէ Թորգոմայ տունը: Բոլորը եկած էին որպէս Իսրայէլի դաշնակիցներ. այս պարագային Երուսաղէմը պաշտպանելու, որովհետեւ Իսրայէլի թագաւորութիւնը արդէն կործանուած էր 721 Ք.Ա., մօտաւորապէս մէկ ու կէս դար առաջ: Աստուածաշունչի մէջ հրեայ ժողովուրդը կոչուած է Իսրայէլցիներ. նոյնիսկ այդպէս կը կոչուի Յուդայի ժողովուրդը. ուրեմն օգնութիւնը կուգար փրկելու

¹⁵³. Աստուածաշունչ, ՄԱՐԳԱՐԷՆԻԹԻԻՆ ԵԶԵԿԻԷԼԻ, 1-2:

¹⁵⁴. Աստուածաշունչ, ՄԱՐԳԱՐԷՆԻԹԻԻՆ ԵԶԵԿԻԷԼԻ, Գօգը որպէս գործիք Աստուծոյ, 38-5,6:

խորալեցիներուն (Յուդայի ժողովուրդին), պաշտպանելով նաև Յուդայի մայրաքաղաք՝ Երուսաղեմին:

Թէ ինչու հայ ժողովուրդը կը կոչուէր Ազգն Թորգոմայ մէջբերենք հետեւեալ կարեւոր բացատրութիւնը Լեւոն Շահինեանէն, «Թորգոմը, ըստ Աստուածաշնչի տեղեկութիւններին, Նոյ մահապետի Հաբեթ որդու սերնդից է, աւելի ճշգրիտ Հաբեթի ծոռը (Հաբեթ, Գամբը, Թիրաս, Թորգոմ, տես Ծննդոց, Գլ. Ժ, 2-3, Առաջին Մնացորդաց, Գլ. Ա. 5-6): Ահա այս հիման վրայ էլ եւ օտար միջնադարեան պատմիչներն ու մատենագիրները հայերին սերուած են համարում Թորգոմի տոհմից: Դրանով իսկ նրանք յաճախ Հայք-Հայաստանը անուանում են նաև Տունն Թորգոմայ, իսկ հայերին Որդիք կամ Ազգն Թորգոմայ, Թորգոմածին, Թորգոմեանք: Եւ քանզի Հայք անունը ըստ հայ պատմագրութեան, ծագում է Հայկ մահապետի անունից, իսկ Հայկը Թորգոմ մահապետի որդին էր, նշանակում է Թորգոմայ Տուն անունը նախորդել է Հայք անուանը, այսինքն մօտ մ.թ.ա. երրորդ հազարամեակի առաջին կէսի վերջերին: Նշանակում է նաև, որ հին հրեաները այդ ժամանակից են ծանօթ Թորգոմայ տուն անուանը եւ աւելի ուշ առաջացած Արարատա երկիր, Այրարատեան թագաւորութիւն անուններին զուգահեռ, իրենց բանաւոր ու գրաւոր խօսքում գործածել են Հայք անունն փոխարեն մինչեւ Եզեկիէլ մարգարէի ժամանակը եւ յետոյ»¹⁵⁵:

Ըստ Աստուածաշունչի Թորգոմը Նոյ մահապետի թոռն էր, «1 Եւ Նոյի որդիներուն՝ Սեմին, Քամին ու Յաբեթին ծնունդներն ասոնք են: Զրհեղեղէն ետքը անոնց որդիներ ծնան:

2 Յաբեթին որդիները Գոմեր, Մագոգ, Մադա, Յաւան, Թոբէլ, Մոսոր ու Թիրաս էին:

3 Գոմերին որդիները Ասքանագ, Բիփաթ ու Թորգոմա էին»¹⁵⁶:

Հայտնի ուրարտագէտ Պ.Պ. Բիթթրովսքի Թորգոմի մասին կը յիշէ Հայաստանի հայրը. «Աստուածաշունչին ճիշդագրական ցուցակին մէջ Գոմէրը (կիմմիրա ըստ բելեռագիր արձանագրութեանց) կը համարուի Յաբեթի որդին եւ երեք զաւակներու՝ Աշգենագի (Աշգուգա), ըստ բելեռագիր արձանագրութեանց), Բիֆատի (Պափլագոնիոյ) եւ Թոկարմի (Հայաստանի) հայրը»¹⁵⁷:

155. Լեւոն Շահինեան, նոյնը, էջ 58, 59:

156. Աստուածաշունչ, ՄՆՆԴՈՅ 10:

157. Պ.Պ.Բիթթրովսքի, Ուրարտու Անգլոլոկասի Ամենահին Պետութիւնը, Փարիզ, էջ 56:

Յիշենք այստեղ, որ անգլերէն թարգմանուած Աստուածաշունչերու մէջ Թորգոմայ տան համար կը յիշուի «6 Գոմեր եւ իր զունդերը, Թորգոմայ տունը հեռաւոր հիւսիսէն, եւ իր բոլոր զունդերը»¹⁵⁸: Ուրիշ մէկ այլ տպագրութեան մէջ կը յիշուի, «6 Գոմեր եւ իր բոլոր զունդերը, Բէյթ Թորգոման հիւսիսի հեռաւոր կողմերէն եւ իր բոլոր զունդերը»¹⁵⁹:

Ուրեմն Աստուածաշունչի մէջ յիշուած "Թորգոմայ տուն" կը մատնանշէ Հայաստանը, ինչպէս որ անդրադարձանք: Հետաքրքիր է, որ այս հարցով եւս կան անհեթեթ հրատարակութիւններ. մէջբերենք մէկը անոնցմէ, «Գոմեր կը նշանակէ կիմիրները, միջնդեռ բէյթ Թորգոմամն՝ վայր մըն էր Սեւ Ծովի վրայ, հիւսիս մէջ»¹⁶⁰: Հեղինակը կը բաւարարուի յիշելով, վայր մը Սեւ Ծովի վրայ. երբ կարող էր գիտնականօրէն աւելի յստակ յիշել՝ Հայկական լեռնաշխարհի մէջ. մանաւանդ, որ հին աղբիւրներու մէջ հայերուն կը կոչէին Թորգոմայ որդիք, Թորգոմածին, Թորգոմեանք, ինչպէս անդրադարձանք: Դժբախտաբար նման անտեղեակ կամ դիտումնաւոր հրատարակութիւններ խաւարի մէջ կը ձգեն Հայաստանի եւ հայ ժողովուրդի կարեւոր դերը եւ ներկայութիւնը համաշխարհային պատմութեան մէջ:

158. The Holy Bible, The New King James Version, Ezekiel 38:6.

159. The Holy Bible, New Revised Standard Version, James Version, Ezekiel 38:6.

160. Carl G. Howie, The Layman's Bible Commentary, Ezekiel, Georgia, USA, 1982, p.76.

Յ. ՌԻՍԿՈՒՆ ԿԱՄ ԻՐԵՆ ՅԱՋՈՐԴՈՂ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՄԱՍՆԱԿՅԱՊԵ Է ՅՈՒԴԱՅԻ ԱՆԿՄԱՆ

Բաբելոնի նշանաւոր մեծ արքան Նաբուգոթոնոսոր Բ.՝ 587 Ք.Ա. արշաւեց Յուդայի վրայ, ճնշելու անոր ապստամբութիւնը: Ան պաշարեց Երուսաղէմը մօտ 18 ամիսներ. ապա յաղթական գրաւեց զայն: Որպէսզի վերջ տայ Յուդայի թագաւորութեան մշտական ապստամբութիւններուն, Նաբուգոթոնոսոր Բ. մահով պատմեց բոլոր ղեկավարներուն, եւ տասնեակ հազարաւոր հրեայներ գերի տարաւ Բաբելոնի երկիր: Այս գերեզմարութեան մասին յիշուած է Աստուածաշունչին մէջ: Նաբուգոթոնոսոր Բ. վերջնականօրէն կործանեց Յուդայի թագաւորութիւնը: Այսպէս, Իսրայէլի թագաւորութեան անկումէն յետոյ (721 Ք.Ա.) Յուդայի թագաւորութիւնը գոյատեւեց մօտ 135 տարի, որուն կէսէն աւելին ան Ասորեստանին հպատակ էր:

Պատմական ուսումնասիրութիւններու մէջ հրեայ գերիներու արտոյի ճանապարհը ցոյց տուող քարտէսներու մէջ կը նշուի, որ անոնք տարուած են Հալէպ, եւ հոնկէ Եփրատ գետի գուգահեռ ճանապարհով՝ տարուած են Բաբելոնի մօտիկ մասնաւոր նստավայրեր: Այս քարտէսներու մէջ կը յիշուի Ուրարտուն, որպէս Ասորեստանի տարածքի հիւսիսային սահմանակից երկիրը¹⁶¹: Յիշեալ հանգրուանին Վանի թագաւորութիւնը (Ուրարտու) կապեր իր գոյութեան վերջին տարիները: Մեր կարծիքով Ուրարտուն մասնակցութիւն չէ ունեցած Երուսաղէմի գրաւման մէջ. այս հարցի մասին պիտի անդրադառնանք քիչ ետք:

Մեզ հասած բարեկամական կապը Յուդայի թագաւորութիւնը կործանող Բաբելոնի թագաւոր՝ Նաբուգոթոնոսոր Բ-ի եւ հայոց Հրաշեայ թագաւորի միջեւ յառաջ կը բերէ այլ կարծիք մը, որուն նույնպէս կ'արժէ անդրադառնալ:

Մեր ունեցած միակ տեղեկութիւնը հայոց մասնակցութեան մասին Յուդայի անկման, կուգայ Մովսէս Խորենացիէն. ան այդ տեղեկութիւնները վերցուցած է, մեզ անչափ աղբիւրներէ: Ըստ Մովսէս Խորենացիի, Պարոյրին յաջորդեց իր որդին Հրաշեայ: Հրաշեայ այդպէս կոչուեցաւ որովհետեւ ունէր պայծառ երեսներ, եւ օծուած բոցագոյն աչքեր: Խորենացին յիշած է, Հրաշեայի մասին «Սա Հրաշեայ է կոչուում առաւելապէս պայծառ երես եւ բոցավառ աչքեր ունենալու համար: Ասում են, թէ սրա ժամանակն է ապրել բաբելացիների արքա Նաբուգոդոնոսորը, որ հրեաներին գերեց: Եւ ասում են, որ սա Նաբուգոդոնոսորից

խնդրեց գերուած եբրայեցիների գլխաւորներից մէկին Շամբաթ անունով եւ բերեց մեր երկրում բնակեցրեց մեծ պատուով»¹⁶²:

Խորենացիի հաղորդած տեղեկութեան մէջ, յիշուած չէ թէ Հրաշեայ մասնակցած է Նաբուգոթոնոսորի հետ Երուսաղէմի գրաւման ռազմական արշաւանքին: Ինչ որ յիշուած է, թէ ան Նաբուգոթոնոսոր Բ-էն խնդրած է, իրեն յանձնել Շամբաթին: Նաբուգոթոնոսոր չէ մերժած. եւ այդ կը բացատրուի, որ անոնք զինակիցներ, կամ դաշնակիցներ, կամ նուագադուներ՝ բարեկամներ էին:

Միւս կողմէ, այն յիշատակութիւնը, թէ Հրաշեայ թագաւորը Շամբաթին ու անոր հետեւորդներուն ընդունեց մեծ նուէրներով եւ անոնց բնակեցուց Հայաստանի մէջ. այդ հարցով, մեր կարծիքով, բաւական տուեալներ կան, որոնց լոյսին տակ կարելի է եզրակացնել, թէ Շամբաթը ծագումով կամ հայ էր, եւ կամ Երուսաղէմի Յեբուսացի հուրիներէն մէկն էր¹⁶³: Այս հարցի մասին յաւելեալ տեղեկութիւններ կարելի է գտնել, մեր մէկ այլ աշխատութեան մէջ¹⁶⁴:

Անցնելով մեր հիմնական հարցին, թէ արդեօք Ուրարտուն մասնակցած է Յուդայի վերջնական անկմանը. հարկաւոր է լուսաբանել քանի մը մանրամասնութիւններ:

Ուրարտուի անկման վերջին տարիները կը մնան մինչեւ օրս անորոշ. յնուելով այն իրողութեան վրայ, որ Ռուսա Գ. Ուրարտուի վերջին թագաւորը, ինքզինքը կը կոչէր որդի Էրիմինայի. ինչ որ կ'առաջացնէ այն կարծիքը, թէ Ուրարտուի վերջին երկու թագաւորները Էրիմինա եւ Ռուսա Գ. չեն պատկանիր Ուրարտուի թագաւորական ընտանիքին. անոնք մէկ այլ տոհմէ, կամ ցեղէ սերուած ըլլալու են¹⁶⁵: Կարելի է ենթադրել, թէ Արմէ-Շուպրիայի հայկական թագաւորութիւնը արդէն գրաւած էր Ուրարտուն, ու գահին բարձրացուցած Ուրարտուի վերջին թագաւորները. կամ, կարելի է ըսել, որ Արմէ-Շուպրիան եւ Ուրարտուն միացած էին մէկ պետութեան մէջ:

Եթէ կարելի ըլլար պատմականօրէն հաստատել թէ Պարոյր Սկայորդին նոյն ինքն Ուրարտուի Էրիմինա թագաւորն է. եւ թէ Հրաշեան Ուրարտուի Ռուսա Գ.-ն է, ինչպէս Ռաֆայել Իշխանեան յիշած է. մէջբերենք հետեւեալը, «Ինչպէս զիտենք, հնում թագաւորները եր-

¹⁶² Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, ԻԲ, Երևան, 1968, էջ 108:

¹⁶³ Ներսէս Վիրապեան, Մոռցում Յեղ Մը, Լոս Անջելէս, էջ 117, 118:

¹⁶⁴ Պետրոս Թովմասեան, Հայկական լեռնաշխարհը եւ Միջագետքը, Երևան, 2006, էջ 107, 113:

¹⁶⁵ Եղիա Քասունի, Նախահայկական Հայաստան, էջ 560: Եւ Գառնիկ Գիւզաղեան, Հայոց Պատմութիւն, Ա. հատոր, էջ 85:

¹⁶¹ The Holman Illustrated Study Bible, Tennessee 2006, p.1141.

կու եւ աւելի անուններ էին ունենում: Երբ թագաժառանգը գահ էր բարձրանում, նրան նոր անուն էին տալիս: Կամ նոյն թագաւորին մի լեզուով մի անուն էին տալիս, մի ուրիշ լեզուով մի այլ անուն: Այդպէս, Պարոյրը ժամանակի նորոգութիւններէն փոքրիկ արձանագրութիւնների մէջ կոչուում է Էրիմենա, իսկ նրա որդին կրում էր Վանի մախկին թագաւորների մէջ ընդունուած Ռուշա Գ. անունը: Խորենացին նրան Հրաշնայ է անուանում»¹⁶⁶: Ապա կարելի է եզրակացնել, որ Ուրարտուն ռազմականօրէն թերեւս մասնակցած է Բաբելոնի հետ Երուսաղէմը գրաւելու մէջ, կամ որպէս առանձին պետութիւն իր անկման վերջին տարիներուն. եւ կամ որպէս Արմէ-Շուպրիայի հետ միացած պետութիւն: Բայց պէտք է նշել, որ այս ենթադրութիւնները հաստատուած եւ ընդունուած չեն:

Մեր վերջնական եզրակացութիւնը այս բոլորէն այն է, թէ հաւանականութիւնները շատ փոքր են, որ Ուրարտուն կամ Երուսաղէմ թագաւորութիւնը մասնակցութիւն ունեցած են Յուդայի թագաւորութեան անկման եւ անոր մայրաքաղաքը հանդիսացող Երուսաղէմի գրաւման Բաբելոնի Նաբուգոթոնոսոր Բ-ի կողմէ 586 Ք.Ա.:

¹⁶⁶ Ռաֆայէլ Իշխանեան, Պատմութիւն Ղաթնայի, Գիրք Առաջին, Երեւան, 1989, էջ 91:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ուրարտու-Ասորեստանեան պայքարը ընդհանրապէս դրականօրէն ազդած է Հրեաստանի՝ Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններու պատմութեան վրայ. ինչ որ օգնեց անոնց գոյատեւելու երկու դարերէ աւելին, հակառակ այն իրողութեան, որ անոնք կը գտնուէին Միջին Արեւելքի գերպետութիւններու համար գերազանցապէս մեծ կարեւորութիւն ունեցող տարածքի մը մէջ:

Ասորեստանը 825-745 Ք.Ա. պատմաշրջանին տկարացաւ ոչ թէ որովհետեւ Սալմանասար Գ-ի յաջորդները տկար կամ թէ զբաղուած էին ներքին հարցերով, այլ որովհետեւ Հայկական Լեռնաշխարհի մէջ ծնունդ առած Ուրարտուն՝ իր հզօրութեամբ գերազանցեց Ասորեստանին, ու շուրջ մէջ ձգեց անոր յիշեալ պատմաշրջանը: Այդ կարեւոր պատմական իրադարձութիւնները տարածքաշրջանին մէջ, հիմնական պատճառ հանդիսացան, որ հրեական փոքրիկ Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւնները վայելէն խաղաղութեան եւ բարգաւաճման շրջան մը:

Յիշեալ Ասորեստանի տկար պատմաշրջանին հրեայ ժողովուրդը կերտեց իր Երկրորդ Ոսկեդարը, որ կը սահմանափակուի 785-750 տարիներով. ինչ որ համապատասխան է Ուրարտուի երկու հզօր տիրակալներու Արգիշտի Ա-ի եւ Սարգուրի Բ-ի գահակալման տարիներուն, երբ ի հետեւանք Ուրարտուի հզօրացման՝ Ասորեստանը կղզիացած էր, եւ հեռացուած Արեւմուտքէն:

Իսրայէլի եւ Յուդայի փոքրիկ թագաւորութիւնները փրկուելու համար Միջագետքի մէջ կեդրոնացած հզօր բռնակալութիւններէն՝ Ասորեստանէն եւ Բաբելոնէն, օգնութիւն կը խնդրէին Հայկական Լեռնաշխարհի ժողովուրդներէն. այդ կը վկայէն Աստուածաշունչի մէջ յիշուած Երեմիայ եւ Եզեկիէլ մարգարէներու յիշատակութիւնները:

Ուրարտուի բացակայութիւնը Արեւմուտքէն Ասորեստանի հզօրացման հետեւանքով Թագաւոր Փաղասար Գ-ի օրով չարաբաստիկ ահագանգ մը եղաւ Իսրայէլին եւ Յուդային. ու շատ չ'անցած, 721 Ք.Ա. կործանուեցաւ Իսրայէլի թագաւորութիւնը Ասորեստանի ձեռքով: Ու երբ Ուրարտուն հեռացած էր Արեւմուտքէն եւ մուտք գործած էր իր անկման շրջանը՝ Յուդայի թագաւորութիւնը կործանուեցաւ Բաբելոնի ձեռքով 586 Ք.Ա.:

Այս գիրքի շօշափած նիւթերը լուսարձակի տակ առին հայ ժողովուրդի մասին յիշատակութիւնները Հին Կտակարանի պատմական դէպքերու մէջ, Աստուածաշնչեան երեք մարգարէներու Եսայի, Երեմիայ եւ Եզեկիէլի յիշատակութիւնները. ուր Եսայի Սինհարիբի սպանութեան առիթով Հայաստանը կոչեց Արարատի Երկիր. Երեմիայ իր մարտա-

ՑՈՒՑԱԿ ԹԻՒ 1

ՈՒՐԱՐՏՈՒԻ ԵՒ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱԳԱԻՈՐՆԵՐԸ

ԺԱՄԱՆԱԿ Ք. Ա.	ԱՍՈՐԵՍՏԱՆ	ՈՒՐԱՐՏՈՒ
900	Ատատ Նիրարի Բ. 912–891	
	Թուկուլթի Նինուրտա Բ. 891–884	
	Աշուր Նասրլուալ Բ. 884–859	
	Շալմանասար Գ. 859–824	Արամե մօտ 870–840
		Լուտիպրի (?)
		Սարգուրի Ա. 835–825
	Շամշիատատ Ե. 824–811	Իշպուինի 825–810
	Շամմուրմաթ 811–808	Մենուա 810–786
800	Ատատ Նիրարի Գ. 811–783	
	Շալմանասար Դ. 783–773	Արգիշտի Ա. 786–764
	Աշուր Տան Գ. 773–755	Սարգուրի Բ. 764–735
	Աշուր Նիրարի Ե. 755–745	
	Թիգլաթպալասար Գ. 745–727	
	Շալմանասար Ե. 727–722	Ռուսա Ա. 735–713
	Սարգոն Բ. 722–705	
	Սինհարիբ 705–681	Արգիշտի Բ. 713–685
700	Ասորհատոն 681–669	Ռուսա Բ. 685–645
	Աշուր Պանիպալ 669–631 կամ 627	
	Աշուր Էտլ Իլանի 631–627	Սարգուրի Գ. 645–625
	Սին Շար Իշգին 627–612	
	Աշուր Օբալտ Բ. 612–608 կամ 605	Էրիմնա (?)
600		Ռուսա Գ. (?)

ԱՐԳԻՇՏԻ ԱՒ ՅԱՂԹԱՐՇԱԽՆԵՐԸ



Հեղինակ՝ Արտակ Մովսիսեան
Քարտէսագիր՝ Տիգրան Վարդանեան

ՅՈՒՑԱԿ ԹԻՒ 2

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ, ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԹԱԳԱԻՈՐՆԵՐՈՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

ԱՍՈՐԵՍՏԱՆ	ԻՍՐԱՅԷԼ	ՅՈՒԴԱՅ
Ատատ Նիրարի Բ. 921-891	Նաղար 901-900 կամ 910-909	Ասա 913-873 կամ 911-870
Թուկուլթի Նինուրա Բ. 891-884	Բասա 900-877 կամ 909-886	Եհոսաբաթ 973-849 կամ 870-848
Աշուր Նասրդալ Բ. 884-859	Էլա 877-876 կամ 886-885	Եհրամ 849-842 կամ 848-841
Շալմանսար Գ. 859-824	Զիմրի 876-876 կամ 885-885	Ահազիա 842-842 կամ 841-835
Շամիատատ Ե. 824-811	Թիրի 876-876 կամ 885-880	Աթհազիա 824-837 կամ 841-835
Շամուրամաթ 811-808	Ամրի 876-869 կամ 880-874	Յովսա Ա. 837-800 կամ 835-796
Ատատ Նիրարի Գ. 811-783	Աբար 869-850 կամ 874-853	Ամասիա 800-783 կամ 796-767
Շալմանսար Դ. 783-773	Ահազիա 850-849 կամ 853-852	Ահարիա 783-742 կամ 767-740
Աշուր Տան Գ. 773-755	Հորամ 849-842 կամ 852-841	Յովթամ 742-735 կամ 740-732
Աշուր Նիրարի Ե. 755-745	Յովա 842-815 կամ 841-814	Աբադ 735-715 կամ 732-716
Թադլաթպասար Գ. 745-727	Յովաբազ Ա. 815-801 կամ 814-798	Եգիկա 715-687 կամ 716-687
Շալմանսար Ե. 727-722	Յովաս 801-786 կամ 798-782	Մանասե 687-642 կամ 687-643
Սարգոն Բ. 722-705	Յերոբոամ Բ. 786-746 կամ 782-753	Ամոն 642-640 կամ 643-641
Սինհարիբ 705-681	Զաբարիա 746-745 կամ 753-752	Հոսիա 640-609 կամ 641-609
Ասորհատոն 681-669	Սեղլոմ 745-745 կամ 752-752	Յովսա Բ. 609
Աշուր Պանիպալ 669-631 կամ 627	Մանայեմ 745-738 կամ 752-742	Յովաբեթ 609-598
Աշուր Էտլ Իլանի 631-627	Փակէիա 738-737 կամ 742-740	Յովաբեթ 598-597
Սին Շոֆո Լիշըր 626	Փակէէ 737-732 կամ 740-732	Զէտէկեա 597-587 կամ 597-586
Սին Շար Իշգին 627-612	Ովսէէ 732-721 կամ 732-722	
Աշուր Օբալտ Բ. 612-608 կամ 605		

ՔԱՐՏԷՍ ԹԻՒ 3


ԻՍՐԱՅԷԼ ԵՒ ՅՈՒԴԱՅ



Հեղինակ՝ Պետրոս Թովմասեան
Քարտէսագիր՝ Տիգրան Վարդանեան


ԳԾԱՑՈՒՑԱԿ ԹԻՒ 1

ՈՒՐԱՐՏՈՒԻ, ԱՍՈՐԵՍՏԱՆԻ, ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ
ՏԵԻՈԴՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐԸ



Կարմիր գոյնով նշուած է Արարատ-Ուրարտուի (Վանի թագաւորութիւն) պատմաշրջանը: Նշմարելի է, որ հրեական Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութիւններու պատմաշրջանները կ'սկսին 922 Ք. Ա. երբ Սողոմոն Իմաստունի մահէն ետք հրեական միասնական թագաւորութիւնը բաժանուեցաւ երկու մասի:

ՈՒՐԱՐՏՈՒՒ, ԱՍՈՐԵՍՏԱՆԻ, ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՎԵՐԵԼՔՆԵՐՆ ՈՒ ՎԱՅՐԷՋՔՆԵՐԸ



Գծացուցակ թիւ 2-ի մէջ կարելի է տեսնել մեզ հետաքրքրող չորս պետութիւններու հզօրութեան վերելքի եւ վայրէջքի ենթադրական դիօմը, որոնք հիմնուած են յիշեալ թաղաւորութեան ռազմական, քաղաքական տնտեսական ինչպէս եւ սահմաններու ընդարձակման տուեալներու հզօրութեան վրայ: Ուր կարելի է նշմարել թէ Իսրայէլի եւ Յուդայի պատմութեան զարգացման ընթացքը կը հետեւի Ուրարտուի եւ Ասորեստանի վերելքներու ու վայրէջքներու ընթացքին:

ՔԱՐՏԷՍ ԹԻՒ 4

ՎԱՆԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԴՈՒՐԻ ԻԻ ՕՐՈՔ



Հեղինակ՝ Արտակ Մովսիսյան
Քարտէսագիր՝ Տիգրան Վարդանյան

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅԵՐԷՆ

1. Աստուածաշունչ, Գիրք Հին եւ նոր Կտակարաններու, Աստուածաշունչի Միացեալ Ընկերութիւններ, Պէյրութ, 1981:
2. Աստուածաշունչի Հանրագիտարան, Հայաստանի Աստուածաշունչային Ընկերութիւն, 1999:
3. Արտակ Մովսիսեան, Հայոց Պատմութեան Աշխարհակալութիւնները, Երեւանի Պետակ. Համալսարան, 2008:
4. Արտակ Մովսիսեան, Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջաւոր Ասիայի հնագոյն հոգեւոր ընկալումներում, Երեւան, 2006:
5. Գառնիկ Գիւզալեան, Հայոց Պատմութիւն, Ա. հատոր:
6. Գուրգեն Լիպարիտ Կարապետեան, Հայոց Պատմութեան Ուրուագծեր, 1. Հատոր, Ա. Գիրք, Երեւան, 2002:
7. Գուրգեն Լիպարիտ Կարապետեան, Հայոց Պատմութեան Ուրվագծեր, 1 Հատոր, Բ. Գիրք, Վան, Երեւան, 2007:
8. Եղիա Քասուհի, Նախահայկական Հայաստան, Պէյրութ, 1950:
9. Լեւոն Շահինեան, Ուրարտու Առեղծուածը, Լոյս պետական հրատարակչութիւն, Երեւան, 1994:
10. Կարեն Մուսայէլեան, 12 ճանապարհորդութիւններ Դարերի Խորքը, Երեւան, Արեւիկ 1990:
11. Հայ ժողովուրդի Պատմութիւն, Ա. հատոր, Երեւան, 1971:
12. Հայ ժողովուրդի Պատմութեան Քրեստոմատիա, հատոր 1, Երեւան, 1981:
13. Հր. Ռ. Սիմոնեան, Հայոց Պատմութիւն Հիմնահարցեր, Երեւանի Պետական Համալսարանի Հայոց Պատմութեան Ամբիոն, Զանգակ, Երեւան, 2000:
14. Հ.Գ.Մէլքոնեան, Հայ-Ասորական Յարաբերութիւնների Պատմութիւնից, Հայկական ԽՍՀ ԳԱ Հրատարակչութիւն Երեւան
15. Հ. Սանտալեան, Ասորեստանեաց եւ պարսիկ սեպագիր արձանագրութիւնք կամ քաղուածք նոցին, որոնք Նաիրի-Ուրարտու աշխարհին պատմութեան կը վերաբերին, Վիեննա, 1901:
16. Հ. Վահան վարդապետ Ինգլիզեան, Հայաստան Սուրբ Գրքի մէջ, Վիեննա, 1947:
17. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Հայաստան հրատարակչութիւն, Երեւան, 1968:
18. Մարտիրոս Ս. Գալուքեան, Հայ ժողովրդի Ծագումը, Մոնթրէալ, 1982:

19. Մեր Յաղթանակները, Հատոր Ա., Նորավանք, Երեւան 2008, (Հնդկական Սուրեն Մարտիկեան եւ Արտակ Մովսիսեան):
20. Յարութիւն Մարտիրոսեան, Քարե Դարից Ուրարտու, Հայաստան հրատարակչութիւն, Երեւան, 1971:
21. Յովհաննէս Կարազոյեան, Աստուածաշնչական Հայաստան:
22. Ներսէս Վիրապեան, Հայ ժողովուրդի Մագումը, Լոս Անջելէս 1993:
23. Ներսէս Վիրապեան, Մոռցուած Ցեղ Մը, Լոս Անջելէս:
24. Նիկողայոս Ադոնց, Հայաստանի Պատմութիւն, Հայաստան հրատարակչութիւն, Երեւան, 1972:
25. Ուրարտու-Հայաստան, Բաբելոն Առաքելեան, Գեորգ Զահուկեան, Գագիկ Սարգսեան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան, 1988:
26. Պ.Պ. Բիրթովսկի, Ուրարտու Անդրկովկասի Ամենահին Պետութիւնը, Լեւոն Խտրեան Հայագիտական Մատենաշար -1 Փարիզ:
27. Պետրոս Թովմասեան, Հայկական լեռնաշխարհը եւ Միջագետքը, Երեւան, Զանգակ, 2006:
28. Ռաֆայէլ Իշխանեան, Պատկերազարդ Պատմութիւն Հայոց, Ա. Գիրք, Արեւիկ, Երեւան, 1989:
29. Ռաֆայէլ Իշխանեան, Հայերի Մագումը եւ Հնագոյն Պատմութիւնը, Պէյրութ, 1984:
30. Վալերի Խաչատրեան, Հայոց Հին Պատմութեան Հարցերի Շուրջ, Վան Արլան, Երեւան, 2008:

ԱՆՔԼԵՐԵՆ

1. A.E.Redgate, **The Armenians**, Blackwell Publishers Inc. USA.
2. A.K.Grayson, **Assyrian and Babylonian Chronicles**, J.J.Augustin Publisher, New York 1975. Volume V.
3. Boris B. Piotrovsky, **The Ancient Civilization of URARTU**, 1969 Geneva.
4. Chaim Herzog & Mordechai Gichon, **Battles of the Bible**, Barnes & Noble, New York 2006.
5. Carl G. Howie, **The Layman's Bible Commentary**, Ezekiel, Volume 13, John Knox Press, Georgia USA 1982.
6. D.J.Wiseman, **Illustrations From Biblical Archaeology**, The Tyndale Press, Michigan 1958.
7. D. J. Wiseman, **Nebuchadrezzar and Babylon**, Oxford University Press, 2004.
8. Daniel David Luckenbill, **Ancient Records of Assyria and Babylonia**, Volume I Historical Records of Assyria from the earliest times to Sargon, University of Chicago.

9. David Barret, Christopher D.Hudson, Todd Bolen, **Bible Atlas & Companion**, Barbour Publishing 2008.
10. Emil G.Kraeling, **Bible Atlas**, Second Edition, USA.
11. Etienne Charpentier, **How to Read the Bible**, Gramercy publishing Company-Translated John Bowden, New York 1991.
12. G. Ernest Wright, **The Layman's Bible Commentary**, Isaiah, Volume 11, John Knox Press, Atlanta USA 1982.
13. Gwendolyn Leick, **Mesopotamia The Invention of the City**, Penguin Books 2002.
14. Harper Collins. **Atlas of the Bible**, Michigan 1999.
15. H. R. Hall, M. A., D. Litt., F. S. A., **The Ancient History of the near East**, sixth Edition, London, 1924.
16. Hayim Tadmor, **The Inscriptions of Tiglath-Pileser III King of Assyria**, The Israel Academy of Science and Humanities, Jerusalem 1994.
17. **Holman Illustrated Bible Dictionary**, Holman Bible Publishers Tennessee 2003.
18. Howard Tillman Kuist, **The Layman's Bible Commentary**, Jeremiah, Volume 12, John Knox Press, USA 1982.
19. Jack Finegan, **Archaeological History of The Ancient Middle East**, Barnes & Noble Inc., New York 1996.
20. John Ahmaranian, **The Hurro-Armenian Origins of Abraham**, Pasadena, California, 2004.
21. John M. Douglas, **The Arminians**, 1992 new York .
22. John Keegan, **A History of Warfare**, New York 1993.
23. J. Maxwell Miller and John H.Hayes, **A History of Ancient Israel and Judah**, The Westminster Press, Philadelphia 1986.
24. Katheleen Kenyon, **Royal Cities of the Old testament**, New York 1971.
25. Karen Rhea Nemet-Nejat, **Daily Life in Ancient Mesopotamia**, Greenwood press-London, 1998.
26. Max L. Margolis and Alexander Marx, **History of the Jewish People**. Philadelephia 1956.
27. Michael Roaf, **Cultural Atlas of Mesopotamia and the Ancient Near East**, 1990.
28. M. Chahin, **The Kingdom of Armenia**, Curzon press, UK, 2-nd edition 2001.
29. P. E. Zimansky, **Ecology and Empire: The Structure of the Urartian State**, Chicago, 1985

30. R. G. Kent, *Old Persian. Grammar, Texts, Lexicon, Parts I-III*, New Haven, 1953.
31. Readers Digest, *Great People of the Bible and How they lived*, Readers Digest Association Inc.
32. *The Holy Bible*, The New King James Version, Thomas Nelson Publishers, New York, 1983.
33. *The Holy Bible*, New Revised Standard Version, Thomas Nelson Publishers, Nashville, 1989.
34. *The Holy Bible*, The Gideons International, National Publishing Company, 1985.
35. *The Holman Illustrated Study Bible*, Tennessee 2006.
36. *The Oxford Companion to the Bible*, Oxford University Press 1993 Edited by Bruce M. Metzger and Michael D. Coogan.
37. *The Timechart of Biblical History*, TMP, Third Millennium Trust, 2002.
38. Werner Keller, *The Bible As History*, New York, Barnes & Noble, 1995.

ԱՐԱՅԵՐԷՆ

1. Անտոն Մօրտկադ, Թարիխ էլ-Շարկ էլ-Ատնա էլ-Կատիմ (Պատմություն Հին Միջին Արևելքի):
2. Հարի Սագգ, Ատամաթ Բաբլ (Բաբելոնի Հզորությունը), Լոնտոն 1962. Թարգմ. Ամըր Սուլեյման Իբրահիմ, Պաղտատ 1979:
3. Պսամ Ալ Ասալի, էլ Հարթ ու էլ Հադարա, Պատերազմ եւ Քաղաքակրթություն:
4. Տահա Պակըր, Մուկատամա Ֆի Թարիխ էլ-Հատարաթ էլ-Կատիմա (Մուտք Հին Քաղաքակրթությանց Պատմության):
5. Սամի Սաիիտ էլ-Ահմադ եւ Ճըմալ Ռաշիդ Ահմադ, Թարիխ էլ-Շարկ էլ-Կատիմ (Հին Արևելքի Պատմություն), Պաղտատի Համալսարան, Պաղտատ, 1988:
6. Արնօլտ Թուհնյի, Մարդկության Պատմությունը Ա. Մաս, Թարիխ էլ Բաշարիա, Թարգմ. Նիկոլա Զիեհյա, Պէյրուք, 1981:

ՌՈՒՍԵՐԷՆ

1. Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту, "Вестник древней истории", М., 1951, N 2-4.
2. Дандамаев М. А., Клинописные данные об армянах, "Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей", Е., 1990

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՅԱՆԿ

- Ակկարոն 77
 Անադոլիա-Անաթոլեա 47, 49
 Արաբկիր 30
 Արարատ 2, 6, 8, 9-12, 22, 24-25, 27, 42, 47, 58, 75, 81-86, 95-101, 106
 Արաքս գետ 36
 Արգիշտիխիլի 20
 Արդինի 68
 Արման 85
 Արմինիայ 65
 Արպադ 44, 46, 47, 51-53, 64
 Արցախ 47
 Ասորիք 30, 40, 46, 51, 53, 59-60, 70,
 Ասիայ 14, 25, 30, 37, 56, 64, 88
 Աքքադ 97
 Բաբելոն 10-11, 14-16, 21, 26-27, 29, 44, 47, 50, 62, 65-66, 70-71, 73, 75, 77-83, 88-93, 95-104, 108, 110, 112, 116
 Բալու 30
 Բեհիստոն 93
 Բէյթ Թորգոման 107
 Բիայնիլի 8, 10
 Բինգոլ 30
 Գուրգամ 51
 Գովգան գետ 72
 Գադադ 63
 Դալիլիա 63
 Դամասկոս 3, 23, 26-28, 38, 40-42, 46-47, 58-60, 70, 72, 93, 104
 Եգիպտոս 37, 41, 47, 53, 58, 63, 67, 69, 71-73, 79, 89-92, 96, 100, 112
 Եդեմ 75
 Երեւան 5, 20, 25
 Երուսաղէմ 17, 18, 19, 20, 72, 77, 79, 81, 83, 92, 96, 103, 104, 105, 106, 108, 109, 110
 Եփրատ 13, 22, 26, 46, 49, 51, 56, 89, 108,
 Զագրոջեան լեռներ 25
 Զապշա 47

Զիրար 31
 Զիմրի 32
 Զինգու 12
 Էկրատան 88
 Էրեբունի 20
 Էրզրում 33
 Թապալ 74
 Թարսիս 103
 Թել Արֆադ 44
 Թոբել 105
 Թուրքիայ 20
 Թորգոմայ տուն 99, 103, 104, 105, 106, 107
 Թոփուզավայի 68
 Իգալայ 89, 90
 Իլար 60
 Իլամ 70, 92
 Իրան 25, 42, 70
 Իրաք 19, 31, 34, 50, 84
 Իյոն 63,
 Լիրանան 17, 38,
 Իսրայել 2-4, 6-7, 16-18, 20, 23, 25-26, 28-29, 31-33,
 36-43, 45-48, 50-54, 57-60, 62-63, 64, 67,
 70-74, 100, 105-106, 108, 111
 Լիրանան 17, 38
 Լուխա 12
 Խալիլա 12
 Խառան 20, 89
 Խիմմե 12
 Խուբուշկիայ 31
 Կադէս 68
 Կարդու 87
 Կասպից ծով 47
 Կարբէմիշ 65,
 Կիմիրներ 15, 107,
 Կորդուաց աշխարհ 86
 Կուլխա 47
 Կումմուխ 4, 50-56
 Կումմագեն 51
 Կուր գետ 47
 Կովկաս 42, 56, 114

Հաթթի 26, 93
 Հալէպ 25, 44-46, 51, 93, 108
 Համատան 25
 Համար 37-38, 47,
 Հայաստան 4, 7, 10, 20, 22, 65-66, 75-76, 81-82, 84-85,
 96-97, 100, 102, 104-107, 109, 113-114
 Հայաստանի Հանրապետություն 20
 Հայք 106
 Հնդկաստան 25
 Հրեաստան 6-7, 14, 19, 31, 36-38, 46, 53, 64, 75, 78, 80, 82,
 89, 96, 98, 103, 111-112
 Հելոսպոնտ 33
 Ժորոխ գետ 47
 Մագոգի երկիր 105
 Մալաթիայ 30
 Մալազկերտ 33
 Մակեդոնի 63
 Մաննա 32-33, 44, 47, 96
 Մանայի 44
 Մաշգուն 12
 Մասիս 10
 Մելիտինե 30, 51
 Մելիտեա 47
 Մերձաւոր Արեւելք 16, 62, 112
 Մինիի 95-97
 Միտեայ 57, 58
 Միտանի 98
 Միջագետք 6-7, 20-21, 50, 62, 84, 97, 102, 111, 114
 Միջին Արեւելք 3, 7, 21, 25, 38, 62, 111, 116
 Միջերկրական ծով 30-33, 43, 46, 51, 57, 64, 69, 90
 Մծբին 82
 Մուշանի 47
 Մուսասիր-Մուծաձիր 68-69, 74,
 Յանովէ 63
 Յասոր 63
 Յունաստան 66
 Յորդանան 17
 Յուդայ 2-4, 6-7, 16-18, 20, 23-26, 29, 31-33, 36-40, 43,
 45-48, 50-53, 55, 57-60, 62-64, 67, 70, 72, 77,

79-80, 82, 89, 91-92, 95-96, 100, 103, 105-106,
108, 110-112

Նախարին 26

Նամրի 32, 50

Նայիրի 9, 11-13

Նայիրիի ծով 11

Նեպիպին 82-83

Նեփթաղիմ 63

Նիլիպախի 12

Նինուէ 3-4, 21, 33-36, 40, 47, 66-67, 80-81, 84, 86, 88-89,
93-94, 100-101, 112,

Որոնդէս գետ 38

Ուր 19

Ուրուր 19

Ուրու Սալիմ 19

Ուրտեխի 47

Ուատկուն 12

Ուրաշտու 101

Ուրատրի 12

Ուրուատրի 12-13

Ուրմէ 44

Ուրմիոյ լիճ 11-12, 32-33, 42, 44, 96,

Ուրֆա 20

Չինաստան 25

Պաղեստին 6-7, 14, 19, 26, 28-29, 32-33, 46-47, 53, 57-58,
64, 70, 73, 79, 89, 104, 112

Պալաշտու 29

Պարսուայ 25, 32,

Պարսից ծոց 44

Պէլթ Ագուսի 44

Ռաուանտուզ 31, 33

Ռիզի 57

Ռուիշիանի 46, 47

Ռոմէսոք 105

Սասուն 82, 84, 86, 92, 111

Սալուա 12

Սամարիայ 4, 16, 17, 67-69, 72-73

Սեւանայ լիճ 11

Սեւ ծով 33, 47, 56, 66, 107

Սիդոն 58

Սիկիմ 17

Սինոպ 33

Սիմ 83

Սիս 10

Սուլեմանիայ նահանգը 50

Սիօն 95

Սուբուր 85

Սուրբ Երկիր 30

Սուրիայ 17, 24, 37-38, 40-41, 43, 53, 56-57, 64, 91

Վանի Թագաւորութիւն 2, 4, 6, 8, 10-11, 13, 15, 21, 23-24, 26,
28, 30, 32, 36, 41-42, 44, 46-56, 58,
62, 64, 69, 74, 77, 82, 85, 98, 100,
104, 108,

Վան 8, 11, 27, 42, 86, 99, 110, 113

Վանայ լիճ 11, 33, 41

Վերին Զաք 32

Տաւրոսեան լեռներ 18, 56,

Տուշպայ 11, 19, 40, 55-56

Տիգրիս 35, 88, 90, 92

Տիւրոս (Տորոս) 58, 113, 121

Տրապիզոնտ 33

Փինիկիայ 26,

Փոքր Ասիա 14, 25, 30, 42, 47, 56, 64, 88

Փոքր Զաք 22

Քաղայ 72

Քաբովրի 72

Աղբամեղեր 80, 83-84
 Ազարիա 37-38, 79
 Ահազ 60
 Ամասիա 37
 Ամրի 16
 Ամմոքացիներ 97
 Անանիա դիցուհի 83
 Ասուր աստուածը 12, 29, 68, 86
 Աշուր Նաբքալ Բ. 35
 Աշուր Նիրարի Դ. 45
 Աշուր Նիրարի Ե. 43-45, 49, 64
 Աշուր Պանիալ 88,
 Աշուր Տան Գ. 45, 49
 Աշուր Տալանալ 27
 Աշուր Սբալտ Բ. 89-90
 Աշքենազ 96
 Ասորիստոն 80-81, 83-86
 Ասրանազի թագաւորութիւն 95-96, 99
 Ատատ աստուած 29
 Ատատ Նիրարի Գ. 27-29, 49-50
 Արամեացիներ 59, 63
 Արամէ 23, 25, 70
 Արաքա Խալտիդա 93
 Արնօլտ Թուինալի 19, 31, 56, 116
 Արգիշտի Ա. 13, 28-30, 32, 36
 Արգիշտի Բ. 77-78
 Արտակ Մովսիսեան 5, 113
 Արազ 58-60, 67, 79
 Արաք 23
 Արեմէնեան 66
 Բաբելոնցիներ 23, 27, 66, 71, 77, 83, 88-90, 98, 101
 Բաղդասար 83-84
 Բենեամին 18
 Բըն Հատատ Գ. 28
 Գոգ 104-105
 Գոմեր 96, 105-107
 Գուրգեն Կարապետեան 30, 40, 69
 Դ. ճ. Ուալգմըն 89, 91-92
 Դարեն Ա. 93

Դաւիթ թագաւոր 37
 Դաւան Աշուր 26
 Եբրայացիք 19
 Եզեկիէլ մարգարէ 103, 111
 Եթովպիացիներ 105
 Եղիա Քասունի 32, 34, 113
 Եսայի մարգարէ 79-80, 100
 Եհովա 105
 Եսայի մարգարէ 79-80, 100
 Երեմիայ մարգարէ 4, 95-103
 Զէտէկեա 103
 Զիմրի 32
 Էլայ 63, 67, 72
 Էրիմենա 109-110
 Էմիլ Քրէլինգէն 24
 Թիզլաթպալասար Գ. (Թիզլաթպալասար) 13, 28, 52, 55-56, 59-60
 Թիրաս 96, 106
 Թորգոմ նահապետ 106
 Թոբէլ 96, 103, 105-106
 Իշդար դիցուհի 29
 Իշպուինի 11
 Լեւոն Շահինեան 99, 106, 113
 Լէօ 77
 Ժագ Ֆինիգըն 11
 Խալդի աստուածը 12
 Խալդեան Թագաւորութիւն 10-11, 19
 Խուրիներ (Հուրիներ) 6, 18-19, 109
 Կիաքսար 88
 Հաբեթ 106
 Հաթեր 25-26, 44, 74, 93, 97
 Հազաալ 24-25, 27
 Համմուրապի 97
 Հայիմ Թատմուր 52
 Հարի Սագգ 25, 78, 83, 116
 Հայր Աբրահամ 6, 20
 Հ. Գ. Մելքոնեան 86
 Հերոբոլամ Ա. 17
 Հեու 23
 Հրաչեայ 108-110
 Ղուկաս աւետարանիչ 35-36

Ճեմալ Ռաշիդ Ահմադ 20
 Ճեռար 19
 Մատթեոս աւետարանիչ 35-36
 Մագոգ 96, 105-106
 Մանայեմ 53, 57
 Մարդաբ Բաղդան 126
 Մարտոխ աստուած 91
 Մար Ավգինի 87
 Մեծն Տիգրան 30
 Մեծ Մհեր 84
 Մենուայ 13, 28
 Միքիա մարգարէ 72
 Միշէլ Ռաուֆ 12
 Մովսէս Խորենացի 83, 86, 88, 97, 99-100, 104, 108, 113
 Մօրշէլի Ա. 97
 Յաբեթ նահապետ 96, 106
 Յերոբովամ Բ. 36-37, 40-41
 Յեբուսացիներ 18-19
 Յիսուս Քրիստոս 16, 35
 Յովաթամ 63, 79
 Յովաս 28,
 Յովաթին 92, 105
 Յովնան մարգարէ 4, 34-36
 Յովհաննու 16
 Յովհաննէս Ահմարանեան 20
 Յովհաննէս Կարազլոզեան 46, 59, 114
 Նաբուգոթոնոսոր Բ. 91-93, 95, 100, 103, 108
 Նաբուգոթոնոսոր Դ. 93
 Նաբուշարդուսոր 84
 Նաբուպալասար 88-94, 100-101,
 Ներսէս Վիրապեան 19, 114
 Նիկողայոս Ադոնց 11, 51, 101, 114
 Նոյ նահապետ 10, 96, 106,
 Շամշիատատ Ե. 24, 27,
 Ոգիալ 63
 Ուրգանալ 68
 Ուրուատրիներ 12
 Ուրբնըր Քիլլըր 63
 Ովսէլ 63, 67, 71-72
 Ովսեայ մարգարէ 72
 Պարոյր 108-110

Պսամ Ալ Ասալի 66, 116
 Պեշիտտո 87
 Պօրիս Բիոթրովսքի 42, 73, 85, 98, 100
 Ռասին 58-59
 Ռաժուն 59-60
 Ռուսա Ա. 4, 46, 67, 69-71, 73
 Ռուսա Բ. 78, 85-86
 Ռուսա Գ. 104, 109
 Ռոբովամ 17
 Սամի Սաիտ էլ-Ահմադ 116
 Սալմանասար Ա. 12
 Սալմանասար Գ. 23, 25
 Սանասար 83-84
 Սասունցի Դաւիթ 84
 Սարասար 80, 81
 Սարգոն Բ. 4, 35, 68, 70-72, 74, 77
 Սարդուրի Ա. 25, 27
 Սարդուրի Բ. 13, 28, 43-46, 51-52, 55-56
 Սաւուղ 16
 Սենեքերիմ (Սինախէրիբ) 35, 77, 79-81, 83, 85, 100
 Սին աստուած 29
 Սինհարիբ 4, 35, 74-75, 77-82, 84-85, 92, 111

ԱՐԱՐԱՏ—ՈՒՐԱՐՏՈՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ԸՆԴՄԷՋԷՆ

(ՈՒՐԱՐՏՈՒ—ԱՍՈՐԵՍՏԱՆԵԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿԱՐԱՏԵԻ ՊԱՅԲԱՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ)



ՊԵՏՐՈՍ Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ

Հրատարակչու թեան տնօրէն՝
Գիտական խմբագրութիւնը՝
Գեղարվեստական խմբագիր՝
Համակարգչային ձեւաւորումը՝
Սրբագրութիւնը՝

Ցուցակներու Համակարգչային մշակումը՝
Քարտէսների Համակարգչային մշակումը՝
Շապիկի Համակարգչային մշակումը՝

Էմիլ Մկրտչեան
Արտակ Մովսիսեան
Արա Բաղդասարեան
Տաթևիկ Ալեքսանեան
Հրաչուհի Թովմասեան
Հրաչուհի Թովմասեան
Տիգրան Վարդանեան
Իրինա Գրիգորեանի
Արեւիկ Հակոբեանի

Տպագրութիւնը՝ օֆսէթ: Չափսը՝ 70x100 1/16:
Թուղթը՝ օֆսէթ: Ծաւալը՝ 8 տպ. մամուլ + 1 կաւճ. մամուլ:
Տպաքանակը՝ 1000 օրինակ:



ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28
Ֆաքս՝ (+37410) 23 25 95
Էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am,
www.book.am, www.dasagirq.am



Պետրոս Մ. Թովմասեան

Յեղասպանութենէ ետք առաջին սերունդէն՝ ծնած պատմական Հայաստանէն դուրս, Իրաքի Պարսպ քաղաք 1954թ. որպէս իրողութիւն Հայոց դեմ՝ գործադրուած 20-երորդ դարի առաջին մեծ ցեղասպանութեան:

Աւարտած է Պաղտատի Հայոց Ազգային Միացեալ Երկրորդական Վարժարանը 1971թ.:

Աւարտած է Պաղտատ Համալսարանի Երկրաչափական բաժանմունքը 1976-ին ստանալով քաղաքացիական ճարտարագիտութեան մեջ պատկառը գիտութեանց վկայական:

Հայոց Պատմութեան դասախօս և դասատու Իրաք, Յորդանան և ԱՄՆ:

Հեղինակն է Հայոց Պատմութեան «Անցեալին Այս Օր» յօդուածաշարքերուն, հրատարակուած Իրաք, Յորդանան և ԱՄՆ:

Հեղինակն է «Հայկական Լեռնաշխարհը և Միջագետքը» գիրքին, հրատարակուած Երեւան, Զանգակ 2006:

Հայրը՝ Մովսէս Թովմասեան (Ամիրխանեան), ծնած Վասպուրականի Թիմարի շրջանի Փիրղարիպ գիւղ մահացած Պաղտատ 1972:

Մօրը Հայրը ծնած Կարին (Էրզրում) և Յեղասպանութեան օրերուն զինուոր կամաւորական Չորրորդ խումբի՝ Քեռիի խումբի մէջ:



9 789939 168035 4



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ